

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵԹՅԱՆ

**ԹՈՒՐԶԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄՆ ՈՒ
ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԵՐԵՎԱՆ 2010

321337
h-87

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԹՈՒՐԹԻԱՅԻ

4266

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄՆ ՈՒ
ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ
2010

ՀՏԿ 94/99-355/359
ԳՄԻ-63.3 (5 թու)+68
Հ 872

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԻՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ,
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՈՐՈՇՄԱՄ:

Պատասխանատու խմբագիր՝
պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Ա. Սաֆրաստյան

ՀՈՎԱՆՓՅԱՆ ԼԵՎՈՆ

Հ 872 ԹՈՒՐԿԻԱՅԻ ՁԻՆՎԱՆ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻՄԱԿԱՆԱՅՈՒՄՆ ՈՒ
ԻՎԱԶՄԱՆՐԻՑՈՒՆԱԿԻՆԻՑՈՒԹՅՈՒՆԸ.- Եր.: Հեղինակային
հրատարակություն, 2010 թ.-208 էջ:

Աշխատության մեջ ներկայացվում են Թուրքիայի պաշտպանական քաղաքականության ու ռազմավարության հիմնական միտումները, զինված ուժերի բարեփոխումներն ու համալիր արդիականացման ծրագրերը, ռազմական արդյունաբերության հիմնական ձեռքբերումներն ու զարգացման հեռանկարները: Այդ համատեքստում ներկայացվում են նաև ռազմատեխնիկական ոլորտում այլ երկրների հետ Թուրքիայի համագործակցության մի շարք հարցեր:

Նախատեսվում է բուրբազեռների, քաղաքագետների, զինվորականների ու Թուրքիայի ռազմարալաքական խնդիրներով հետաքրքրվողների համար:

ISBN 978-9939-53-595-1

ԳՄԻ- 63.3 (5 թու)+68

© Լ. Հովսեփյան, 2010 թ.

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
ADMINISTRATION OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF POLITICAL RESEARCH

LEVON HOVSEPYAN

MODERNIZATION OF THE ARMED FORCES OF
TURKEY AND DEFENCE INDUSTRY

*The book is recommended for publication by the Scientific Council of the Institute of
Oriental Studies, National Academy of Sciences, Republic of Armenia*

YEREVAN
2010

ՐՈՎԱԿԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ.....	7
ԳԼՈՒԽ 1. ԹՈՒՐԻԿԱՅԻ ՊԼԵՏՊԼԱՆԱԿԱՆ ԶԵՂԱԶԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՈԱԶՄԱՎԱԲՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՄՈՒՆԻՍԵՐԸ.....	13
ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐԻԿԱՅԻ ՈԱԶՄԱՆՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԲԳԱՎՋՈՒՄԸ 1985-2009 թթ.....	38
<i>2.1 Թուրքիայի ռազմաարդյունաբերության զարգացման պատմությունը.....</i>	<i>38</i>
<i>2.2 Ռազմաարդյունաբերական համալիրն ու ռազմավարությունը.....</i>	<i>45</i>
ԳԼՈՒԽ 3. ՅԱՄԱԶԱՅԻՆ ԶՈՐԵՐԻ ԱՐԴԻՎԱԿԱՆԱՅՈՒՄ ՈՒ ՈԱԶՄԱՆՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.....	70
<i>3.1 Զրահատեխնիկա, տանկեր.....</i>	<i>70</i>
<i>3.2 Հրիտանդանային համակարգեր.....</i>	<i>82</i>
<i>3.3 Թերե սպառազինություն.....</i>	<i>90</i>
<i>3.4 Ուզգմական կապի, էլեկտրոնային պաշարի, հետախուզության ու հրամանատարական հսկման համակարգեր.....</i>	<i>94</i>
ԳԼՈՒԽ 4. ՈԱԶՄԱՆՐԴՅՈՒՆ ՈՒԹԵՐԻ ԱՐԴԻՎԱԿԱՆԱՅՈՒՄ ՈՒ ՈԱԶՄԱՆՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.....	103
<i>4.1 Ռազմական ավիացիա, ԱՄՍ-ներ.....</i>	<i>103</i>
<i>4.2 ՀՕՊ և ՀՀՊ համակարգի զարգացման ծրագրերը.....</i>	<i>121</i>
<i>4.3 Տիեզերական նախագիծը և հետախուզական արբանյակի ծրագրերը.....</i>	<i>130</i>
ԳԼՈՒԽ 5. ՈԱԶՄԱՆՈՒՎԱՅԻՆ ՈՒԹԵՐԻ ԱՐԴԻՎԱԿԱՆԱՅՈՒՄ ՈՒ ՈԱԶՄԱՆՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.....	135
ԳԼՈՒԽ 6. ԹՈՒՐԻԿԱՅԻ ՈԱԶՄԱՆԵՆՆԻՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՎԱՅԻՆ ԿՈՎՎԱՍՄՈՒ ՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ. ԹՈՒՐԻԿԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	144
ԱՄՓՈՓՈՒՄ.....	165
SUMMARY.....	168
ՀԱՎԵՆՎԱԾ.....	178
ՕԳՏԵԳՈՐԾՎԱԾ ԱՐՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	198

Թուրքիայի պաշտպանական ոլորտի ռուսմենախորությունը մեծ կարևորություն ունի ոչ միայն Թուրքիայի, այլ նաև տարածաշրջանային, միջազգային ռազմադաշտական գործընթացների ու զարգացումների տեսանկյունից: Թուրքիան ձեռնարկել է ՋՈՒ-ի արդիակառուցման լայնամասշտաբ ծրագրեր, որոնց շրջանակներում որդեգրել է սեփական ռազմաարդյունաբերության զարգացման քաղաքականություն: Այդ երկիրը որդեգրել է նաև ակտիվ արտաքին քաղաքականություն մի քանի ուղղություններով, ինչը նպատակ է հետապնդում դառնալու տարածաշրջանային տերություն: իսկ զարգացած ու հզոր ՋՈՒ-ի գոյությունը նրա կողմից դիտվում է իր հավակնությունների իրականացման քաղաքականության մեկը, երբ ոչ կարևորը:

Մյուս ռուսմենախորության հրատապությունը կայանում է նրանում, որ հայրենական արևելագիտության և հասնապես քուրբակիտության մեջ, առաջին ճճան համակարգված աշխատանքի փորձն է, որը ներկայացնում է ժամանակակից Թուրքիայի զինված ուժերի զարգացման ու արդիականացման միտումները, իրականացվող ռազմատեխնիկական ծրագրերն ու ռազմաարդյունաբերությունը: Ուստի, թեման ստանձնակի կարևորվում է իր արդիականությանը ու հետազոտական նորությունը: Այն կարող է օգտակար լինել ինչպես մասնագիտական շրջանակների, այնպես էլ զինվորականների համար, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմել բուրբակյան բանակի զարգացման ու նրա պաշտպանական քաղաքականության միտումների մասին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակը չի հանդիսանում զինվորական կամ ռազմական ոլորտի մասնագետ, այնուամենայնիվ, իրեն հաջողվել է հանգամանակից կերպով ներկայացնել ռազմական տարրեր ոլորտների հետ կապված խնդիրները: Ուսումնասիրությունն քննարկում է Թուրքիայի պաշտպանության ու անվտանգության ոլորտի տարրեր բնագավառները, ստանձին-առանձին ներկայացնելով պաշտպանական քաղաքականության, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման միտումները, զորքերի տեսակների համալիր արդիականացման խնդիրները, ինչպես նաև այդ երկրի ռազմատեխնիկական համագործակցության շրջանակները:

Հեղինակն օգտագործել է բազմաթիվ բուրբակյան աղբյուրներ, այդ թվում՝ պաշտոնական տեղեկագրեր ու հրատարակումներ, պարբերական մամուլ, վեբլուծական գրականություն, ինչը գզալիորեն բարձրագ-

նում է աշխատանքի նշանակությունը: Բացի այդ, աշխատանքի կարևորությունը կայանում է նրանում, որ հարուստ փաստագրական ու վերլուծական նյութերի օգտագործմամբ, ներկայացվում են բուրբական բանակի արդիականացման ու զարգացման միտումները ժամանակագրական հերթականությամբ:

Կարծում ենք, որ Լ. Հովսեփյանի «Թուրքիայի գինված ումերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը» ուսումնասիրությունը յուրյ ինտարբերություն կառաջացնի Թուրքիայի ռազմաքաղաքական խնդիրներով հետաքրքրվողների և հատկապես մասնագետների շրջանում:

*Գեներալ-մայոր, պ. գ. ք.
Մլրքայել Մելքոնյան*

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Թուրքիան ակտիվորեն ձեռնամուխ է եղել սեփական ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման, սպառազինության ձեռքբերման և սեփական գինված ումերի (այստե՛ստ՝ ՋՌԻ, բուրբ. *Silahli kuvvetler*) արդիականացման լայնածավալ ծրագրերի իրագործմանը: Ռազմական արդիականացման այդ ծրագրերը կարևորություն են ներկայացնում ոչ միայն Թուրքիայի, այլ նաև տարածաշրջանային ռազմաքաղաքական հիմնախնդիրների ու զարգացումների տեսանկյունից:

ԱՄՏՕ-ի անդամ պետությունների շարքում Թուրքիան, հանդիսանալով իր բրնակի բզկակաճով երկրորդ երկիրը և չունենալով իր բանակի համար ռազմական տեխնիկայի ու անհրաժեշտ սպառազինության ապահովման սեփական բավարար ռեսուրսներ և գործուն ռազմաարդյունաբերական համալիր, 1980-ական թթ. կեսերից ձեռնամուխ եղավ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման և ՋՌԻ-ի արդիականացման ծրագրերի իրականացմանը: Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ու ՋՌԻ-ի սպառազինության արդիականացման ծրագրերն ու նախագծերը Թուրքիայի համար մեծ կարևորություն են ներկայացնում մի շարք տեսանկյուններից: Դառնալով Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ և ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակիցը՝ Թուրքիան իր սեփական ռազմական համակարգի կայացման, զարգացման ու սպառազինության ապահովման գործում օգտվում էր այդ խողովակով ստացվող օժանդակությունից և փաստորեն զգալի կախվածության մեջ էր գտնվում ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների մատակարարումներից:

ՋՌԻ-ի արդիականացման գործընթացն սկսվեց հետաառապատերազմյան նոր մարտահրավերներին ղեմակախելու համար, բանի որ փոխվում էր Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքը՝ արդեն հանդես գալով որպես տարածաշրջանային տերություն, որը ներքին ու արտաքին սպառնալիքներին ղեմազրավելու համար ժամանակակից ռազմական ուժի կարիք էր գլուժ:

Ելու յթ ունենալով 2005 թ. աշնանը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գերատեսչության հիմնադրման 20-ամյակին նվիրված համաժողովում՝ Թուրքիայի ՋՌԻ Գլխավոր շտաբի (այստե՛ստ՝ ԳՇ, բուրբ. *Genel Kurmay*) Գլխավոր պլանավորման և սկզբունքների մշակման ղեկարսումնետի ղեկավար Հ. Աքրն Ջորլուն նշել է, որ երաշխավորված չլինելով շրջապատող տարածաշրջաններից եկող տարրեր մարտահրավերների ու սպառնալիքների նկատմամբ, Թուրքիան հարկադրված է ունենալ 21-րդ դարի ռազմական ու քաղաքական պահանջներին համապատասխանող ՋՌԻ՝ դրա հաջողության ամենա-

կարևոր գրավակներ համարելով տեղական հզոր և արդյունավետ ուսումնարարության համակարգի կայացումն ու վարպետությունը¹։

Յուրբալան ՋՌՄ-ի արդիականացման խնդիրները վերաբերում են ինչպես բանակի համակարգային փոփոխությունների, այնպես էլ ՋՌՄ-ի համալիր արդիականացմանը, սպառազինության բարձրացմանն ու սեփական ռազմական արդյունաբերության վարպետները։ ՋՌՄ-ի արդիականացումը վերաբերում է զորքերի բոլոր տեսակներին, անվտանգության այլ մարմիններին ու ստորաբաժանումներին, որոնց կազմակերպիչ ապահովման համար ձեռնարկված համալիր ծրագրերը կոչված են ապահովելու ժամանակակից ռազմական տեխնիկայով ու սպառազինությամբ։

Անվտանգության նոր մարտահրավերներին դիմադրակալելու համար թուրքիայի ՋՌՄ-ը գտնվում են ռազմաքաղաքական, ռազմավարական նոր պլանմաններից բխող պահանջների ու կարիքների համապատասխանեցնելու գործընթացում։

Իսազմական ուժի պաշտպանումն ակտիվորեն բարձրացնելու համար ձեռնարկված արդիականացման ռազմավարությունը նպատակ ունի առաջին հերթին մեծացնել ՋՌՄ-ի տեխնիկական համալիրաձուլությունը և բարձրացնել բանակի մարտունակությունը ժամանակակից պահանջներին համապատասխան։ Արդիականացումը նախատեսում է հրամանատարական հսկման, տեղեկատվական, հետախուզական ներառյալ համակարգերի, մորթի կրակային ուժի, բարձր տեխնոլոգիական զենքերի և համակարգերի առկայությունը, ցանկացած պայմանում, վիշեր-ցրելի մարտական գործողություններ իրականացնելու, խաղաղ վիճակից արագորեն պատերազմականի անցման հնարավորություն, գնդկազմային ոչնչացման զենքերի (այսուհետ՝ ՋՌՋ, բուրբ. *Kille Imha Silah*, անգլ. *Weapon of Mass Destruction*) դեմ հակադասյին և հակաիրիտիային պաշտպանության համակարգերի առկայություն, բազմա-կողմ անհնամաչափ պատերազմի ընթացքի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու հնարավորություն, դաշնակցային ուժերի հետ համատեղ, վիժադարձ գործողությունների վարման կարողություն²։ Ըստ բուրբական ռազմական ղեկավարության մոտեցումների՝ ներկա ժամանակաշրջանում մեծացել է մարտահրավերների շրջանակը և բուրբական ՋՌՄ-ը պետք է կարողանան համապատասխան գործողություններ իրականացնել և կանխել այդ սպառնալիքները։

2006 թ. հոկտեմբերին Յուրբալայի ՋՌՄ ԳՇ պետ (2006-2008 թթ.) Յ. Բյույուրանըրը ներկայացրել էր հասուկ մի ցուցակ, որով արդիականացման ծրագրի շրջանակներում պետք է գերազանցված ու համարված լինի բուրբական բանակը։ Այդ ցուցակում ներառված էին մարտավարական գրահամերեները, լայն ժամանակավոր կարիքների համար տանկերի ձեռքբերումը, հետախուզական ու հարվածային ուղղափոխները, անօդաչու ինքնաթիռները, հրթիռահրետամային համակարգերը, ավտոմատ կրակային կառավարման, օդային պաշտպանության նախազգուշացման ու հսկման համակարգերը, փոքր ու միջին հետախուրդային հակաօդային պաշտպանության համալիրները, մարտական հրամանատարական հսկման ու տեղեկատվական համակարգերը³։

Այլապատյան շրջանակում շուպվող աղսպներ և, ընդհանրապես, թուրքիայի ժամանակակից բանակը, հարչաբանական համակարգի էլեմենտներում մեզանում դեռևս հասուկ ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել, չնայած նրան, որ զրգվել են մի քանի առանձին հոդվածները։ Հայրենական արևելագիտություն մեջ ժամանակ առ ժամանակ որոշ հեղինակներ իրենց ուսումնասիրություններում անդրադարձնել են թուրքիայի զինվորականությունն ու երկրի քաղաքական կյանքում նրա դերին, թուրքիայում իրականացված ռազմական հեղաշրջումներին, բանակ-հասարակություն հարաբերություններին, տնտեսական համակարգում բուրբական բանակի դերին և այլն⁴։ Ինչպես հայրենական, այնպես էլ ռուսական արևելագիտության մեջ ժամանակակից թուրքիայի ՋՌՄ-ի վերաբերյալ համակողմանի ուսումնասիրություն չկա։ Արևմտյան մի շարք փորձաշեններ ու ուսումնասիրողներ, անդրադարձել են այդ թեմային, որոնք, սակայն, ամբողջական չեն և վերաբերում են միայն առանձին ոլորտներին։ Հասնի թր մեկ ուսումնասիրության շրջանակում հնարավոր չէր լինի ամբողջովին ներկայացնել բուրբական բանակը, պաշտպանական ու անվտանգության համակարգը, առկա փորձըրացները, սույն ուսումնասիրությանը, որպես առաջին քայլ, փորձ է արվում ընդհանուր գծերով ներկայացնել բանակի արդիականացման ռազմավարությունը, ռազմաարդյունաբերության վարպետները, իրագործվող ծրագրերն ու համալիր միջոցառումները։

¹ Թուրքիայի սրբազանական արդյունաբերության գիտալիր վարչության էլեմենտում 20-ամբողջին նվիրված կոնֆերանսի նյութեր, տե՛ս ՊԸԳ-Վ-ի պաշտպանական կայք, http://www.2.kon.gov.tr/library/docs/ta/uzumtal20_yil019-022_Hilmi_Akin_ZORLU.pdf

² Տե՛ս Թուրքիայի սրբազանական պաշտպանության նախարարության պաշտպանական կայք, <http://www.tmb.gov.tr>

³ Andrew McGregor, *Arming for Asymmetric Warfare Turkey's Arms Industry in the 21st Century*, The Jamestown Foundation, June 2008, p. 4

⁴ Ա. Կոնսանյան, *Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատմությունի շուրջ*, Մերթաթր Ալեքսի հ. 3, 2006, էջ 51-55; Ա. Կոնսանյան, *Իսրայել-հասարակություն գոյն-հարաբերությունները Թուրքիայում 1960-70-ական թթ.-ձրորաբարձրման և օտանմա-գիտական նետազոտություններ* հ. 5, էր. 2006, էջ 133-158; Է. Սեյրուրան, *Միևնուրակա-նության դերը Թուրքիայի քաղաքական կյանքում -ՉՁՆՊՊ*, 1993, էջ 10-20; Ա. Ավդալան, *Իսմուկի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում -Հայնական քանակ*, 4 (50), 2006, էջ 67-74:

Այլխատանքի կիրառական ու տեսական նշանակությունը պայմանավորված է հետազոտման թեմայի արդիականությամբ ու նրա հետագոտական նորությունով: Ներկայացվելիք հետազոտությունը հնարավորություն կտա Թուրքիայի ՀՈՒ-ի արդիականացման ծրագրերն ու ռազմասարկունարերությունը ներկայացնել իր պարզապես զինամիջակով ու տարրեր ոլորտների ընդգրկմամբ: Կիրառական տեսանկյունից սույն հետազոտությունը հետապայտն կարող է օգտագործվել Թուրքիայի ՀՈՒ-ի ու պաշտպանական համակարգի հիմնականիդրերին նվիրված գիտահետազոտական ուսումնասիրություններում և հատուկ դասընթացներում, ինչպես նաև օգտակար լինել պետական համապատասխան մարմինների ու փորձագիտական շրջանակների համար, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմել ժամանակակից Թուրքիայի քանակի, նրա ռազմավարության ու իրականացվող ռազմատեխնիկական ծրագրերի մասին:

Այլխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, բուրբերեն ու անգլերեն լեզուներով տարբեր աղբյուրների ու տեղեկատվա-փերլոմական գրականության հիման վրա: Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են օգտագործվել բուրբական պաշտոնական փաստաթղթերը, տեղեկագրերն ու մի շարք գեկույցներ, ինչպես օրինակ՝ Թուրքիայի «Պաշտպանական արդյունաբերության ըաղարակառույթունը և ռազմավարությունը» փաստաթուղթը (Türk Savunma Sanayii Politikası ve Stratejisi), «Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության 2008 թ. գործունեության գեկույցը» (Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu), «Պաշտպանական արդյունաբերության 2007-2011 թթ. ռազմավարական պլան»-ը (Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011), Թուրքիայի պաշտպանության նախարարության 2008 թ. գործունեության տարեկան գեկույցը (Milli Savunma Bakanlığı, Faaliyet Raporu 2008), առանձին ռազմասարկունարական ընկերությունների տարեկան հաշվետվությունները (Aselsan: Faaliyet Raporu 2008, Havelsan, 2007 Faaliyet Raporu, Makin ve Kimya Endüstrisi Genel Müdürlüğü, 2008 yılı Faaliyet Raporu) և այլն: Ռուսերեն և անգլերեն լեզուներով օգտագործվել են Ռ-ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տեղեկագրերից, Մոսկովյան միջպպային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) և Ռազմավարական ուսումնասիրությունների միջպպային ինստիտուտի (IISS) տարեգրքերից¹:

¹ Вооруженные Силы и военная экономика стран Азии/ Информационно-аналитический справочник РАН Институт Востоковедения отв. ред. А. Егорин, Москва 2000, SIPRI Yearbook 2006, Stockholm International Peace Research Institute, Oxford University Press, 2006, The Military Balance 2009, The International Institute for Strategic Studies, London 2009

Օգտագործվել են նաև բուրբ մի շարք հեղինակների հոդվածներն ու հրատարակումները: Դրանցից կարող ենք, օրինակ նշել Ա. Հյուսթիսի, Ա. Գյորգյուչի, Շ. Էլբրդալի, Փ. Քիլիցին, Ս. Լաչինների, Կ. Ռիստի, Լ. Մարրիրրահիժոլուի, Ա.Գալուրթուլուի, Ա. Սյոզեհի հոդվածներն ու աշխատությունները²: Օգտագործվել են նաև բուրբ մի շարք բարձրատիման գեկույցների հոդվածներ, հրատարակումներ ու կույրներ³:

Հայտնական հեղինակներից սույն աշխատության համար օգտագործվել են Ռ. Սաֆրաստյանը, Ա. Ավագյանի, Հ. Գեմոյանի, Ա. Միմոսյանի և մի շարք այլ հեղինակների հոդվածներն ու ուսումնասիրությունները⁴: Ռուս և արևմտյան հեղինակներից հիշատակման արժանի են Ա. Կուլիկովի, Ա. Գուրևի, Մ. Մարտովի, Ա. Ֆեդինի, Ա. Լարաբևի, Մ. Լ. Հիլբրի, Հ. Քերբի, Ա. Մազրեզգորի, Է. Հեն-Յուլի, Գ. Կինբուրի, Մ. Էրքնի, Է. Կոզանի, Ռ. Մադրերմորի հոդվածներն ու աշխատությունները⁵:

² Ali Kulebi, Türkiye'nin Askeri Stratejisi, Gücü ve Geleceği, Türkiye Stratejik Araştırmalar Merkezi (TUSAM), 02.08.2004, Sendir Gergç, Savunma Sanayinde Kara Platformu, Savunma Sanayii Gündem, Temmuz 2008, Sokrök Elçidag, 2-3 War Strategy, Perceptions, Journal of International Affairs, Vol. 1, March-May 1996, Pinar Bilgin, Turkey's changing security discourses: The challenge of globalisation, European Journal of Political Research 44, 2005, Sedat Laciner, Mehmet Özcan, İhsan Bal and Halil İbrahim Bahar (eds.), USAK Yearbook of International Politics and Law 2009, Vol. 2, International Strategic Research Organization, Nasuh Usta, The Cooperation Amid problems: Turkish-American Relations in the 1980s, http://www.politics.ankara.edu.tr/esk/dosyalar/MMTY/2722_nasuh_usta.pdf, L. Sarıbrahimoğlu, Turkey confident of stop-gap deal for US AF-1WS, Jane's Defence Weekly, vol. 46, issue 25, June 2009, Ahmet Davutoğlu, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, Insight Turkey Vol. 10 / No 1 / 2008, Ahmet Şenzen, A Paradigmatic Shift: New Principles of Turkish Foreign Policy Making, March 2008, Paper prepared for presentation at the 2008 Annual Conference of the International Studies Association in San Francisco, USA, 26-29 March.

³ Sadi Ergüvenç, Turkey's Security Perceptions, Journal of International Affairs, June-August 1998, Vol. 3, N 2, Hikmet Sami Türk, Turkish Defense Policy. The Washington Institute For Near East Policy, March 3, 1999, <http://www.washingtoninstitute.org/media/amtkur.htm>, Sait İhsan, Geopolitical developments and the Turkish world, Eurasian Studies, TIKTA, Vol. 2, N 3, 1995, Doğan Güreç Pağad'an şok iddia, <http://www.ansinhaber.com/gundem/90989/dogan-gures-pasad-an-sok-iddia.html>, Özg. Büyükanıt tehditleri suratid, [⁴ Ռ. Սաֆրաստյան, Բնաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում աշխարհառավակարական գիտարարը, «21-րդ դար», թիվ 4, \(10\), 2005: Ռ. Սաֆրաստյան, Հնարավոր է 21-րդ դարում պատերազմներ տեսնել հարևանների միջև... Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հողկույրներում /2001-2003 թվականների հողկույրներ և հարցազրույցներ/, Եր. 2003: Ա. Ավագյան, Բանակի դերը Թուրքիայի տեսնական համակարգում, Հայկական բանակ, 4, 2006: Դ. Լեսոս, Կրան, Կրան և Կարաբախում կոնֆլիկտ, Էր. 2006: Ա. Միմոսյան, Եզրային-բարդական ռազմարարական համակարգավորությունը բրդական հիմնախնդի համատեքստում, «21-րդ դար», N 4, երևան, 2006](http://www.haber7.com, 04.04.2008, Özkök, Türkiye bölgesel güç olacak, http://www.haber7.com, 24.08.2006</p></div><div data-bbox=)

տորյունները՝ որոնք այս կան այն կերպ անդրադառնում են Թուրքիայի բանակի խնդիրներին, արտաքին քաղաքականությանը և այլն։
Սուսունախորրայան համար օգտագործված աղբյուրների ցանկում բավականին մեծ թիվ են կազմում ինչպես բուրբակյան, այնպես էլ ռուսական ու արևմտյան տարբերույթ պարբերականները, մամուլը, տեղեկատվական ու վերլուծական կենտրոնային կայքերը։ Դրանցում կրակելի մասը կազմում են բուրբակյան մամանակակից մամուլն ու պարբերականները, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները, պաշտոնատար անձանց հարցազրույցները և այլն։

Օգտվելով աղբյուր՝ հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում Արծրուն Հովհաննիսյանին, ինչպես նաև Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի գլոբալիզմոսերին ու Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշատողներին՝ ցույգաբերած մասնակիտական աջակցության ու օգտակար խորհուրդների համար։

⁴ А. Косиков, Военно-политический потенциал Турции// Востокведный сборник. вып. 2 М., 2001, А. Гурьев, Турция-Израиль: по пути укрепления нашего сотрудничества. <http://www.unec.ru/rus/stat/2006/24-01-06.htm>, М.Мартов, Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами/Армения и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии (сборник статей), ИНИОН, М., 2002, А. Федина, Военно-морские силы Турции// Зарубежное военное обозрение, # 5, 1997, F. S. Larrabee, Turkey as a US Security Partner, RAND Corporation 2008, M. Robert Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, The Eurasian Politician-Issue 3 (February 2001), H. J. Bakkey, Turkey and The New Middle East, A Geopolitical Exploration, Reluctant Neighbor, Turkey's Role in the Middle East, United States Institute of Peace Press, 1996, A. McGregor, Arming for Asymmetric Warfare: Turkey's Arms Industry in the 21st Century, The Jamestown Foundation, June 2008, E. Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol 8, No 4, (December 2004), G. Wintro, Turkey and Central Asia, Central Asian Security, The New International Context, Brookings Institution Press, ed. R. Allison, L. Jonson, 2001, M. Easton, Major Trends in Military Expenditure and Arms Acquisition by the States of Caspian Region, The Security of the Caspian Sea Region, ed. G. Charfm, SIPRI, Oxford University Press, 2001, E. Kagan, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry, Conflict Studies Research Centre, Middle East Series 05/43, Defence Academy of the United Kingdom, [ԳԼՈՒԽ 1](http://www.da.mad.ac/CSRC/documents/middle_east05(43)-EK_R_McDermott_Turkish_Military_Assistance_to_Kazakhstan_Highlights_Western_Dilemma_Eurasia_Daily_Monitor. Volume 2 Issue 115, The Jamestown Foundation, http://www.jamestown.org, 15.06.2005</p></div><div data-bbox=)

ԹՈՒՐԿԻԱՅԻ ՊԵՇԱԳՐԱԿԱՆ ԶՆՎԱԶԱԿՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՈՒՋՁԱԿԱՐԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի քաղաքական և հատկապես զինվորական շրջանակները կանգնեցին արտաքին քաղաքականության, անվտանգության և պաշտպանական քաղաքականության ոլորտում իրենց ռազմավարության վերանայան ու հստակեցման անհրաժեշտության առջև։ Սառը պատերազմի ավարտով սկսված աշխարհաքաղաքական փոփոխություններն և զարգացումները ասիոլոգիան Թուրքիային առավել գզույրեն և հետադաշտուն են հստակեցնել փրագգային ու տարածաշրջանային, անվտանգության ու պաշտպանական քաղաքականության գերակայություններն ու նոր մարտախնկաները։ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վերագավ Վստրիդային վտանգը՝ և Թուրքիայի համար նոր հնարավորություններ թագվեցին այնպիսի տարածաշրջաններում, որոնք նախկինում անտեսված էին ուղ կրկի ռազմարտադարական ղեկավարության կողմից, և Թուրքիան իտյունվեց նոր ձևավորվող ռազմավարական «բնակավայրի խաչմերուկներ»։ Իր հերթին, փոխվեցին Թուրքիայի անվտանգության մարտավարակերևյալն ու սպառնալիքները¹⁰։

Հյուսիսատլանտյան դաշինքին Թուրքիայի անդամակցումը և Սառը պատերազմի սկզբը այդ երկրի անվտանգության ու պաշտպանական ռազմավարության առումով նոր փուլ թայեցին¹¹։ ՆԱՏՕ-ին անդամակցումով Թուրքիան դարձրել այդ ուժային համակարգի ռազմարտադարական չանկերի կրողն ու հետևորդը։ Մաքըդառնալոգյան մասնամակաշրջանում րուրբակյան ԶՈՒ-ը հստակ ղերակատարություն ունին ՆԱՏՕ-ի հարավային գծի պաշտպանության գործում՝ կանխելով հուրիդային Միության մուտքը միջերկրածովյան շրջաններ և Մերձա-

¹⁰ F. Stephen Larrabee, Turkey as a US Security Partner, RAND Corporation 2008, p. 3
¹¹ Հարկ է նշել, որ ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցության իրենական շարժառիթակից էր Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ի նկատմամբ այդ երկրի հարաբերությունների փոփոխումները։ Չնայած դրանք նմանի մասին սրձանազրույթներ ստորագրվել է 1951 թ. Խոկուններին, Թուրքիան փրկավ անբավ դարձավ 1952 թ. փետրվարի 18-ին ստորագրվող Հյուսիսատլանտյան պայմանագրից։ Խաչինի ստեղծումից հետո Թուրքիան թայեղ ձեռնորդեց միասնական, սակայն թայինի անդամներ հանցատող Կանդան, Կորբակյան, Ռեզիտան և Սեմ Բիլիսանյան ղեկ էին Թուրքիայի անդամակցությանը։ Ի՞նչ միայն աջակցելով ԱՄՆ-ին կրթական դասակարգում Թուրքիան ստացավ այդ երկրի անդամակցություն անդամակցության գործում։ Տե՛ս Ա. Կոսիկով, Военно-политический потенциал Турции// Востокведный сборник. вып. 2, М., 2001

վոր Արևելք՝ այդպիսով իրականացնելով դաշինքի «սպառնալից քաղաքականությունը»: Թուրքիայի տարածքը քայքայելի հարթակ էր սովետական միջնադարյան քաղաքի կրիտիկների (ICBM) արձակումները, փոքրաթիվումները հետևելու և լեկտորնալից հետախուզություն ապահովելու համար¹²: Սաղաթատերազմյան շրջանի Թուրքիայի անվտանգությունն ու պաշտպանական ուսումնականությունն ամբողջովին տեղափոխվում էր Հյուսիսատլանտյան դաշինքի և հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ) սաղաթատերազմյան հայեցակարգի ու ուսումնականության համաձայնում¹³:

ՆԱՏՕ-ի ուսումնական պլանավորման հիմքում դրված էր այն մտաբեկումը, թե ԽՍՀՄ-ի և Վրաստանի պայմանագրի կազմակերպության ուսումնական ուժերի հարձակման դեպքում Թուրքիան որ տարածքները պետք է պաշտպանի և ինչպես ետ մղի բշտամու հարձակման ուժը մինչև դաշինքի (այն է՝ ՆԱՏՕ) գործերի ուսումնական գործողությունների մեջ մտնելը: Թուրքիայի ուսումնական պլանավորողները ենթադրում էին հավանական բշտամու հարձակման ռիսկ ընդունել ենց երկրի սահմանին, այնուհետև համակարգված մահաբեկում ետ քաշվել դեպի երկրի խորքերը: Այդ ժամանակաշրջանի Թուրքիայի պաշտպանական հայեցակարգը կրում էր գոտ պաշտպանողական բնույթ՝ հենվելով սովորական սպառազինության ուսումնական գործողություններ իրականացնելու մարտավարության վրա: Ուսումնական գործողությունների դեպքում միջուկային զենքի օգտագործումը գտնվում էր միայն ՆԱՏՕ-ԱՄՆ լայն իրավասության ներքո¹⁴:

Փաստորեն, ստորապատերազմյան շրջանի հետ կապված խոսել Թուրքիայի առանձին պաշտպանական հայեցակարգի մասին միշտ չի

ինի, սակն որ այն կրում էր ՆԱՏՕ-ԱՄՆ, ուսումնական հայեցակարգի որչ արկեցությունն ու տրամաբանությունը:

Սաղաթատերազմի ավարտը հանգեցրեց աշխարհաքաղաքական նոր վերածնունդների, ինչի այդուցեում փոխվեց տարրեր երկրների անվտանգության ու պաշտպանական ողջ ուսումնականությունը: Հետադարձապատերազմյան նոր ժամանակաշրջանի սկիզբը որոշ անորոշությունների առաջ կանգնեցրեց պաշտոնական Անկարային իր արտաքին և հատկապես անվտանգության քաղաքականության հետագա ուղիվների սահմանման և նոր ուսումնականությունն որդեգրման առումով: Թուրքիայի համար օրակարգային խնդիր դարձավ նախ և առաջ տարածաշրջանային, անվտանգության և պաշտպանական քաղաքականության հրամայականների վերաիմաստավորումը: Թուրքիայի քաղաքական ու գիմվորական շրջանակների մտա մտափայտություն կար, որ Սաղաթատերազմի ավարտով Թուրքիան կկորցնի իր ուսումնական նշանակությունը Արևմուտքի ու ԱՄՆ-ի համար և կհայտնվի տարածաշրջանային մեկուսացման վտանգի առջ: Թուրքիայում անհանգստությունն այն էր, որ իր անմիջական հարևանների կողմից կարող է ընդունվել կառավարման մարտավարության կամ նույնիսկ բշտամարտ: Աշխարհաքաղաքական նոր քաղաքականությունը Թուրքիային ստիպեցին ներգրավվել իր անմիջական տարածաշրջանային գործընթացներում, քանի որ այն Թուրքիայի համար և նոր հետակարգեր էր քայտում և նոր մարտաիրավեներն առեմունկ¹⁵: Չընդունվելով Սերժանի Արևելքի արարական, իսկամական երկրների կողմից և միաժամանակ մերժելով Եվրոպայից՝ Թուրքիան սկսեց որոնել արտաքին քաղաքականության ավելի հաստատական ուսումնական արևկությունը:

Արևմուտքի և առաջին երրորդ ԱՄՆ-ի նկատմամբ իր ուսումնական նշանակությունը, բուրբ-ամերիկյան ուսումնական հարաբերությունները իհնավազրկելու և մերժավարարելիցն տարածաշրջանում իր ակտիվ ներգրավվածությունն ապահովելու համար կարևոր գործում էր Բոցի առաջին պատերազմում ԱՄՆ-ին Թուրքիայի կողմից ցուցաբերած ուսումնական արևկությունը¹⁶: Հատկանշական է,

¹² Sadi Ergüvenç, Turkey's Security Perceptions, Journal of International Affairs, Vol. 3, N. 2, June-August 1998

¹³ Ինվելով ՆԱՏՕ-ի անդամ և դաշինքի ուսումնական քաղաքային, այնուամենայնիվ, Թուրքիան իր ուսումնական համակարգի կայունացում և հատկապես ուսումնական օմանդակությունների, սպառազինության մեղքերման առումով զգալի կախվածությունն մեջ էր ԱՄՆ-ից: Միայն 1946-1987թթ. ԱՄՆ-ի կողմից քաղաքական գիմված ուժերի հատկապես փոխանցումները կազմում են ընդհանուր տարածք շուրջ 8,8 մլրդ դոլար: 1982 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ը իր «Սաղաթատերազմային ծրագրի» Տնտեսական օմանդակության ինվեստիցիան և «Միջուկային ուսումնական ուսուցանման ծրագրի» միջոցով տարակն Թուրքիային և հատկապես 700-800 մլրդ դոլար: Քանի որ ԱՄՆ-ը միջև այժմ իրավասում որի օգտագործել Թուրքիայի տարածքում գնմով ուսումնական քաղաքային (Բնօրինի, Լուսնաբացը և այլն), Տե՛ս <http://www.bis.net/ackuser/mak8/McGhee1990.htm> - 64.

¹⁴ Michael Robert Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, The Eurasian Politician, Issue 3 (February 2001), <http://www.ccs.yu.it/~aphamala/polissue3/hickok.htm>

¹⁵ Henri J. Bakewell, Turkey and The New Middle East, A Geopolitical Exploration, Reluctant Neighbor, Turkey's Role in the Middle East, United States Institute of Peace Press, 1996, pp. 30-31.

¹⁶ 1990 թ. Երասի ներխուժումը Ռուսիայի, Թուրքիայի միախառն թ. Օզալին հնարավորություն տվեց ցույց տալ ԱՄՆ-ին, որ Թուրքիան դեմառ կոր փոտարևելաստան դերակատարություն կարող է ունենալ ԱՄՆ-ի արտաքին ուսումնականության մեջ և մասնակցել Բոսնիայի դեմ ուսումնական գործողություններին: Մինչ Օզալը արտաքին տարածք Թուրքիայի ուսումնական մասնակցությունն անհրաժեշտություն էր, երկրի կողմից անհրաժեշտ էր ղեկավարված քաղաքականություն ավելի հասկանալի օմանդակական

որ Թուրքիան քայլեր էր ձեռնարկում դուրս գալ ավանդական քե- մավական «մեկուսացման-չկարտրոյան և հավարական անվտանգու- րյան» ուղեգծից և ավելի ղիճամիլի ղերակատարություն ստանձնել մերձավորարևելյան տարածաշրջանում: Չհայած Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի էկրիսիտեզրման քաղաքականությունը մնում էր հիմնական արտաքին քաղաքական ռազմավարությունը, այնուամենայնիվ, Թուրքիան ընդունց նոր ռազմավարություն, որով ԱՄՆ-ի ու Եվրոպայի հետ Թուրքիայի սերտ հարաբերությունները կա- պակցվում էին Սերձավոր Արևելքում, Սևծովյան տարածաշրջանում ու Կենտրոնական Ասիայում ստանձնելիք ավելի մեծ ղերակատարու- րյաձք: ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն հանդիսանում էին Թուրքիայի անվտանգու- րյան հիմնական երաշխավորները մերձավորարևելյան տարածա- շրջանից բխող մարտահրավերների (որոնք հիմնականում առկա էին Սիրիայից, Իրաքից ու Իրանից) ղիմագրավման տեսանկյունից¹⁷: Սառը պատերազմի ավարտով Թուրքիան հստակեցրեց իր անվտանգությանն սպառնացող նոր մարտահրավերները՝ տարածաշրջանային ու երկնի հակամարտություններ, քաղաքական ու տնտեսական անկայու- նություն, ՁՈՁ-ի տարածում, գեների ու բձրամիջոցների մարտաննգու- րյուն, միջազգային ահաբեկչուրան, որոնց սպառնալիքը մեծ էր հատկապես Սերձավոր Արևելքից¹⁸:

Տարածաշրջանից բխող մարտահրավերների ու ղիսկելի գեռահա- տումներով ու ղձրոնումներով հանդերձ, Թուրքիայի ՁՈՒ ԳԵ-ի համար որպես երկրի տարածաշրջանի ամբողջակամարտյան պահպանման, ան- վտանգության առաջադրանք էր ղիտվում երկրի բազմանակատ պաշտ- պանությունը¹⁹:

1990-ական թթ. կեսերին Թուրքիայի պաշտպանական հայեցա- կարգը հիմնվում էր տարածաշրջանային մարտահրավերներին ղի- մակալելու միջոցով երկրի տարածաշրջանի ամբողջակամարտյունն ապա- հովելու ռազմավարության վրա: Սառը պատերազմի ավարտից հետո

իջարտյուն մերձավորարևելյան տարածաշրջանում: Հենց այդ համագամարով է քա- ղարտուն 1990 թ. Թուրքիայի մինչև ուձերի վիսազար քաղաքի սերտ Նեկիի Թարմ- քալի պաշտպանությունը հանգրվածաձք: Հնուսայառն, մերձավոր բնակիչի հիմնական վերաբերմաձք. երկրի բարձրաուրյուն գեներալսպանները ղարման քաղաքական ակտիվ արտաքին քաղաքականություն հազվադեպ հետևողները: Տես Dietrich Jung and Wolfgang Piccoli, Turkey at the Crossroads, Ottoman Legacies and A Greater Middle East, London & New York, 2001, p. 142:

¹⁷ Stephen J. Flanagan, Samuel J. Brannan, Turkey's Shifting Dynamics, Implications for U.S.- Turkey Relations, Center for Strategic and International Studies, CSIS, June 2008, pp. 2-8

¹⁸ Seboum Udum, Missile Proliferation in the Middle East. Turkey and Missile Defence, Turkish Studies Institute, Vol. 4, N. 3, 2003, p. 73

¹⁹ Michael Robert Hickok, նշվ աշխ:


ղարտերով լինել երկու ուձային համակարգերի միջև «տազմակա- քական պատանջ» Թուրքիայի վիճարեյան իր սահմանի անմիջական հարևանությամբ «տազակ լարվածությունն օշանելու և բեծ կետեր, որոնք ղիտարկվում էին այդ երկրի անվտանգությանն ուղղված մար- տահրավերները»:

Հնուսարգավտերազմյան ժամանակաշրջանում՝ ընդուպ մինչև 1990-ական թթ. վերջը, Թուրքիայում ղեռնա գերիշխում էր ավանդական «տարածքների կորստի ու Թուրքիայի մերձման վախը», ինչը հանրա- պետական Թուրքիայի անվտանգության ղիսկուրի անբաձանելի մասն էր կազմում²⁰: Այ շարը բուրք բարձրանալուհան գեներալսպանների հրատարակումներում Թուրքիայի նկատմամբ առկա սպառնալիքները կորոշացվում էին տարածքային մասնատման ու տարածքների սերտության վախի մեջ: Թուրք գեներալ Ն. Հեճուղուն համապում էր, որ Թուրքիան աշխարհում ունի ամենաշատ արտաքին բշմամիները, որոնց ցանկությունները Թուրքիայի նկատմամբ «գերբիղրդարյունն է», իսկ գեներալ Դ. Բալազյանը (1992-1995 թթ. Թուրքիայի Ազգային ան- վտանգության խորիղի գլխավոր քարտուղար) նշում էր, որ արտաքին ուձերը տարածաշրջանում ուձել ու հզոր Թուրքիայի գոյությունը շատ ղիսկրելում ղնկարում են որպես մարտահրավեր և որդեգրել են դրական պետություն ստեղծելու գաղտնի քաղաքականություն: Այս համատեքստում առավել կարող է արտահայտվել քուչկի անցած գեներալ Ա. Իչհանը, ըստ որի, Արևմուտքը ցանկանում է հասնել նրան, «ինչը շնացողվեց Առաջին աշխարհամարտում, այսինքն՝ մասնատել Թուրքիան»²¹:

1990-ական թթ. բուրք ռազմական պատասխանատուները Ռուսաս- տանը, Հունաստանը, Իրաքը, Իրանը և Ալբիան ղիտում էին որպես

²⁰ Pinar Bilgin, Turkey's changing security discourses: The challenge of globalization, European Journal of Political Research 44, 2005, p. 185. Ի ղեպ, վերջին տարիներին քարտուղան հասարակական-քաղաքական, գիտական ու նաև գեներալսպան որդ քրթա- սանվում շարունակվում և նույնիսկ ակտիվալել է Թուրքիայի մասնատման, քաղ- աքական ու տնտեսական ուղղված արտաքին ուձերի մրազուրել ու մտազարտությունների մասին բնեարկումները: Այդ երկուքը քաղաքականական, վերնուձական գրախառուրյան մեջ անվանվում է «Արևելքուր կամ «մասնատման սխառնիչ»: Այս առումով իսխա ղնողը էր ղետ 2007 թ. Թուրքիայի ՁՈՒ ԳԵ-ի նախկին պետ (1990-94 թթ.) Գ. Կյուրեյի այն հայտարարությունը, որ «Թուրքիան միշտ պետք է վզան լինել, քանի որ Թուրքիայի համար միշտ առկա է մասնատման վտանգը, ինչը ղանակման մեջ են ԱՄՆ-ը, ղն ԱՄՆ, որոնք համար նախընտրելի է Թուրքիայի վերքայումը: Տես ABD-AB, Türkiye'nin bolunmesini istiyor, Milliyet, 04.11.2007, Dogan Güreş Paşa'dan sok iddia, http://www.ensonhaber.com/gundem/90989/dukan-gures-pasadan-sok-iddia.html Կտտ քուրք- քական ղնկարունների՝ դա մի հարաբարող է Թուրքիայի ղեծ արտաքին ուձերի կողմից, որոնք օգտագործվում են այդ երկրի արտքին գեյուններ ստանալու համար:

²¹ P. Bilgin, նշվ աշխ., էջ 183-185.



Թուրքիայի հիմնական սպառնալիքներ՝ ելնելով այդ երկրների կողմից Թուրքիայի նկատմամբ տարածքային հավակնություններից և բուրավաճ սահմանին ռազմական ուժեր կենտրոնացնելու նրանց ռազմական կարողություններից²²: Նախկինում Թուրքիայի արտգործնախարարության քարտուզարի տեղակալ և Վաշինգտոնում այդ երկրի դեսպան Շ. Էլբերգազն, ամենայն հավանականությամբ, արտահայտելով վիճվորակամտության մտայնությունները, Թուրքիայի նախնական Լուսնաստանը և Սիրիան դատում էր որպես սպառնալիք ներկայացնող երկրներ, որոնք տարածքային հավակնություններ ունեն Թուրքիայից: Ըստ նրա՝ ստորգլխառնագյան շրջակի համեմատ Թուրքիան 90-ական թթ. սկզբին գտնվում էր բազմակողմ ռազմական գործողությունների մեջ ներթաշվելու սպառնալիքի առջև ու պետք է պատրաստ լիներ անհրաժեշտության դեպքում իր հարևաններից որևէ մեկի հետ սպառնական գործողությունների մեջ մտնել: Լուսնայի և ամուր պաշտպանությունն ստիպում էր Թուրքիային ընդունել Էգեյան և հարավային ցածրադեղնում միաժամանակ համարվել, պաշտպանունակ և արագորեն վերականգնվողովելու ունակ ռազմական ուժերի վրա հիմնված ռազմավարություն:

1990-ական թթ. Թուրքիայի ռազմական հաջեցակարգը կառուցված էր այսպես կոչված «երկու և կես» պատերազմի ռազմավարության հիման վրա: Ելող հաջեցակարգի համաձայն՝ Թուրքիան պետք է պատրաստ լիներ լայնածավալ ռազմական գործողություններ զնչ միաժամանակ երկու ճակատներում՝ Էգեյան և հարավային, ինչպես նաև երկրի ներսում²³: Դատելով այդ ժամանակաշրջանի իրավիճակից, ամենայն հավանականությամբ, նկատի էին առնվում հունական և սիրիական ճակատները: Երկրի ներսում ռազմական գործողությունների իրականացումն ուղղված էր բուրգ վիճակների՝ Բրոզական բանգորական կուսակցության (PKK) գրեթեյինների դեմ: Պաշտպանական հայեցակարգի համաձայն՝ բուրքական ՁՈՒ-ը պետք է լինեին լավ մարզված, կազմակերպված, պաշտպանված և իրենց առջև ունենալիս երկու կարևոր խնդիր: Նախ՝ Թուրքիայի ցամաքային գործերն (այսուհետ՝ ՁՏ, բուրք. *Kara Kuvvetleri*) ու օդուժը պետք է ի վիճակի լինեին կանգնեցնել հրետանային զորք հարձակումները երկու ուղղություններից, այսուհետև անցնեին ամուր պաշտպանության: Իսկ գործադիր կորուսներն ու ժամդարձերին, արագ արձագանքման ուժերի վրա

հիմնվելով, իրականացնեին հավաքործողություններ երկրի ներսում: Ռազմական նման պահանջարկն համատեքստում նախատրոնք պետք է Ռոմիայի նկուցում հսկողություն և նախնական պաշտպանություն իրականացնել: Ենթադրվում էր, որ պատերազմը վաղվելու է բուն Թուրքիայի տարածքում, և այդ երկրի ՁՈՒ-ից պահանջվում էր մարտավարական շարժունակություն, մինչևևս բշնամու երկրի խորքերը հասնելու մարտավարությունը վճռական չէր համարվում²⁴: Այն, որ Սիրիայի հետ պատերազմը բավականին հավանական էր այդ տարիներին, հաստատեց Թուրքիայի ՁՈՒ ԳՇ նախկին պետ Յ. Բոյուրբանը 2009 թ. նոյեմբերին ԲԼԵԵԻ համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոնում հնչեցրած իր կողմում, ըստ որի 90-ական թթ. կեսերին, Թուրքիան և Սիրիան գտնվել են պատերազմի շնթին, և բուրքական բանակն ավարտել էր բոլոր պատրաստությունները պատերազմի համար²⁵:

1990-ական թթ. վերջին Թուրքիայի ՏՁ-ի հրամանատար Հ. Բիլիթիբոլուն (որպես ՁՈՒ ԳՇ պետ պաշտոնակարգել է 1998-2002 թթ.) սահմանեց Թուրքիայի նկատմամբ առկա մարտահրավերները, այն է՝ տարածաշրջանային և Երթին հավանաբարությունները, ՁՈՒ-ի տարածումը, կրոնական մալախեղականությունը, քրոնալուրերի շրջանառությունը և միջազգային անհարեկությունը: Խուտափելով տալ կոնկրետ երկրների անուններ որպես Թուրքիային ուղղված սպառնալիքների աղբյուր՝ բարձրաստիճան վիճվորակեց նրոզվել է, որ երկրի բանակը պետք է ի վիճակի լինի պարծել արտարքին և ներքին սպառնալիքների դեմ, որոնք վտանգում են Թուրքիայի տարածքային ամբողջականությունն ու հանրապետական կարգը²⁶: Թուրքական պաշտպանական հայեցակարգում 1990-ական թթ. վերջին սկզբունքային նոր ռազմավարություն հայտնվեց. ըստ որի երկրի ՁՈՒ-ը պատրաստ են լինելու կանգնել Թուրքիայի դեմ հարձակումներն ու սպառնալիքները մինչև բուն բուրքական տարածքին հասնելը: Անկախից պաշտպանական հայեցակարգի «առաջնային պաշտպանության» (*forward engagement*) ռազմավարությունը ենթադրում էր ռազմական գործողությունների սկսման դեպքում դրանք կանխել երկրի սահմաններից դուրս՝ վիճված գործողությունները վիղնարելը բշնամու տարածք²⁷: Թուրքական պաշտպանական նոր ռազմավարության մեջ համընդհանուր ան-

²² M. Robert Hickok, *ibid.*, աշխ.:

²³ Sukru Elekdogdu, 2 ½ War Strategy, Perceptions, *Journal of International Affairs*, Vol. 1, March-May, 1996, <http://www.sain.gov.tr/perceptions/Volume1/March-May1996%21WARSTRATEGY.pdf>

²⁴ M. Robert Hickok, *ibid.*, աշխ.:

²⁵ Sinye ile kazılı savaş hazırlığı, <http://www.haber3.com/turkiye-nusyay-savas-senaryolari-571850.htm>

²⁶ M. Robert Hickok, *ibid.*, աշխ.:

²⁷ Այսին տեղում:

վանագործյան ու պաշտպանության սկզբունքների հետ միասին ներառվել կանխարգելիչ հարվածի (անգլ. *preventive strike*, րուս. *он ahead yarus*) սկզբունքը, որն ընդհանուր առմամբ նախատեսում էր «առաջնային ճակատային պաշտպանություն» և «ճնշմամբային իրավիճակներում ներքին անվտանգության ապահովման համալիր միջոցառումներ»²⁸:

Թուրքիայի ներկայիս պաշտպանական հայեցակարգի հիմքում դրված է այն սկզբունքը, որ Թուրքիան պետք է պատրաստ լինի վարել «1.5 պատերազմի ռազմավարություն»՝ նախկինում դրված «2.5 պատերազմի ռազմավարական» մոտեցման փոխարեն: Այն ներառում է միաժամանակ պատերազմել նր հրե՛ն պետություն հետ և պայքարել իր երկրում ահաբեկչության դեմ՝ նկատի ունենալով բուրժ վրայակերտը: Գնահատելով իրենց շրջապատող պետությունները, ցրանցից բխող վտանգները՝ Թուրքիայում ելել են այն նպակայություն, որ երկու ճանապարհով Թուրքիային պատերազմ չի սպասում: Ի տարբերություն նախկին մոտեցումների՝ Թուրքիան իրական սպառնալիք չի տեսնում ոչ Բալկաններից, ոչ էլ Կովկասի: Ներկայումս բուրժ-հումանական, ինչպես նաև բուրժ-սիրիական հարաբերությունները բավականին բարելավված են և Թուրքիայի համար հավանական վտանգ են համարվում Հյուսիսային Իրաքում ներկա զարգացումները²⁹:

Երբեքևա աշխարհակարգի ավարտից հետո Բալկաններում, Կովկասում և Սերձավոր Արևելքում ուժային վակուումը մեծագրեց զլորալ հավակնություններն ու այդ տարածաշրջանների աշխարհարալաբար կան խոցելիությունը: Թուրքիան, որը գտնվում է Կովկասի, Սերձավոր Արևելքի և Բալկանների մեան՝ անկալում տարածաշրջանների կենտրոնում, իր պաշտպանական րադարականության հիմքում դնում է ազգային անկախության, տարածքային անբողջակամության և երկրի կենսական շահերի պաշտպանությունը³⁰: Թուրքիայի ներկայիս պաշտպանական պաշտպանական րադարականության հոլակած հիմնական նպատակներն են՝ դաժնալ տարածաշրջանային տերություն և տարածաշրջանային հավասարակշռության գործում, տարածաշրջանում խաղողության և կալոնության ապահովման գործում ներդրում ունեցող երկիր, մշակել իր սեփական ռազմավարությունն ու անվտանգությունը, տարրեր պետությունների հետ համագործակցության ու մերձեցման

ողողված նախաձեռնությունների առաջարկում և իրականացում: Ազգային անվտանգության րադարականության նպատակներն են՝ տարածաշրջանում լարվածության րուպանդնը նպատուելը, հավասարությունների խաղաղ կարգավորմանն աջակցելը, ժողովրդավարության ու րենքի նկատմամբ հարգելի ընդլայնումը, անվտանգության և կայուն իրավիճակի հաստատումը³¹:

Գնահատելով տեղեղված նոր աշխարհարալաբարական սրայնաները, միջազգային ու տարածաշրջանային անվտանգության նոր հրահրականները, անվտանգության համապալի և անհամապալի, բազմապալի և րազմակողմ սպառնալիքները՝ Թուրքիայի վիճակագրությունը հստակեցրեց Թուրքիայի անվտանգությանն առնչվող այդ սխեմերը: 2005 թ. Թուրքիայի ՁՈՒ ԳԸ-ի նախկին պետ Հ. Օզդյուրը (ԳԸ պետ՝ 2002-2006 թթ.) րուրական վիճակրական մի անասարին տված իր հարցազրույցում անդրատարձել էր երկրի համար տպառնայից ներկայացող ճարտասիրակերտերին: Իրանը են՝ անջատողական և հետադիմական գործողությունները, միջազգային ահաբեկչությունը, րիսանությունի շրջանառությունը և անօրինական միգրացիան որպես անհամապալի և հարևան երկրներում հնարավոր անկայունությունները, Հյուսիսային Իրաքում անցանկալի իրադարձությունները³², Կովկասում անկայունությունը, ջրի հիմնախնդիրը Սերձավոր Արևելքում և ՁՈՒ-ի տարածումը³³ որպես համապալի սպառնալիքներ³⁴: 2005 թ. իր ելույթներից մեկում Թուրքիայի ՁՈՒ ԳԸ պետի տեղակալ Ի. Բաշդուրը (2008 թ.

²⁸ Almanak Türkiye 2006, <http://www.beygem.gov.tr/YAYINLAR/DMIZ/kitaplar/turkiye2006/turkey/244-245.htm>, s.244
²⁹ Կոնքրետիման զինվորական սառչնի կերքին որպես սպառնալիք նկատի ունի Իրաքի տարածքային անբողջակամության խնայումն ու րոպական պետության ստեղծման հնարավորությունը:
³⁰ Կույտանվարման ժամկետը րամասու կուպուլությունը 2006 թ. պատուների կազմակերպված միջազգային ժամանակ Հ. Օզդյուրը իր կարծում ճարտարական կան սառն սառն միջուկային սպառնալիքի վրա: Ըստ նրա՝ Թուրքիայի համար լավագույն կարևոր սպառնալիք են ներկայացնում այն երկրները, որոնք ունեն կամ պատրաստվում են ունենալ միջուկային զենք և երև հնարավոր չլինի այդ հարաբ. լավել զիմանալուստանակ անուսպարիտ, սառն Թուրքիան կհանդիպի լուրջ մի նպատակարարին: Եթե խաղերով խնդիր չունենան զիսակն Արևմտյան կերպին ներտարարելույն տարածաշրջանում իր ուսպուլարական գերակայությունը: Գնեղադը է մի երկրի ստում չի տալի, տալան իր ստում է, որ խաղը վերարելի է րպանի: Թուրք զինվորականությունը մեկ անգամ ևս կելի, որ զեմ է րպանի միջուկային ջրապակի և ոչ իրտարկելում է որպես սպառնալիք Թուրքիայի անվտանգությանն ու տարուպին: Օզդյուրի կարծիքի հետևում է նաև, որ Թուրքիան նույնուհան կարող է միջուկային զենք ստերել տարածաշրջանային գերակայության կամ գրեմ լավտարաշրջանային պահպանման անխախտադրույնի կենդիվ Տեւ Լ. Օզդյուրյան, Թուրքիան մեկն րու սրայինի սպառնալիքների սառնալի տակ չի րոնկել, <http://www.zaman.com.tr>, 30.08.2006
³¹ Կոնքրետիման հառ, Milliyet, 02.05.2005

²⁹ Ali Kuluhi, Türkiye'nin Askeri Stratejisi, Gücü ve Geleceği, Türkiye Stratejik Araştırmalar Merkezi (TUSAM), 02.08.2004
³⁰ Կոնքրետիման, 28.03.2006
³¹ Տեւ Թուրքիայի ՁՈՒ-ի սպառնալիքական կալոն http://www.tsk.mil.tr/eng/genel_konular/savunmaoluklari.htm

ՋՌԻ ԳԾ պետ) հստակ նշել է, որ Իրանի միջուկային ծրագիրը անհանգստացնում է Թուրքիային, և ընդհանրապես ՋՌԻ-ի տարածումը Մեքսիկոյի Արևելքում Թուրքիայի անվտանգությանն ուղղակի սպառնալիք է ներկայացնում³⁵:

Ընդհանուր առմամբ, ներկայումս Թուրքիայի պաշտպանական ռազմավարությունը հիմնվում է չորս հիմնական սկզբունքների վրա՝

1. *հակազդում*՝ այնպիսի ՋՌԻ-ի պահպանում, որոնք ի վիճակի են ետ նդել Թուրքիայի անվայունության ու անդողության շրջակայքից բխող սպառնալիքները

2. *հակամարտությունների կառավարմանը ռազմական մասնակցություն* և *օժանդակություն*։ Ներգրավվածություն Թուրքիայի անվտանգությանն առնչվող հակամարտություններին, անհամապայուն բյուրոների խաղաղ լուծում դիվանագիտական, նտոնտական և այլ միջոցներով, թուրքական ՋՌԻ-ի պատրաստություն՝ շարվածությունների թուլացման, դրանք զինված բախման վերաժմվելու կանխում և ազնուորի սահմանափակում

3. *առաջնային պաշտպանություն*։ հավանական հարձակման շուտափոյր կանխում և արտաքին սպառնալիքի չեզոքացում

4. *համարական անվտանգություն*։ ակտիվ մասնակցություն և ներգրավվածություն միջազգային և տարածաշրջանային դաշինքներում, կազմակերպություններում և ԱՆՏՕ-ի և Արևմտաեվրոպական միության առաջնորդությամբ։ Այս դույրըը ենթադրում է նաև Թուրքիայի արտաքին քաղաքականությանն ու ազգային անվտանգության սկզբունքներին համապատասխան իր ռազմական ուժերի միջոցով օժանդակություն ցուցաբերել միջազգային կազմակերպություններին, դաշինքներին և առանձին պետություններին, ռազմական ոլորտին առնչվող համագործակցության, տեխնիկական և կրթական օժանդակության ապահովման շարունակականություն³⁶։

Թուրքիայի պաշտպանական հայեցակարգն ու ռազմավարությունը ենթադրում են այնպիսի անվտանգության համակարգի առկայություն, որն ի վիճակի կլինի առավել արդյունավետ արձագանքել և հակա-

հարված տալ ժամանակակից մարտահրավերներին ու արտաքին վտանգներին։ Թուրքական ՋՌԻ-ի բարեփոխումների շրջանակում նեո-տուրականորեն իրականացվում է մարտական հղորդության մեծազման ռազմավարություն բանակի շարժմանկության, կրակային և հարվածային ուժի բարձրացման հիման վրա։ Բանակի ստորաբաժանումների բարեփոխումների արդյունքում նախատեսվում է կրճատել 32-ի թվաքանակը՝ միաժամանակ բարձրացնելով նրա մարտունակությունը և արագ արձագանքման հնարավորությունը։

Թուրքիան, որպես ներառված պաշտպանական ռազմավարության բաղադրիչ, լուրջ ուշադրություն է դարձնում տարբեր հակամարտություններում խաղաղարար գործողությունների իրականացմանն ու ներգրավվածությանը։ Թուրքական ՄՈՒԴ-ը խաղաղարար ուժերի շրջանակում սկսած 1950 ր-ից մասնակցել են հետևյալ գործողություններին։ 1950 թ. կորեական պատերազմին, 1993 թ. Սոմալիում, Բոսնիա-Հերցեգովինայում թունկված կոնֆլիկտներում, 1999 թ. Ալբանիայում, 2001 թ. Մակեդոնիայում, 2006 թ. Լիբանանում։ Ներկայումս Թուրքիան ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Բոսնիա և Հերցեգովինայում (A1.THEA), Կոսովոյում (KFOR), Ալբանաստանում (ISAF), Սուդանի³⁷ արևելյի շրջանում իրականացվող խաղաղարար գործողություններում, ինչպես նաև ռազմական դիտորդական առարկություններում Էսթրոնում, Վրաստանում, Սուդանում և Օլադեստիում³⁸։

Թուրքիայի արտաքին քաղաքականությունն ու անվտանգության ու պաշտպանական ռազմավարության հայեցակարգերը կրում են ինչպես միջազգային ու տարածաշրջանային զարգացումների, այնպես էլ աշխարհաքաղաքական գլոբալիզացիայի և ընդունումների տրամաբանությունը։ Հետաադրատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի անվտանգության վերաբերյալ ռազմարտադարական պատկերացումները բզայի չափով կրում էին «աշխարհագրական դետերմինիստի» ազդեցությունը, որով էլ պայմանավորվում է այդ երկրի առանձնահատուկ շահերն ու անվտանգության կարիքները³⁹։

Թուրքիայի քաղաքականությունն անվտանգության ու պաշտպանության ոլորտում գալախերն կրում է այդ երկրի աշխարհագրական դիրքի ու աշխարհաքաղաքական միջավայրի ազդեցությունը։ Ուստի 1990-ական թթ. կեսերից Թուրքիայի գիտական, քաղաքական քննար-

³⁵ Հետաքրքիր էր նաև այն, որ յոթը զենքային համարային էր տալիս, որ Թուրքիայի հաճադ, առավելապես բարձրագույն փնիթրականության, Իրանի ինտերստատևս ռեժիմը որչ ասումով աննապաստան է Թուրքիային, քանի որ ոչ վաղ անցյալում այդ երկրին օգուտործում էր այն տարածաշրջանում իր ազդեցությունը տարածելու նպատակով։ Տես Lanchon Remarks by General İlker Başbuğ, Deputy Chief of Turkish General Staff, http://www.tsk.tr/eng/koosunat/gukunilcecik_aicokosunatunatogleycmegi_eng_06062005.htm

³⁶ Տես Թուրքիայի Ազգային պաշտպանության նվտարության պաշտպանական կարգը <http://www.msb.gov.tr/Birimler/GnPPD/GnPPDBeyazKtab1Kis2.htm>

³⁷ A1manak Türkiye 2006, s. 246-247, <http://www.byeim.gov.tr/YAYINLAR/IMIZ/Actipilar/turkiye2006/turkey/246-247.htm>, Տես նաև Defence White Paper 2000, Ministry of National Defence of Turkey, <http://www.msb.gov.tr>

³⁸ P. Hilgen, Եվր. այլա, էջ 185-186

կոմենտում սկսեց լայն տարածում գտնել այսպես կոչված «եվրասիական հայեցակարգը»: Կյն ընդունվում է որպես Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, աշխարհաքաղաքական ուսման արտաբերությունն ու ազգային անվտանգությունն արտացոլող հիմնական հայեցակարգերից³⁹: Ուսումնասիրելով քուրդ վեմվորականության աշխարհաքաղաքական հայայրերն ու մոտեցումները, կարելի է ասել, որ «եվրասիական հայեցակարգը» կարևոր տեղ է գրավելում մաս Թուրքիայի վեմվորականության շրջանում: Այդ երկրի պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ, բուրք. *Şavınma Bakanlıği*) կողմից պատրաստված Defence White Paper 2000 փաստաթղթում Թուրքիայի աշխարհաքաղաքական, աշխարհառազմավարական դերին վերաբերող բաժնում նշվում է որ «երբ մայրցամաքները միմյանց միացնող է շատ կարևոր վեմտարանակական նշանակություն ունեցող Թուրքիան միաժամանակ մաս եվրոպական, ասիական, բալկանյան, մերձավորարևելյան, միջերկրածովյան է սեծովյան, ալվի կարճ ասած՝ եվրասիական երկիր է: Թուրքիան այդ եվրասիական գոտում գտնվելով կենտրոնական դիրքում քաղաքական, անվտանգության է անասական առումով մեծ դերակատարություն է նշանակություն է մեծ քերբե⁴⁰: Բարձրաստիճան վեմվորականները կիսում էին քաղաքական գործիչների այն մոտեցումը, որ Թուրքիան եվրասիական երկիր է է սկտը է իրականացնի համարժեք քաղաքականություն: 1999 թ. ելույր ունեցելով «աշխիճգտնում» Թուրքիայի պաշտպանության նախարար է Սամի Թուրքը նշել է «Շրջապատված լինելով երեք ծովերով է միմյանց կապելով երկու մայրցամաքները՝ Թուրքիան եզակի է աշխարհագրորեն ռազմավարական դիրք է գրավում: Թուրքիան ոչ միայն իր հայայրն ուղղել է դեպի Արեւուտը, այլ մաս ավանդական կապել է պահպանում մահմեդական երկրների հետ: Նրա արժանուները գնում են Կեմերոնական Ասիա, Աերձավոր Արևելք, Անատոլիա է եվրոպա: Թուրքիան եվրասիական երկիր է»⁴¹: Թուրքական բանակի բոշակառու վեմերալ Ա. Էրգյուվենչն իր հողվածում անդրադարձել է Թուրքիայի

³⁹ Թուրքիայում «եվրասիա» հասկացություն չորք քաղաքական մոտեցումների մասին ավելի մանրամասն տես Ruben Safirasyan, The Concept of Eurasia and Turkey's Regional Strategies, 24 03 2005, <http://www.globalpolitician.com/2761-turkey>

⁴⁰ Defence White Paper 2000, <http://www.msb.gov.tr/Birimler/GolPDD/GolPDDByayzKBo11Ki2.htm>

⁴¹ Hakmet Sami Turk, Turkish Defense Policy, The Washington Institute For Near East Policy, March 3, 1999, <http://www.washingtoninstitute.org/moda/samiturk.htm> (Հայտնիք Էջերի վեմվորված կատարությունում 1999 թ. հունվարից մինչև նոյն թվականի մայիսը գրաւելով է պաշտպանության նախարարի պաշտոնը, սկից հետո դարձել արքայազատարար)

աշխարհագրական-ռազմավարական դիրքին՝ ընդգծելով, որ աշխարհագրական դիրքն ու ռազմական ներուժը կազմում են երկրի ռազմական ու ռազմավարական արժեքը: Թուրքիայի աշխարհագրական դիրքը դիտվում է որպես «նախանձելի ռազմավարական-ռազմական արժանիք»: Կյն հնարավորություն է տալիս Թուրքիային գործել որպես վեմական փոխարամիջոցների կամուրջ կամ խոչընդոտ է պատկովլ բեմական ռեսուրսներին հասնելու ամենախելտ է կարճ ճանապարհի: Թուրքիան կարող է ազդեցություն գործել իր անմիջական տարածաշրջանների նկատմամբ: Նճան աշխարհագրական դիրքը կարող է ատավելություն դիտվել, սակայն անհրաձեշտության դեպքում պահանջում է ռեժել պաշտպանուեմություն (ռազմական ուժեր)⁴²: Սեկ այլ վեմերալ՝ Սուրա Իչանը, Թուրքիան անվանում էր որպես «սասմանների երկիր»⁴³:

Թուրքիայի ՁՈՒ ԳԵ-ի Գլխավոր պլանավորման է սկզբունքների մշակման դեպարտամենտի ղեկավար, վեմերալ-շեյտեմանտ Հ. Արըն Մուրդի բնորոշմամբ, Թուրքիան իր վեմտարանակական դիրքով լիեկով եզակի երկիր, գտնվելով երեք մայրցամաքների «խաչմերուկում», հանդիսանալով էներգետիկ տարանցիկ տարածք, միաժամանակ երաշխավորված շիինելով այդ տարածաշրջաններից եկող տարբեր մարտահրավերների ու սպառնալիքների նկատմամբ, հարկադրված է ունենալ 21-րդ դարի ռազմական ու քաղաքական պահանջներին համապատասխանող ՁՈՒ⁴⁴: 2009 թ. դեկտեմբերին Տրայպիզոնում կայացած մամուլ ատուլիսի ժամանակ Թուրքիայի ՁՈՒ ԳԵ պետ Ի. Բաշբուրը նշել է. «Աեր երկրի շրջակայքը ի է խնդիրներով է այդպիսի աշխարհագրության մեջ գտնվող ոչ իզոլ պետությունները կեմսունակ չեն: Ազգային իզոլություն է հիմնական սկզբունքներից մեկը ռազմական

⁴² S. Ergüvenç, նշված աշխ:

Թուրքիայի Սահմանադրության 104-րդ հոդվածի համաձայն՝ երկրի նախագահը հանարվում է ՁՈՒ-ի փերագլոյն երամանատարը, որն իրավունք ունի որոշում կայացնել ՁՈՒ-ի կիրառման վերաբերյալ: Նախագահն է նշանակում ՁՈՒ պիսավոր շտաբի պետին, երավերան և նախագահում Ազգային անվտանգության խորհրդի նիստերը: Ըստ 92-րդ հոդվածի՝ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի (այսուհետ՝ ԹԱՄԺ, բուրբ. *Türkiye Büyük Millet Meclisi*) իրավասությանն է պատկանում պատերազմ կամ պատերազմական դրություն հայտարարելը, բուրբակական ՁՈՒ-երը այլ երկրներ ուղարկելը և այլ երկրների ՁՈՒ-ին երկրի անարժույթում գտնվելու բույլուկությունը: Նույն հոդվածի համաձայն, երբ ԹԱՄԺ-ը գտնվում է արձակուրտում կամ հնարավոր չէ այլ մարմնի հրատապ որոշումը, ապա ՁՈՒ-ի կիրառման մասին կարող է որոշում կայացնել երկրի նախագահը:

117-րդ հոդվածն ամրագրում է, որ կառավարությունը վարչապետի պիսավորությանը երկրի անվտանգության ու պաշտպանության համար պատասխանատու է ԹԱՄԺ-ին: ՁՈՒ ԳՇ պետը հանդիսանում է ՁՈՒ-ի իրամանատարը և պատերազմի ժամանակ երկրի նախագահի անունից իրականացնում ՁՈՒ-ի պիսավոր երամանատարությունը: ԳՇ պետին կառավարության տաքայրերությանը նշանակում է երկրի նախագահը, իսկ նա իր պատասխանությունների ու գործողությունների համար պատասխանատու է վարչապետին: ՁՈՒ ԳՇ-ը իրականացնում է ՁՈՒ-ի ընդհանուր կառավարման ու իսկողությունը, մարտական

պատրաստվածությունը, պատերազմական կամ խաղաղ ժամանակաշրջանում գործերի սպերատիկ կառավարումը: Ազգային պաշտպանության նախարարությունը իրականացնում է գորակոչ և ՁՈՒ-ի հանայությունը, քանակի թիկունքային ապահովմանն ու աներաժեշտ սպանական տեխնիկայի ու սպասարկության ձեռքբերման, սպանական արդյունաբերության զարգացմանն ու վերահսկողության գործառույթներ: ԳՇ-ի, ՊՆ-ի և գորբերի տեսակների իրամանատարությունների միջև հարաբերություններն ու լիազորությունների շրջանակը սահմանվում է հատուկ օրենքով⁶⁹:

Աղյուսակ 3



Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման գործում մեծ կարևորություն է տրվում տարբեր գիտակրական հաստատությունների և ռազմարդյունաբերական ընկերությունների միջև կապի ապահովմանն ու համատեղ փոխգործակցությանը: Ռազմարդյունաբերական ընկերությունների, տարբեր կառույցների անճակագրի կատարելագործման և ռուսցման նպատակով ՊՆ-ի ենթակայությանը գործում է Ռազմական արդյունաբերության և տեխնոլոգիական կրթության կենտրոնը (բուրբ. *Savunma Sanayi ve Teknoloji Eğitim Merkezi*)⁷⁰:

⁶⁷ Savunma Sanayi Müstevarlığı Stratejik Planı 2007-2011, Stratejik Yol Haritası, 2007, http://www.ssm.gov.tr/TR/Anasayfa/Documents/SSM_SF_2007_2011.pdf
⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ Türkiye Cumhuriyeti Anayasası, <http://www.anayasa.gen.tr/1982ay.htm>
⁷⁰ <http://www.msb.gov.tr/birimler/>

Ռազմաարդյունաբերության զարգացման նպատակով համապատասխան բնագավառում գիտական և տեխնոլոգիական բաղաբաղանդությունն ու մշակումներն իրականացնում է Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը (TÜBİTAK), որը կատարում է նաև հետազոտություններ ու զարգացման նախագծեր տարբեր բնագավառներում⁹¹։

Ներկայումս բուրբական ռազմաարդյունաբերության ոլորտում գործում են մի քանի տասնյակ մասնավոր և պետական ընկերություններ, որոնց մեծ մասը միավորված են Պաշտպանական արդյունաբերության արտադրողների միության (SaSAD) և Ռազմաարդյունաբերողների միավորման (SADER) շրջանակներում, որոնք համակարգում են այդ ընկերությունների ավելի արդյունավետ գործունեությունը։ Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության արտադրողների միությունը միաժամանակ հանդիսանում է նաև Եվրոպական ռազմաարդյունաբերական խմբի (*European Defence Industry Group*) անդամ⁹²։

SaSAD-ը հիմնադրվել է Թուրքիայի ՊՆ-ի առաջարկով ու հովանավորությամբ 1990 թ., որի նպատակը երկրում ռազմաարդյունաբերական ընկերությունների համախմբումն ու նրանց միջև ակտիվ համագործակցության ապահովումը, այդ ոլորտում մրցունակության ու որակի բարձրագույնը աջակցելն է։ Հիմնադրման ժամանակ միությանը անդամակցել է ընդամենը 12 ընկերություն։ 2009 թ. դուրյամբ միությանը անդամակցում են շուրջ 100 ընկերություններ ու հաստատություններ։ Միությանն անդամակցում են բուրբական խոշորագույն այնպիսի ընկերություններ, ինչպես ASELSAN-ը, ROKETSAN-ը, Alp Havacilik-ը, FNSS-ը, Otokar-ը, MKEK-ը, MILSOFT-ը։ Միության գործառնությունն է նաև բուրբական տեղական ռազմաարդյունաբերության ներկայացուցչի համաշխարհային ռազմական շուկայում և միջազգային ոլորտում համագործակցության շրջանակների հաստատումը⁹³։

Թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություններն ըստ ոլորտների ու կազմակերպման ձևի

	Պետական ընկերություններ		Մասնավոր ընկերություններ	Արտասահմանյան համառոտ ընկերություններ
	Ռազմական գործարաններ	Ընկերություններ		
Օդային միջոցներ	Եվրոլենդի և Կաստրիի ուղևորության տեխնիկական պատարկման կենտրոն	TUSAS	BAYKAR MAKINA BÜYÜKORHÇI GLOBAL.	TUSAS MOTOR (TEI) ALP HAVACIJEK
Շանգային միջոցներ	Արվիթի, Թոնգուլ և Կաստրիի ռազմատեխնիկական պատարկման կենտրոն	İSIR	OTOKAR BMC HEMA NUKOL	FNSS MTU-TR
Մակային միջոցներ	Ղյուշլյուի, Մուսթոֆի, Իգմիշի ռազմական գործարաններ		Թուրքուսի (ավազի-մական ձևաարկություն)	YILDIZ
Էլեկտրոնային սարքավորումներ	Անկորայի ռազմաօդային տեխնիկական պատարկման կենտրոն, 252 կրամանաարդյունաբերական ռազմատեխնիկական պատարկման կենտրոն	ASELSAN HAVELSAN STM MKEK EHISIM TUBITAK UEAKE TUBITAK MAM	GATE MILSOFT SAVRONIK VESTEL SAVUNMA KOC-SYSTEM METEKSAN	AYESAŞ SELEX METAS SIEMENS ESDAŞ VELTES
Հրթիռային, երեսմային միջոցներ	252 կրամանաարդյունաբերական ռազմատեխնիկական պատարկման կենտրոն, Կայսերի և Անկարայի ռազմաօդային տեխնիկական պատարկման կենտրոն	MKEK ROKETSAN TUBITAK- SAFE TAPASAN	KALEKALIP SARSILMAZ BARIS GIRSAN TISAS	STOEGER

Աղյուսակ Savunma Sanayi Müsteferligi, 2009 Performans Programı, s.12

Ռազմաարդյունաբերական ընկերություններն ու գործարանները հիմնականում գտնվում են երկրի արևմտյան և կենտրոնական շրջաններում, ինչը պայմանավորված է Թուրքիայի այդ շրջաններում առավել զարգացած արդյունաբերական և տնտեսական զարգացած ենթակառուցվածքներով, ինչպես նաև գիտական-մտավոր ներուժի բազմա-

⁹¹ 1963 թ. հիմնադրված այդ պետական գործակալությունը հիմնականում տնտեսական և տեխնոլոգիական զարգացման ոլորված ծրագրեր է իրականացնում և գործում է որպես բուրբական կառավարության կից խորհրդակցական ժողովի գիտական-տեխնոլոգիական ոլորտում։ Ինտերդին պատվանդ 15 տարբեր հետազոտական ինստիտուտներում աշխատում են շուրջ 1000 մասնագետներ։

⁹² Տե՛ս Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդի կայք՝ <http://www.tubitak.gov.tr>

⁹³ <http://www.msb.gov.tr/birimler/>

⁹⁴ <http://www.sasad.org.tr>

արքայազմը: Ուզմանարդյունաբերական ընկերությունների ու գործարանների շուրջ 80 %-ը գտնվում է ԱՆԿարայում և Ստամբուլում:

ՅՁ-ի, ՌՕՌԻ-ի ու ՌՃՌԻ-ի զարգացման առանձին հիմնադրամները 1987 թ. միավորվեցին որպես Թուրքիայի ԱՌԻ զարգացման հիմնադրամ (թուրք. *Türk Silahı Kuvvetleri Geliştirme Vakfı*), ինչը ֆինանսական աջակցություն էր ապահովում ԱՌԻ-ի զարգացման ծրագրերին: Նույն թվականին ԹԱՄԲ-ի ընդունած օրենքով այդ հիմնադրամը ազատվեց բոլոր տեսակի հարկային պարտավորություններից: 1987 թ. այն միավորում էր 16 ընկերություն: 2001 թ. Թուրքիայի 500 ամենախոշոր ձեռնարկությունների ցանկում ընդգրկված 6 ընկերություն պատկանում էին այդ հիմնադրամին: 2002 թ. հիմնադրամի եկամուտը կազմել է 700 մլն դոլար, որի հիմնական մասը ծախսվել է ԱՌԻ-ի արդյականացման ու ռազմաարդյունաբերության զարգացման նպատակով⁹⁴:

Հիմնադրամը յուրք դերակատարություն ունի ռազմական արդյունաբերության զարգացման ու ծրագրերի իրագործման ոլորտում: Բացի այդ, հիմնադրամի կողմից Թուրքիայում կազմակերպվում են տարեկան ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսներ, որի նպատակը բուրբակային ռազմաարդյունաբերության ներկայացումն է միջազգային ռազմատեխնիկական շուկայում: Նման ցուցահանդեսները կազմակերպվում են 1993 թ. սկսած՝ ՊՆ-ի աջակցությամբ: 1993 թ. միև 2009 թ. Թուրքիայում կազմակերպվել են 9 լայնամասշտաբ ցուցահանդեսներ: Նման ցուցահանդեսների կազմակերպումը ոչ միայն հնարավորություն է տալիս ներկայացնել բուրբակային ռազմաարդյունաբերական արտադրանքը, այլ նաև յուրք հարթակ է հանդիսանում Թուրքիայի ու տարբեր երկրների ու ընկերությունների միջև ռազմատեխնիկական ու արդյունաբերության ոլորտում նոր սպայամագրերի ու նախագծերի ստորագրման համար: Վերջին տարիներին տարբեր երկրներ ձեռք են հետաքրքրություն են դրսևորում այդ ցուցահանդեսների նկատմամբ⁹⁵:

2007 թ. ցուցահանդեսին ներկայացված է եղել ավելի քան 494 պատվիրակություն 48 երկրներից, այդ թվում արտերկրների 10 պաշտպանության նախարարներ, 4 գլխավոր շտաբի պետեր, առանձին զորատեսակների 20 հրամանատարներ և այլն: Ցուցահանդեսի շրջանակներում ստորագրվեցին մի շարք համագործակցության նախագծեր բուրբակային ու արտերկրների մի շարք ընկերությունների միջև: Մաս-

նավորպես, բուրբակային FNSS ու Հորդանանի KADDB ընկերությունների միջև ստորագրվեց հորդանանյան բանակին մարտական ներկաների տրամադրման ու բանակում առկա ներքնաների արդիականացման վերաբերյալ փաստաթուղթ, այժմնապարտություն բուրբակային ու հարավկորեական ընկերությունների միջև՝ Կորեայի ՌՕՌԻ-ի հիմնադրամի և Կեթրայի համակարգի վերաբերյալ, ինչպես նաև միջազգային ու տեղական ռազմաարդյունաբերական նախագծերին բուրբակային ու արտասահմանյան ընկերությունների համագործակցության մասին շուրջ 3 տասնյակ սպայամագրեր⁹⁶:

2009 թ. ապրիլին Թուրքիայում անցկայացվեց IDEF 2009 Ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսը, որին մասնակցում էին 45 երկրների շուրջ 283, ինչպես նաև տեղական 178 ընկերություն: Բաղկանման մեծ թվով ընկերություններ էին ներկայացված հատկապես ԱՄՆ-ից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, ինչպես նաև Հարավային Կորեայից, Արաբական Միացյալ Էմիրություններից (այսուհետև՝ ԱԷԷ), Շվեդիայից, Չինաստանից և այլ երկրներից: Ցուցահանդեսին մասնակցում էին այնպիսի համաշխարհային առաջատար ընկերություններ, ինչպես օրինակ՝ Boeing-ը, General Dynamics-ը, Lockheed Martin-ը⁹⁷:

Թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունները բաղկանման ակտիվորեն մասնակցում են միջազգային տարբեր ռազմական ցուցահանդեսներին, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն ներկայացնել բուրբակային ռազմաարդյունաբերության հասցողությունները, այլ նաև շահավետ պայմանագրեր ստորագրել տարբեր նախագծերի վերաբերյալ: Միայն 2008 թ. ընթացքում Թուրքիան ներկայացվել է 3 միջազգային նմանատիպ ցուցահանդեսներում, ստորագրել համադրական մի շարք սպայամագրեր:

Աղյուսակ 5

Ռազմաարդյունաբերական ցուցահանդես	Վայրը	Տարին և ամսվորը	Մասնակցած բուրբակային ընկերությունների քանակը
SOFEX 2008	Հորդանան	Մարտ-ապրիլ 2008	20 ընկերություն
DSA 2008	Մադագիսկար	Մայիս 2008	36 ընկերություն
IDEAS 2008	Պոլիտանո	Նոյեմբեր 2008	25 ընկերություն

⁹⁴ Ա. Ազալյան, Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հարկանք ցանկ, թիվ 4, 2006, էջ 67

⁹⁵ A STATEMENT by TAFI, Defence Turkey, Vol 2 Issue: 7 Year: 2007.

http://www.defence-turkey.com

⁹⁶ Savunma Sanayi Gündemi, Ekim 2007, Sayı 2, s. 82-86

⁹⁷ IDEF- rekor katılmı, Milliyet, 28.04.2009

Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարությունն ու կարևոր սկզբունքներն իրենց արտացոլումը գտան 1998 թ. մայիսի 25-ին թուրքական կառավարության կողմից հաստատված «Թուրքական ռազմական արդյունաբերության քաղաքականության և ռազմավարության հիմնարկային» փաստաթղթում (*Türk Savunma Sanayii Politikası ve Stratejisi Esasları*)⁹⁸։ Փաստաթուղթը վերաբերում է ռազմական արդյունաբերության զարգացման ռազմավարությանն ու սրատափերության ապահովման հիմնական սկզբունքներին, ուստի կարևոր է անդրադառնալ դրանցից մի քանիսին: Ռազմական արդյունաբերության զարգացման ռազմավարությունն իրականացվում է երկրի ռազմական հայեցակարգի ու ռազմական պլանավորման ու ծրագրավորման գերատեսչական դիրեկտիվների հիման վրա⁹⁹:

Ռազմաարդյունաբերական քաղաքականությունը նախատեսում է տեղականի հետ միասին նաև օտար հատվածի համար թաց, դինամիկ կառույցով, արտահանման հնարավորություններով օժտված և միջազգային շուկայում մրցունակ, նորագույն տեխնոլոգիաներին հարմարեցված և տեխնոլոգիաներ արտադրելու հնարավորություններով օժտված, տեխնոլոգիական զարգացումների համապատասխան սեփական կարողությունները ապահովող, Թուրքիային բարեկամ կամ դաշնակից երկրների հետ համատեղ ռազմաարդյունաբերական կայուն համագործակցությունը հնարավոր դարձնող և տարբեր քաղաքական իրավիճակներից նվազագույն չափով ազդեցություն կրող ռազմական արդյունաբերության կառույց¹⁰⁰:

Ռազմաարդյունաբերության ռազմավարական հիմնարկայիններն են. որպես երկրի անվտանգության քաղաքային՝ թուրքական ՋՌԻ կարիքների կայուն ապահովում, այդ մաստակով քայքայ տեխնոլոգիաներին պատկանող ռազմական միջոցների և զինամուսնակների տեղական ճշակումներ ու արտադրություն, արտադրական տեխնոլոգիական ու նյութական լայն թափայի ստեղծում և ազգային ռազմաարդյունաբերության ներակառուցների ընդլայնում, տեղական հիմքի վրա սեփական տեխնոլոգիաների երկարաժամկետ զարգացում, մասնակցություն միջազգային ռազմաարդյունաբերական նախագծերին, տե-

ղական և օտարերկրյա մրցակցության համար թաց ռազմական արդյունաբերության ներակառուցների զարգացում:

Թուրքիայի ռազմական արդյունաբերության զարգացումն իր մեջ պարունակում է ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական նպատակներ, քանի որ թուրքական ընկերությունների ներգրավումը արդյունաբերության մեջ լուրջ նշան կհանդիսանա ընդհանրապես երկրի արդյունաբերական զարգացման համար, կնվաստի այդ ոլորտում գիտական և տեխնոլոգիական նորագույն ճշակումներին: Ռազմաքաղաքական առումով այն հնարավորություն կտա Թուրքիային դառնալ տարածաշրջանային տերություն և թարձարացնել միջազգային հեղինակություն¹⁰¹: Ռազմական արտադրանքի արտահանումը ոչ միայն ֆինանսական եկամուտներ ապահովի, այլ ավելի շատ ռազմավարական, ռազմաքաղաքական առավելություն կունենա Թուրքիայի համար¹⁰²:

Թուրքիայի ռազմական արդյունաբերական ծրագրերն ու ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը թացի զուտ ռազմական նպատակներից, Թուրքիայի համար նաև կարևոր արտաքին քաղաքական լծակներ են ապահովում: Մի կողմից այդ քայլերն ուղղված են նվազեցնել Թուրքիայի կախումը արտաքին մատակարարներից, մյուս կողմից էլ խոշոր ռազմական պայմանագրերն ու հայտաճրկումները Թուրքիայի համար արտաքին քաղաքական նպատակների իրականացման լուրջ գործիք են դառնում¹⁰³:

1990-ական թթ. կեսերին արդեն հասավ քայլեր էին ձեռնարկվում երկարաժամկետ լայնածավալ ծրագրերի իրականացման ուղղությանը: Մյուս կողմից շրջանակներում թուրքական բանակին ու ռազմական արդյունաբերությանը մինչև 2007 թվականը նախատեսվել էր հատկացնել շուրջ 27 մլրդ դոլար¹⁰⁴: Մինչև 2007 թվականը ծրագրի իրականացումը կարելի է դիտել որպես թուրքական ՋՌԻ-ի արդյունաբերական կարճաժամկետ գործողություն: 1998 թ. թուրքական իշխանությունները երկարաժամկետ և հեռանկարային բավականին հավակ-

⁹⁸ Savunma Sanayii Politikası ve Stratejisi, Vizyon 2023 Projesi, Savunma, Havacılık ve Uzay Paneli, Panel Raporu, Ek-12, TÜBİTAK, 2003.

⁹⁹ <http://www.vizyon2023.habikak.gov.tr/tek/nolojiogorusu/panelcer/savunmaazayvehavacilik/raporlar/son-EK-12.pdf>

¹⁰⁰ Լույս տեղում:

¹⁰¹ Savunma Sanayii Politikası ve Stratejisi, Vizyon 2023 Projesi...

¹⁰² Savunma Sanayii Hedefleri, Savunma, Havacılık ve Uzay Paneli, ÖN RAPORU, Vizyon 2023 Projesi, Ek-4.

¹⁰³ http://www.vizyon2023.habikak.gov.tr/tek/nolojiogorusu/panelcer/savunmaazayvehavacilik/raporlar/SHU_EK4.pdf

¹⁰⁴ Տես FNSIS ընկերության գլխավոր տնօրինի գեկույցը «ՄԱԼԷ-ի հիմնադրման 20-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսում» <http://www.ssm.gov.tr>

¹⁰⁵ Elliot Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol 8, No 4, (December 2004) p 50

¹⁰⁶ А. Гурьев Турция—Израиль: по пути укрепления военного сотрудничества. <http://www.imes.ru/ras/stat/2006/24-01-06.htm>

նուս ծրագիր առաջ քաշեցին՝ հատուտակելով ՋՈՒ-ի արդիականացման, որդեգրված սպառազինության ձեռքբերման համար 25 տարվա շրջանակներում ներդնել շուրջ 150 մլրդ դոլար: Նախատեսված է այդ ներդրումների մի գզայի հատվածն ուղղել երկրի ներսում բանակի կառուցման և պահպանմանը և լուրջ դերակատարություն տալ բուրգակեր ռազմաարդյունաբերական համալիրին¹⁶⁵:

Թուրքիայի ռազմական արդիականացման հիմքերը դրվեցին հատկապես 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի իրադարձություններից հետո, բանի որ Թուրքիայի զինվորական շրջանակները պարզ հասկացան, որ երկրի ՋՈՒ-ն իրենց բոլը և արդեն հնազանդ սպառազինության չեն կարող դիմագրավել 21-րդ դարի մարտահրավերներին¹⁶⁶:

Արդիականացման ռազմավարության հիմքում էական և հիմնական դերակատարություն է տրվում երկրի ռազմաարդյունաբերական համալիրին: 1996 թ. բուրգական ռազմական արդյունաբերության ընկերությունների ներկայացուցիչների հետ Թուրքիայի նախագահ Ա. Գեմիլընի անցկացրած խորհրդակցության ժամանակ մանրամասն ուսումնասիրվել են ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանն ուղղված հետագա պլանները, որի արդյունքում ՊՆ-ի կողմից մշակվել է այդ ուղղությամբ իրականացվելիք թափերի վերաբերյալ առանձին փաստաթուղթ¹⁶⁷:

Երբ 1996 թ. բուրգական ռազմաարդյունաբերական համալիրի կողմից իրականացվում էին շուրջ 45 ռազմական նախագծեր, ապա 2006 թ. բուրգական ռազմաարդյունաբերական նախագծերի թիվը կազմում էր 110՝ 15 մլրդ դոլար ընդհանուր արժեքով¹⁶⁸:

2005 թ. նյութերի բուրգական մամուլի տեղեկատվության համաձայն՝ Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն որոշել է ուժեղացնել երկրի թիկունքային ներակառուցվածքները, ինչի համար մտադիր է առաջիկա 10 տարվա ընթացքում 50 մլրդ դոլարի ներդրում ապահովել այդ ոլորտում: Հիմնականում պաշտպանական հիմնադրամի հաշվին կատարվելիք այդ ներդրումների շարքում են ապագայի ռազմական ուղղափոխներ համարվող ATAK կոչված 50 միավոր մարտավարական-հարվածային ուղղափոխների և

¹⁶⁵ Makina Inalat Sanayiye Özel İhtisas Komisyonu Raporu, Sekizinci Bes Yıllık Kalkınma Planı, Ankara 2000, <http://ckulup.dpt.gov.tr/makina1/nik552.pdf>, Erdal İpekesen, Yeni savunma sanayi profili, http://www.icmpodcizisi.com.tr/kose/erdal_ipekesen05665/

¹⁶⁶ E. Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, p. 30

¹⁶⁷ А. Косинков, Вооружение и боевая техника Турции // Восточноевропейский сборник. Вып. 2, М., 2001, стр. 212-217.

¹⁶⁸ Savunma Sanayiye Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, <http://www.ssm.gov.tr>

AWACS ինքնաթիռների ձեռքբերումը¹⁶⁹:

Թուրքիայի կապալառուական ծրագրերում տեղ են գտել հետևյալ նախագծերը. ապագայի ռազմական ինքնաթիռների, 50 միավոր մարտավարական-հարվածային ուղղափոխների ձեռքբերում, ՋՈՒ-ի համար 50 միավոր ընդհանուր օգտագործման ուղղափոխների ձեռքբերում, Leopard 1 տիպի տանկերի արդիականացում, Sar-35 ռազմական նավերի արդիականացում, ստորջրյա և վերջրյա հսկողության և ստիճանման համակարգերի ներդրում, ինչպես նաև անօդաչու ինքնաթիռների, նոր տեսակի ոստիկանական-պարեկային, ստորջրյա պաշտպանական, մարտական, հետախուզական ոստիկանական և արվանձնո տարածքների անվտանգության ապահովման և որոնողակիրարական նավերի ձեռքբերման նախագծերը¹⁷⁰:

Ներկայումս գործողության մեջ է ՋՈՒ ԳՀ-ի հավանությանն արժանացած «ՊԼԳ-Վ-ի 2007-2011 թթ. ռազմավարական պլանը», որը հատկացնում է ռազմաարդյունաբերության զարգացման ու բանակի արդիականացման համար իրականացվելիք ողջ ռազմավարական ծրագրերը և առաջնահերթությունները: Ըստ այդ ռազմավարական ծրագրի՝ երկրի ռազմատեխնիկական կարիքների ապահովման առումով առաջնահերթությունը տրվում է տեղական հիմքի վրա մշակումներին ու արտադրական գործընթացին: ՋՈՒ-ի արդիականացմանն ու ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված թաղարական ուղղությունը կիրառում է 3 մոդել:

տեղական արտադրություն. որտեղ առաջնահերթությունը տրվում է բուրգական ընկերությունների կողմից նախագծերի մշակմանը և արտադրական բազայի ընդլայնմանը:

համատեղ կամ կոնտրոլիտմային արտադրություն. որտեղ, արդյունավետությունից ելնելով, կիրառվում է այլ երկրների կամ ընկերությունների հետ համատեղ մշակումների գործողություններ:

ուղղակի գնումներ կամ համատեղ արտադրություն. ինչը ենթադրում է պատրաստի արտադրանքի ձեռքբերում կամ համատեղ արտադրություն, որտեղ մասնակցում են բուրգական ընկերություններն ու ֆինանսական կապիտալի ներդրումները¹⁷¹:

¹⁶⁹ Akşam, 21.11.2005

¹⁷⁰ Նույն տեղում:

¹⁷¹ Savunma Sanayiye Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011...


ՊԱԳՎ-ի կազմից իրականացվող և 2008 թ. ընթացքում ստորագրված մախակների իրականացման մոդելը




Ուսումնարարությունների կողմից շուրջ 30%-ը գործում են էլեկտրոնային, տեղեկատվական համակարգերի, 28%-ը՝ պլատֆորմի և համակարգերի ինտեգրացման, 4%-ը՝ ծրագրային ապահովման, համակարգչային և վարժասարքերի, 4%-ը՝ իրամանատարական հսկման և կառավարման համակարգերի, 19%-ը՝ տարբեր տիպի զինամթերքի, հրետանային համակարգերի ու այլ սպառազինության արտադրության ոլորտում և այլն¹¹²:

Մեծ կարևորություն է տրվում թուրքական ռազմական արտադրանքի արտահանմանը և այդ ուղղությամբ իրականացվելիք քայլերին: Վերջին տարիներին Թուրքիայի ռազմական արդյունաբերությունը գրանցել է հաջողություններ մաև ռազմական արտադրանքի արտահանման ծավալների առումով: ՊԱԳՎ պետ Մ. Բայարը հայտարարեց, որ մինչև 2011 թ. մախատեսվում է թուրքական ռազմարդյունաբերական արտադրանքի տարեկան արտահանման ընդհանուր ծավալը հասցնել 1 մլրդ դոլարի: 2007 թ. դրությամբ այն կազմել է շուրջ 420, իսկ 2008 թ.՝ ավելի քան 570 մլրդ դոլար¹¹³:

Թուրքիայի ռազմարդյունաբերական արտադրանքի արտահանման ընդհանուր ծավալները (մլն \$)



Թուրքական ռազմարդյունաբերական արտադրանքի արտահանումն ըստ երկրների տեղաշին հարաբերակցությամբ



Աղբյուրը՝ Savunma Sanayii Gündemi, 2009/1, N.7, s. 65

2006-2007 թթ. ընթացքում արտահանման ծավալներով աչքի են ընկել հատկապես Otokar, TUSAŞ, TEI, HAVELSAN, ROKETSAN և մի քանի այլ ընկերություններ, որոնք հանդիսանում են ռազմարդյունաբերության առաջատարները: Ուսումնական արտադրանքի արտահանման

¹¹² Savunma Sanayii İhracatında Sorunların Belirlenmesi için Anket Uygulaması ve Değerlendirmeler, Savunma Sanayii Gündemi, 2009/1, Sayı 7, s. 63

¹¹³ <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/20081121.aspx>; Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, s. 16, <http://www.ap.gov.tr/documents/planlar/SSMSP0711.pdf>

ման տեսակարար կշռում գերիշխում են հատկապես ռազմական մեքենաշինության և Լեկտրոնային, կապի համակարգերի ոլորտները¹¹⁴:

Աղյուսակ 8

2006-2007 թթ. ամենաշատ արտահանումն իրականացրած յուրրական ռազմաարդյունաբերական ընկերությունները (\$ մլն)

Ընկերություններ	2007	2006
Otokar	75 929	100.000
TEI	59 742	50.900
TUSAŞ	55.805	36.272
Hevelian	52.272	26.442
Roketsan	30.501	19.046
FNSS	19.742	11.817
Ascham	19.300	8.422
Yakapoglu	17.048	5.906
MKJ.K	12.196	4.946
Mercedes	9.566	76

Աղբյուրը Türk Savunma Sanayisi-Sektör Raporu 2008

Համեմատության համար նշենք, որ 2006 թ. Իսրայելի ռազմական արտադրանքի արտահանման ծավալները կազմել են 4,5 մլրդ դոլար, որով Իսրայելը դարձավ աշխարհի 5-րդ ռազմական արտադրանք արտահանող երկիրը՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից հետո: Իսրայելական ընդհանուր ռազմական արտադրանքի շուրջ 75 %-ը արտահանվում է, և միայն 25 %-ն է բաժին հասնում այդ երկրի ՋՈՒԻ-ին¹¹⁵:

¹¹⁴ Türk Savunma Sanayisi Sektör Raporu 2008, s. 36, http://www.sasad.org.tr/dosya/eoc/SR-08-16-03-09_v5.pdf

¹¹⁵ Israel's Defense Exports Reached \$4.4B in 2006, <http://www.defenseindustrydaily.com, 11.01.2007>

Համաշխարհային առաջատար 15 ռազմաարդյունաբերական ընկերությունների 2007 թ. իրականացրած վաճառքի ցուցանիշները

Ընկերություն	Երկիր	Մլն \$
Lockheed Martin	ԱՄՆ	38 513
Bosong	ԱՄՆ	32 080
BAE Systems	Մեծ Բրիտանիա	29 800
Northrop Grumman	ԱՄՆ	24 597
General Dynamics	ԱՄՆ	21 520
Raytheon	ԱՄՆ	19 800
EADS	ԵԱԲ	12 239
L-3 Communication	ԱՄՆ	11 240
Finmeccanica	Իտալիա	10 602
United Technologies	ԱՄՆ	8 761
Thales	Ֆրանսիա	7 246
SAIC	ԱՄՆ	6 511
KBR	ԱՄՆ	5 967
Honeywell	ԱՄՆ	5 000
General Electric	ԱՄՆ	4 500

Աղբյուրը Kayı Yacagan, Savunma Sanayisi Açısından Şirket Birleşmeleri, Savunma Sanayisi Gündemi, Ekim 2008

Թուրքիան իր տարեկան պաշտպանական բյուջեի շուրջ 35-50 %-ը ծախսում է սպառազինության ձեռքբերման նպատակով: Սպառազինության ձեռքբերման ուղղությամբ, պաշտոնական տվյալներով, տարեկան հատկացվում է միջինը 3-4 մլրդ դոլար, որից 1.5 մլրդ-ը ծախսվում է երկրի ներսում¹¹⁶: 2010 թ. համար ներկայացված պաշտպանական բյուջեն կազմում է շուրջ 15 մլրդ 118 մլն ԹԼ (մոտ 10 մլրդ 80 մլն \$), որից շուրջ 42 %-ը բաժին է ընկնում անձնակազմի վրա կատարվող ծախսերին, 47 %-ը՝ անհրաժեշտ սպառազինության ու ծառայությունների գնմանը և այլն¹¹⁷:

¹¹⁶ Türk Savunma Sanayisi Sektör Raporu 2007, Türkiye Odalar ve Borsalar Birliği,TOBB Yayın Sıra No: 2008/09, s. 9, <http://www.tobb.org.tr/ayinlar/sector/Savunma.pdf>

¹¹⁷ Bakan Genel. PKK, Türkiye'nin güvenliğine yönelik en önemli tehditdir, Zaman, 10.11.2009

Թուրքիայի սպառազանական բյուջեն

	Պաշտպանական բյուջեն (ԽԳ ԹԼ)	ՀՆԱ %	Պաշտպանական բյուջեի անը %
2000	4.136.500	2,5	-
2001	5.126.585	2,1	23,9
2002	8.234.969	2,3	60,6
2003	10.209.250	2,2	24,0
2004	10.911.847	1,8	-1,9
2005	10.977.067	1,7	9,6
2006	11.877.533	1,6	8,2
2007	13.052.398	1,5	9,9
2008	13.272.707	1,3	1,7
2009	14.532.622	1,3	9,5
2010	15.118.000	1,3	9,7
2011 ¹	17.744.453	1,3	11,3

(2008 թ. 1 ԱՄԵ ցուցիի փոխարինքը կազմել է 1.48 ԹԼ)

¹ 2011 թ. սպառազանական բյուջեի ենթադրությունները

Աղբյուրը՝ Milli Savunma Bakanlığı, Faaliyet Raporu 2008, s. 164,

www.msb.gov.tr /2008_Kurumsal_Mali_Durum_Beklentiler_Raporu.pdf

Ըստ Թուրքիայի ՊՆ-ի տվյալների՝ 2006 թ. դրությամբ այդ երկիրը սպառազանության ներմուծման ցուցանիշով աշխարհում գրադեցրել է 11-րդ, իսկ արտահանման ցուցանիշով 21-րդ տեղը¹¹⁶։ Հեղինակավոր Ստոկհոլմի միջազգային խաղաղության ուսումնասիրության ինստիտուտի տվյալներով (SIPRI) 2001-2005 թթ. Թուրքիան սպառազանության ներմուծման ցուցանիշով գրադեցրել է 8-րդ, իսկ արտահանման ցուցանիշով՝ 28-րդ տեղը¹¹⁷։

Ըստ 2007-2011 թթ. ռազմավարական ծրագրի՝ մինչև 2010 թ. երկրի ԶՈՒ-ին անհրաժեշտ ռազմական տեխնիկայի ու սպառազանության


¹¹⁶ Savunma sanayinde ihracat atagi, Star, 02.02.2009

¹¹⁷ SIPRI Yearbook 2006, Stockholm International Peace Research Institute, Oxford University press, 2006

չորը 50%-ը պետք է ապահովվի թուրքական տեղական ռազմասր- ղյունաբերության միջոցով։ 2008 թ. տեղական ռազմասրղյունաբերու- րյան միջոցով թուրքական ԶՈՒ-ի սպառազանության կարիքների ապա- հովումը հասել է շուրջ 44,2 %-ի¹²⁰։

Աղյուսակ 11

Թուրքական ԶՈՒ-ի կարիքների ապահովումը տեղական ռազմասրղյունաբերության միջոցով



Աղբյուրը՝ Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu

Հանձնատրայան համար ներկայացնենք տեղական արտադրու- րյան միջոցով ռազմական կարիքների ապահովումը ըստ մի շարք երկրների ցուցանիշների (2007 թ.).

Աղյուսակ 12

Երկրներ	Ռազմական կարիքների ապահովումը տեղական արտադրության միջոցով
Գերմանիա	80 %
Ֆրանսիա	90 %
Կորեայի Հանրապետություն	75 %
Մեծ Բրիտանիա	85 %
Իսրայել	79 %
Թուրքիա	37% (2008-44,2 %)
Հունաստան	25 %

Աղբյուրը՝ Türk Savunma Sanayisi Sektör Raporu 2008, s. 33:

http://www.sasad.org.tr/dosya/eoe/SR-08-16-05-09_v5.pdf

¹²⁰ Savunma Sanayii Müsteşarlığı Startejik Plan 2007-2011, s. 16, <http://www.sp.gov.tr/documents/planlar/SSMSP0711.pdf>

Ռազմավարական խնդիր է դրված առաջիկա տարիներին մեծացնել բուրդական ռազմաարդյունաբերության մասնակցության չափաբաժինը միջազգային բազմակողմ և հատկապես՝ ՆԱՏՕ-ի ռազմական տարրեր նախագծերում: Նախատեսված է մինչև 2011 թ. ՆԱՏՕ-ի ռազմաարդյունաբերական նախագծերում բուրդական մասնակցության չափը հասցնել 20 %-ի: 2008 թ. որոշյալը այդ ցուցանիշը կազմում էր 4 %¹²¹: ՆԱՏՕ-ի ռազմական նախագծերի հայտանքայիններին 2007 թ. բուրդական ռազմաարդյունաբերական ընկերությունների կողմից ներկայացվել է 212 առաջարկ, մրցույթներում հաղթել են 36 ընկերություններ¹²²: Դաշինքի կողմից հայտարարված մրցույթների շրջանակներում ընկերությունների ստանձնած աշխատանքների ծավալը նույն թվականին կազմել է 19 մլն դոլար, ինչը թավակախին ցածր ցուցանիշ է: Թուրքական մասնակցության նման փոքր բաժինը պայմանավորված է ճրտամով, որ ռազմական նախագծերում մեծամասամբ ներգրավվում են ամերիկյան ու եվրոպական առաջատար ընկերություններ, որոնք տեխնոլոգիական ու արտադրական առումով շատ ավելի զարգացած են:

Եթե մինչև 90-ական թթ. Թուրքիան հիմնականում բանակի կարիքերի համար գնում էր պատրաստի սպառազինություն արտերկրից, ապա 90-ականներից սկսեց իրականացնել մի շարք համատեղ ռազմաարդյունաբերական նախագծեր այլ երկրների հետ, իսկ վերջին տարիներին իրականացնում է ռազմաարդյունաբերական ինքնուրույն մշակումներ ու արտադրություն:

Աղյուսակ 13

1980-ական թթ.	1990-ական թթ.	2000...
Պաշտպանության ապաստանության գծում	Այլ երկրների հետ համատեղ ռազմաարդյունաբերական նախագծեր	Սեփական նախագծում և արտադրություն
Ռազմափող հրթրոսկայաններ (Ռազմաբարձարական ուղղաթիռներ Հարթվածային ուղղաթիռներ Առաջին յանվարական մոտորանավանդակներ և այլն	Տեղի տրամադրության ինքնարտոնքը Չրախանա մարտական մեքենաներ Շարթսիկան 11554 համակարգը Հետահարդարական միջոցներ և այլն	Stinger ՉՀՀ-ներ Մարտական մոտորանակներ Սուպեր ինքնարտոնք Ռուսմական ինքնարտոնք Հրետանային համակարգեր և այլն

2009 թ. ՊԱԳ-Կ-ի կողմից հաստատվեց ռազմաարդյունաբերության զարգացմանն ուղղված ռազմավարական փաստաթուղթ, որով որոշ կարգավորումներ են մտցվում այդ ոլորտում առաջնահերթությունների ու աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: «2009-2016 թթ. ռազմաարդյունաբերության ոլորտների ռազմավարական փաստաթղթի» համաձայն՝ ռազմական մի շարք գործարաններ առաջիկայում կփակվեն, մի մասն էլ կտրվի մասնավոր հատվածին: «Ղյանքի իմնականում այն գործարաններն են, որոնք առանցքային նշանակություն չունեն ռազմական տեխնոլոգիաների ու ռազմական արտադրության ոլորտում: Հիմնական շեշտադրումը կատարվում է 2010-ի համար անհրաժեշտ նորագույն ռազմական տեխնոլոգիաների զարգացմանը երկրի ներսում՝ շխրախուսելով արտասահմանյան ռազմական արտադրանքի կրկնօրինակումը: Այդ փաստաթղթով սահմանված են նաև ռազմաարդյունաբերության առաջիկա 7 տարիների առաջնահերթությունները: Համաձայն դրա՝ մինչև 2012 թ. իրականացվելու են տարբեր դասի իրացանների, ծրագրավորվող ուսման և զենքերի համակարգերի, մինչև 2013 թ.՝ մինչև 6 մեծ հետահարդարական հատանակային համակարգերի մշակումներն ու արտադրությունը: Մինչև 2016 թ. արտադրվելու են ուղղաթիռներ և ուսումնական ինքնաթիռներ, ինչպես նաև փոքր հեռահարդարական հավաքողային իրրիոններ: Լուրջ ուշադրություն է դարձված անօդաչու սարքերի ուղղությամբ տարվող աշխատանքներին, արբանյակների սպասարկմանն ու այդ ուղղությամբ ուսումնասիրություններին, ինչի նպատակով ստեղծվել է Արբանյակների մոնիտինգի և փորձարկման կենտրոն (*Uydu Montaj Entegrasyon ve Test Merkezi*)¹²³:

Ռազմական արդյունաբերության զարգացման գործում մեծ կարևորություն է տրված գիտահետազոտական-փորձարարական տնտեսությանը (*թուրք. Arastirma-Gelistirme, անգլ. Research & Development*) աշխատանքներին: Դա միջոցառումների մի համախոր է, որը ներառում է գիտահետազոտական աշխատանքներ, փորձնական արտադրություն և նախատիպերի մշակում՝ մինչև նախարանակային արտադրություն սկսելը: Թուրքիայի ռազմական R&D նպատակն է զարգացնել ռազմական բարձրագույն տեխնոլոգիաներն ու իրականացնել մշակումները, ռազմական արդյունաբերության ոլորտում մշակել նորագույն տեխնոլոգիաներ ու համակարգեր: Այդ նպատակով ռազմաարդյունաբերական ընկերություններն ու գիտակրթական հաստատությունները, համալսարանները հաստատել են համագործակցություն, որոնց շրջանակներում իրականացվում են գիտահետազոտական աշ-

¹²¹ Rakamlarla türk savunma sanayi, Star, 24.02.2008

¹²² Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, s. 82


¹²³ Askeri fabrikalar özel sektöre açılıyor, Akşam, 10.06.2009

խատանքներ: Այդ ոլորտում առաջատարներից են համարվում Մսամբուլի տեխնիկական համալսարանը (İTÜ), Մերձավորարևելյան տեխնիկական համալսարանը (ODTÜ), Բողազքյի, Բիլբենքի և Աբաբյուրի անվան համալսարանները¹²⁴:

Թուրքական ռազմարդյունաբերական ընկերությունների ընդհանուր ծախսերը գիտահետազոտական-փորձարարական տրոստկոտրային մշակումների ոլորտում 2008 թ. կազմել է շուրջ 510 մլն դոլար, ինչն ամենախաղեղ մեծ ցուցանիշ է մատրոդ տարիների համեմատությամբ: 2004 թ. այդ գումարը կազմել է 64 մլն դոլար¹²⁵:

Աղյուսակ 14

Ռազմարդյունաբերական ընկերությունների գիտահետազոտական-փորձարարական (R&D) ծախսերը (\$ մլն)



Թուրքիայում վերջին տարիներին փորձում են բարենպաստ պայմաններ ստեղծել ընդհանրապես գիտահետազոտական-նորարարական մշակումների զարգացման, այդ ոլորտում խոշոր մեղրդրոմներ ապահովելու համար: ԽՆՊԻ-ը դրված թուրքական ՋՈՒ-ի մանրաժշտ զինատեսակների ու պաշտպանական համակարգերի ապահովման ոլորտում առաջնահերթությունը տալ ազգային ռազմարդյունաբերական համայիրին և այդ ոլորտայնք մեծացնել գիտահետազոտական-կոնստրուկտորային մշակումները: Գիտահետազոտական մշակումների վրա հիմնված արտադրության առաջնահերթություններն ու քաղաքականությունը սահմանելու համար ՊՆ-ի կողմից հաստատված է

Ռազմական հետադրությունների ու տեխնոլոգիաների պլանը (*Savunma Arayirma ve Teknoloji Planı- SAGTEP*): Վերոնշյալ փաստաթուղթը սահմանված նախագծերի իրականացումն ու աշխատանքների համակարգումն իրականացնում է ՊՆ Գիտահետազոտական-կոնստրուկտորային աշխատանքների և տեխնոլոգիայի կառավարման դեպարտամենտը (*Ar-Ge ve Teknoloji Dairesi Başkanlığı*)¹²⁶: Բացի այդ, ռազմական ոլորտում գիտական ու տեխնոլոգիական մշակումներ է իրականացնում TÖBİTAK-ը, որի ռազմական ու տեխնոլոգիական ոլորտի կառավարությանն աշխատանքների կառավարման ինժեներությունը 2005 թ. հաստատվել են ՊՆ-ի կողմից: Դրա կազմում գործում են տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներ, որոնցից մի քանիսը մասնավորապես են ռազմական տեխնոլոգիաների ոլորտում: 2008 թ. ռազմական քննազգատում գիտահետազոտական աշխատանքների համար TÖBİTAK-ը ծախսել է շուրջ 60 մլն ԹԼ: 2006 թ. այդ ցուցանիշը կազմել է 44.5 մլն, իսկ 2007 թ.՝ 50 մլն ԹԼ¹²⁷:

2009 թ. Թուրքիայի Գիտության և տեխնոլոգիայի խորհրդի (*Türkiye Bilim ve Teknoloji Kurulu*) միևնույն որոշում կայացվեց այդ ոլորտում գործունեություն ձագվող ընկերությունների մասնակցությամբ ստեղծել Գիտության և տեխնոլոգիայի ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման ու համակարգման կոմիտե: Ընդունված որոշման համաձայն՝ նախատեսվում է 2013 թ. ընդհանուր գիտահետազոտական-փորձարարական տրոստկոտրային մշակումների համար հատկացվող գումարը հասցնել ՀՆԱ 2 %-ի¹²⁸: 2007 թ. Թուրքիայում գիտահետազոտական-փորձարարական տրոստկոտրային մշակումների ոլորտում իրականացված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 0.76 %-ը (4.399 մլրդ լիրա), որի 65 %-ը հատկացվել է պետության, 35 %-ը՝ մասնավոր հատվածի կողմից: Այս առումով առաջատար իրերում է գտնվում Իսրայելը, որի ծախսերն այդ ոլորտում նույն թվականին կազմել են 4.53 %, որի զգալի մասը բաժին է ընկնում ռազմարդյունաբերության ոլորտին¹²⁹:

Եվրասիանման ժողովի կողմից պատրաստված հատուկ վեկույցում ամփոփվել են գիտահետազոտական մշակումներ իրականացնող

¹²⁴ Türk Savunma, Havacılık ve Uzay Sektörleri Değerlendirmesi, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-4, TÖBİTAK, Ankara, 2003, <http://www.vizyon2023.tubitak.gov.tr>
¹²⁵ Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, s.78

¹²⁶ Գեպարտամենտը ստեղծվել է դեռ 1954 թ. ՋՈՒ Գ-Ը-ում, սրը 1959 թ. ցանկում է ՊՆ-ի կազմում: Տե՛ս http://www.msb.gov.tr/burimler/arge/himl/05A_argeprojelerimplanlanmass.htm
¹²⁷ Almanak Türkiye 2006-2008: Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. A. Bayraktarlı. A. İnse, Temmuz 2009, TESEV, s. 161, <http://www.tesev.org.tr>
¹²⁸ Türkiye'den uzay yolunda dev adımlar, Yeni Şafak, 05.08.2009
¹²⁹ OECD Science, Technology and Industry Outlook 2008, <http://www.oecd.org>

առաջատար ընկերություններն ու կազմակերպությունները, որոնցում տեղ է գտել նաև թուրքական Koç Holding-ը, որի ծախսերն այդ ոլորտում կազմել են 62.51 մլն եվրո: 2007 թ. ամենաշատ գումարները հատկացրել է ռազմական մեքենաշինության խոշոր BMC ընկերությունը, ինչը կազմել է 61 մլն ԹԼ: Ռազմական մշակումների ոլորտում ան է գրանցում ASELSAN ընկերությունը, որը գիտահետազոտական մշակումների ոլորտում պայմանագիր է ստորագրել ԴՆ-ի հետ, համաձայն որի ընկերությունը Բիլբենթի և Մերձավորարևելյան տեխնիկական համալսարանի հետ համատեղ իրականացվող մշակումների համար պետության կողմից ստացել է 30 մլն ԹԼ օժանդակություն¹³⁰: Ընկերությունում 2009 թ. հիմնվեցին 4 առանձին գիտահետազոտական կենտրոններ՝ տեղեկատվական-հաղորդակցման սարքավորումների, միկրոէլեկտրոնիկայի ու էլեկտրոօպտիկական միջոցների, ՌՏԿ-ների, էլեկտրոնային պատերազմի ու հեռախոսային միջոցների, պաշտպանական համակարգերի տեխնոլոգիաների ոլորտում, որոնցում աշխատում են ավելի քան 1000 մասնագետներ ու ինժեներներ¹³¹: Ընկերությունը գիտահետազոտական աշխատանքներին հատկացնում է իր տարեկան շրջանառության 7 %-ը: 2007 թ. ընկերության ընդհանուր վաճառքի ծավալները կազմել են 470 մլն դոլար, իսկ արտահանումը կազմել է շուրջ 20 մլն: Ընկերության ղեկավարությունը նպատակ ունի առաջիկա տարիներին արտաքին վաճառքի տարեկան ծավալները հասցնել 100-200 մլն, իսկ ընդհանուր տարեկան շրջանառությունը՝ 1 մլրդ դոլարի¹³²:

Հետախուզությունը¹³³, արդի տեղեկատվական կառավարումն ու ժամանակակից ռազմական կառավարման համակարգերը դարձել են 21-րդ դարի ռազմական գործողությունների առանցքային ոլորտները,

որոնցից է մեծամասամբ կախված ռազմական գործողությունների արդյունավետությունը, ինչը պայամանավորված է անհամաչափ մարտահրավերների առկայությամբ: Թուրքիայի ռազմարդարական վերահսակը ձգտում է ռազմական արդյունաբերությունը տանել դեպի արդի տեխնոլոգիաներն ու նորարարական մշակումները, ինչը կնպաստի արտահանման ծավալների մեծացմանն ու ստացված եկամուտները ԶՈՒ-ի կարիքներին ուղղելուն¹³⁴:

¹³⁰ Selçuk Oktay, "ARGE-100", Turkish Time, Ağustos 2007, Sayı 64, http://www.turkishtime.org/files/Arastirmalar/Ar-Ge/Ar-ge_100_2007.doc

¹³¹ Aselesan'da 4 AR-GE merkezi kuruldu, <http://www.haberturk.com,16.03.2009>,

<http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/20090316.aspx>

¹³² Ընկերություն ընդհանուր ամենակազմի թիվը հասնում է ավելի քան 3200-ի, որից 1500-ը ինժեներներն ու մասնագետներն են: Ssü Aselesan, savunma sanayinde dünya devleri arasında... Milliyet, 07.09.2008

¹³³ Արևմտյան ռազմական տեսության մեջ կիրառվում են 3 տարբեր հասկացություններ, որոնք, բնականորեն հաշվով վերաբերում են հեռախուզությանը, այնուամենայնիվ ունեն հստակ դասակարգում և արտահայտում են տարբեր օպերատիվ-մարտավարական գործողությունների խնամանք (Intelligence, Reconnaissance, Surveillance): Ավելի մանրամասն տես The Battale Staff Smartbook, ed. Norman M. Wade, The Lightning Press, 2002; Judy G. Chizek, Military Transformation: Intelligence, Surveillance and Reconnaissance, //Report for Congress//, Updated January 17, 2003

¹³⁴ Andrew McGregor, *Arming for Asymmetric Warfare: Turkey's Arms Industry in the 21st Century*, The Jamestown Foundation, June 2008

ՅԱՍԱԶԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԱՐԻԻԱԿԱՆԱՆՈՒՄԸ ՈՒ ՈՒՍՏԱՆԱՐԳՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՍՏՐԱՆԻՔՅՈՒՆԸ

3:1 Զրահատեխնիկա, ստանկեր

Զրահամեքենաների (այսուհետ՝ ՉՄ, բոլոր *zırhli araç*), ինչպես նաև դրանց համար անհրաժեշտ զինատեսակների արտադրությունը հիմնականում կենտրոնացված է թուրքական Nurol Grup, FNSS Savunma Sistemleri և Otokar ընկերությունների գործարաններում:

Ցամաքային ռազմական միջոցների արտադրության ոլորտում խաչորագույններից համարվող FNSS ընկերությունը հիմնադրվել է 1987 թ. որպես առանձին նախաձեռնություն Nurol İnşaat ve Ticaret և FMC Corporation ընկերությունների միջև ստորագրված պայմանագրի շրջանակներում: 2005 թ. FNSS դարձավ Nurol Holding-ի և ամերիկյան BAE Systems ընկերության համատեղ բուրք-ամերիկյան ընկերություն, որի բաժնետոմսերի 51 %-ը պատկանում է Թուրքիային¹³⁷: Ընկերության արտադրացանկին են պատկանում մարտական մեքենաների րնտանյիին պատկանող բրդրուրավոր ACV-300 AAPC, ACV-300 IFV, ACV-SIFV, ինչպես նաև անհիվավոր Pars գրահասպատ մեքենաները: Քնացի արտադրությունից, ընկերության ձեռնարկություններում իրականացվում են նաև թուրքական քանակի հնացած մարտական մեքենաների արդիականացման աշխատանքներ¹³⁸:

Ընկերության հիմնադրման ժամանակ առաջին կարևոր խնդիրը Թուրքիայի ՉՄ-ի կախիցների համար տարբեր դասի ՉՄ-ների արտադրությունն էր, որում այն սկսեց լուրջ դերակատարություն ապահովել: 1988 թ. փետրվարին Թուրքիայի ՊՆ-ն մարտական մեքենաների ձեռքբերման հայտանքայուր հայտարարեց, և նույն րվականի մայիսին Թուրքիայի վարչապետ Թ. Օզալի անմիջական մասնակցությանը FNSS ընկերության և ՊԱԳ-Վ-ի միջև պայմանագիր ստորագրվեց թուրքական քանակի համար 10 տարիների ընթացքում 1700 միավոր ՉՄ-ների արտադրության վերաբերյալ, որի ընդհանուր արժեքը կազմում էր չուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար: Փաստորեն, այդ գործարքը ոչ միայն ընկերության հետագա զարգացման, այլ թուրքական ճորատեղծ ռազմաարդյունաբերության ամենամեծ նախագիծը դարձավ:

Այդ ծրագրով նախատեսված արտադրությունն ու արտադրանքի հանձնումը վերջնականապես ավարտին է հասցվել 2000 թ.¹³⁷:

2000 թ. Թուրքիայի ՊՆ-ի հետ ստորագրված պայմանագրի համաձայն՝ ընկերությունը ստանձնեց թուրքական ՉՄ-ի համար սինկրուրական անձնակազմի փոխադրումների համար նախատեսված 550 միավոր ՉՄ-ների արտադրությունը, որոնք քանակին հանձնվեցին 2005 թ.: Նշենք, որ ընկերության քանցելով ՉՄ-ների տեղական քազայի արտադրությունը հասցվել է ավելի քան 80 %-ի: Ընկերությունը կարճ ժամանակահատվածում հաջողություններ է գրանցել նաև արտադրանքի արտահանման ոլորտում, տարբեր դասի ՉՄ-ներ և հետևակի մարտական մեքենաներ (այսուհետ՝ ՀՄՄ) արտահանելով Մալայզիա, ԱՄՆ, Սաուդյան Արաբիա, Ֆիլիպիններ և այլ երկրներ: 1997 թ. ստորագրված պայմանագրի համաձայն՝ ընկերությունն իր արտադրության մեքենաների առաջին խմբաքանակը վաճառեց ԱՄՆ-ին: Հատուկ պայմանագրի շրջանակներում, ընկերությունը 2001 թ. ավարտեց ԱՄՆ-ին 133 միավոր տարբեր դասի ՉՄ-ների հանձնումը: Սակայն, ծավալների առումով, ամենամեծ գործարքը նաև թուրքական ռազմաարդյունաբերության ոլորտում դարձավ 211 միավոր ՉՄ-ների վաճառքը Մալայզիային 2004 թ.: Ընկերությունն իրականացնում է նաև տարբեր երկրների ՉՄ-ում առկա սեփական արտադրության մեքենաների արդիականացման աշխատանքներն ու առանձին պահեստամասերի վաճառքը¹³⁸:

2004 թ. Սաուդյան Արաբիայի հետ ստորագրված պայմանագրի շրջանակներում ընկերությունն իրականացրեց սաուդյան քանակի M113 ՀՄՄ-ների վերանորոգման աշխատանքները՝ նույն ժամանակահատվածում ստանձնելով նաև Բահրեյնի, Ֆիլիպինների ու Բելգիայի ՉՄ-ի մարտական մեքենաների արդիականացման ու տեխնիկական համարման աշխատանքները¹³⁹:

Ընկերությունը ոչ միայն կարողացավ ապահովել թուրքական ՑՄ-ի կախիցները, այլ նաև իր բրդրուրավոր ու անհիվավոր Akinci և Pars ՉՄ-ներով դուրս եկավ սպառապիմությունների միջազգային շուկա, ինչը ապահովեց ոչ միայն ընկերության եռլինակությունը, այլ նաև թուրքական տեղական ռազմաարդյունաբերության զարգացումը:

2007 թ. հունվարին FNSS ընկերությունը պայմանագիր ստորագրեց Թուրքիայի ՑՄ-ի կրամանատարության համար «շարժական լուրացուր

¹³⁷ Տե՛ս FNSS ընկերության կայքը <http://www.fnss.com.tr>
¹³⁸ Նույն տեղում:

¹³⁷ <http://www.fnss.com.tr/v1/6/index.php?commenu=6>
¹³⁸ FNSS A Leader Company in Armored Combat Vehicles / Interview, Defence Turkey, Volume 2 Issue 10 Year 2008
¹³⁹ <http://www.fnss.com.tr/v1/6/index.php?commenu=6>

գրոհային կամրջի» արտադրությունն սկսելու վերաբերյալ: Նախագիծը կազմում է շուրջ 133 մլն դոլար, և նախատեսվում է առաջին արտադրանքը խանակին հանձնել 2010 թ.: Նախագծի համաձայն՝ նախատեսվում է 52 միավոր 8x8 Pars անվավոր «տանկերի» արտադրություն, որոնք էլ կազմելու են այդ գրոհային կամրջի կառուցվածքային ուղի համակարգը՝ 650 մետր երկարությամբ: Հնարավոր կլինի նաև օգտագործել որպես 150 մետր երկարությամբ առանձին 4 կամուրջներ: Նախագծի վերաբերյալ որոշում էր կայացվել դեռևս 2005 թ.: Համաձայն նախագծի պատասխանատուների՝ կամրջի նախագծումն ու արտադրությունն իրականացվելու է բարդ ինժեներների կողմից¹⁴⁰:

2008 թ. նոյեմբերին բուրբակաճ կողմը համաձայնության էր եկել Գերմանիայի հետ՝ 5Ձ-ի համար 36 միավոր LEGUAN տանկային կամուրջների ձեռքբերման վերաբերյալ, որի շրջանակներում բանակայություններ են անցկացվում Գերմանիայի սրաշտպանական տեխնոլոգիաների ու մատակարարման դաշնային ծառայության ու Krauss-Maffei Wegmann (KMW) ընկերության հետ: Հինմանակ մոնտաժն ու հավաքման աշխատանքներն իրականացվելու են Թուրքիայում¹⁴¹:

Ընկերությունն իրականացնում է նաև տարբեր սարմաչափի հրաձորների ու գրահաշտադակների արտադրություն, որոնք կցվում են ԶՄ-ներին: 2008 թ. FNSS և ASELSAN ընկերությունները արձանագրություն ստորագրեցին տարբեր դասի ԶՄ-ների համար «հեռավառավորվող ավտոմատ գրահաշտադակների» արտադրության վերաբերյալ: Արտադրվելիք գրահաշտադակն կներկայու է 24 կամ 30 մմ տրամաչափի հրանոթ, որի կրակի կառավարումն իրականացվելու է հեռավառավորվող ավտոմատ համակարգի միջոցով: Չրահաշտադակն ու մեխանիկական բաղադրամասերը արտադրվելու է FNSS, իսկ էլեկտրոնային ու կրակի կառավարման, ինչպես նաև պիչերային դիտարկման համակարգը ASELSAN ընկերության կողմից¹⁴²:

2008 թ. ապրիլին Մալայզիայի մայաբարդաթ Կուալա Լումպուրում կազմակերպված DSA 2008 միջազգային 11-րդ ռազմական ջուջահանդեսի շրջանակներում FNSS ընկերությունը պայմանագիր ստորագրեց՝ Մալայզիային 48 միավոր Adnan ԶՄ-ների վաճառքի վերաբերյալ, որի ընդհանուր արժեքը կազմում էր 72 մլն դոլար: Նախկինում ընկերությունն այդ երկրին է վաճառել 300 մլն դոլար արժեքով 211 միա-

վոր Adnan ԶՄ-ներ, որոնցից 65 միավորի հավաքման աշխատանքներն իրականացվելու էին Մալայզիայում¹⁴³:

Տարբեր դասի ԶՄ-ների արտադրության ոլորտում է գործում թուրքական BMC ընկերությունը, որը հիմնադրվել է 1964 թ. Իզմիր քաղաքում և պատկանում է թուրքական խոշորագույն Ծախարաչիական մեքենաշինության ոլորտում, վերջին 10 տարիներին լրջորեն ներգրավված է ռազմաարդյունաբերության մեջ: Ընկերությունը հանդիսանում է Թուրքիայի Ռազմաարդյունաբերողների միության (SaSAD) անդամ:

1970-ական թթ. մասամբ գործելով ռազմաարդյունաբերության ոլորտում (ինչպես արդեն նշել ենք, 1974 թ. բուրբակաճ ԶՄ-ի կողմից) Կիպրոսի Կյուսիսային մասը գրավելու պատճառով ԱՄՆ-ը և Եվրոպայի կազմակերպությունները Թուրքիայի նկատմամբ սպառազինության ձեռքբերման արգելափակումներ կիրառեցին, որի պատճառով թուրքական մի շարք գործարաններ ու ձեռնարկություններ, պետության պահանջով, սկսեցին իրենց արտադրական գործընթացում ներառել նաև ռազմաարդյունաբերության ոլորտը: Հ. Հ.) ընկերությունը մինչ օրս ԶՄ-ին է հանձնել սեփական արտադրության շուրջ հազար միավոր ԶՄ և լքջիտիկ սպահովման 3 հազար մեքենա: Բոլոր ստանձնած նախագծերով համընդհանրապես ընկերության կողմից ԶՄ-ին հանձնված մարտական մեքենաների թիվը կազմում է շուրջ 6 հզ. միավոր¹⁴⁴:

2008 թ. դեկտեմբերի 18-ի Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի որոշման համաձայն՝ BMC ընկերությունը ստանձնել է թուրքական բանակի համար տարբեր դասի ռազմական մեքենաների արտադրությունն ու մատակարարումը: 2009 թ. ապրիլին ՊՆ-ի հովանու ներքո ստորագրվեց «Մարտավարական անվավոր գրահանքներին արտադրությունն ու մատակարարելու ԼԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան 1850 միավոր 2.5 տ (4X4), 5 տ (4X4), 10 տ (6X6) գրահապատ (ակնադիմացկուն) անվավոր մարտական մեքենաներ: Դրանց համար որոշ բաղադրամասերի, հրանոթների ու կառավարման համակարգի արտադրությունը,

¹⁴⁰ <http://www.gubalten.ssm.gov.tr, 31.01.2007>

¹⁴¹ Turkey buys 36 LEGUAN bridge laying armoured vehicles, http://www.armyguide.com/eng/article/article_364.html, 28.04.2009; Türk Kara Kuvvetleri'ne "Leguan" döpingi, <http://www.savunmasanayi.net, 3.11.2009>

¹⁴² TSK 'ya insansız silah kulesi desteği, Haber 7, 22.03.2008

¹⁴³ Turkish defense industry conquers Asia, Today's Zaman, 22.04.2008, http://www.armyguide.com/eng/article/article_1018.html

¹⁴⁴ Karamche'men BMC'S: TSK'nın ve NATO'num aralarında ürettikleri, Akşam, 23.04.2009, TSK, BMC'nin yeni ürettiği zırhlı araçları la teröre dur diyecek!

<http://www.otogundem.net/guncel/tsk-bmc-in-yeni-uretilen-zarhli-aracariyla-terore-dur-diyecek.html, 23 Nisan 2009>

ՊՆ-ի հետ ստորագրած պայմանագրի համաձայն, իրականացնելու է AELSAN ընկերությունը: Ըստ պայմանագրի՝ մեքենաները մաս-մաս ՁՈՒ-ին պետք է հանձնվեն 25 ամսվա ընթացքում¹⁴⁵:

Ընկերության հրապարակած տվյալների համաձայն՝ մինչ օրս ընկերությունը Թուրքիայի ՁՈՒ-ին է հանձնել 1000 միավոր ՁՄ և 3 հզ. ռիկուների ապահովման ռազմական մեքենաներ: Բացի այդ, ընկերությունը տարբեր դասի մեքենաներ է մատակարարում ՆԱՏՕ-ի անդամ մի շարք երկրների¹⁴⁶:

2009 թ. արվելին Թուրքիայում անցկացված IDEF 2009 ռազմարդյունաբերական միջազգային ցուցահանդեսի շրջանակներում ընկերությունը ցուցադրության հանձնել էր նոր արտադրության BMC-350-16 Z և BMC-250-10 Z բազմախողովոնայ ՁՄ-ները, որոնք պաշտպանված են ինչպես ականների պայթյուններից, այնպես էլ համարված են լավատիկ գրահով: Ընկերության այդ նոր մոդելները, արդեն իսկ ստորագրված պայմանագրերի համաձայն, մատական կիրառության կհանձնվեն ՁՈՒ-ին: Նախատեսվում է նաև իրականացնել վաճառք այլ երկրներին¹⁴⁷:

ՁՄ-ների և ՀՄՄ-ների արտադրության ոլորտում վերջին տարիներից հաջողություններ է գրանցում բուրբակի մեկ այլ Նուրո ընկերությունը, որը հիմնադրվել է 1976 թ. և ռազմարդյունաբերության բնագավառում սկսել է նախագծեր իրականացնել 1992 թ.: Ընկերությունը ՊՆ-ի կողմից ստացել է ռազմական արտադրանքի բողարկման, վերահսկողության ու որակի կառավարման հավաստագրեր ու գաղտնիության պահպանման պարտավորություն: Ընկերությունը, բացի պատրաստի ռազմական արտադրանքից, արտադրում է նաև այլ բաղադրամասեր, որոնք կիրառվում են ռազմարդյունաբերության տարբեր ոլորտներում¹⁴⁸:

1990-ական թթ. սկզբին Թուրքիան Արևելյան Գերմանիայի ձեռք էր բերել 350 միավոր խորհրդային արտադրության ԵՄ-60ԼԵ գրահավոխադրիչներ, իսկ ավելի ուշ՝ ԵՄ-80 ՁՄ-ներ: Դրանց բազայի վրա բուրբակյան ռազմարդյունաբերական ընկերությունները սկսեցին իրականացնել վերամշակումներ ու փոխակերպման աշխատանքներ: Նույն ժամանակահատվածում Նուրո ընկերությունը սկսեց համագործակցել ռումինական Ratmil ընկերության հետ՝ խորհրդային

ԵՄ-60 գրահավոխադրիչի բազայի վրա նոր փոխարամիջոցների արտադրության շուրջ: Երկկողմ ռազմարդյունաբերական աշխատանքների արդյունքում ընկերությունը սկսեց արտադրել նոր գրահավոխադրիչներ (6x6 RN 94), որոնք համարված էին ամերիկյան մշակման ավտոմատ փոխանցման համակարգով, դիզելային հզոր շարժիչով և այլն¹⁴⁹:

6x6 RN 94 մակնշիչ գրահավոխադրիչը հանդիսանում է ընկերության արտադրության առաջին ՁՄ-ն, որի բազայի վրա հետագայում արտադրվել են նույն դասի այլ մեքենաներ: Ընկերության գործարաններում իրականացվում է նաև ՁՄ-ների համար նախատեսված տարբեր տրամաչափի հրամրոքների ու հրամրային աշտարակների արտադրություն: 2002 թ. ընկերությունն իր իսկ արտադրության մատական մեքենաների համար սկսեց արտադրել 25 մմ տրամաչափի հրամրափողեր ու հրամրային աշտարակներ: 2003 թ. երևան հանվեց Toms 4x4 փնվորական անձնակազմի փոխարումների համար նախատեսված մարտական մեքենաների նոր շարքը: Թուրքական այլ ընկերությունն առավելապես աչքի ընկավ իր EJDER ՁՄ-ների արտադրությամբ, որի առաջին նմուշներն արդեն պատրաստ էին 2007 թ.: Նոր դասի EDJER 6 x 6 ՁՄ-ն նախատեսված է ինչպես անձնակազմի արագ ու շարժունակ փոխադրումների, այնպես էլ թե՛ մատական գործողությունների ու կրակի ապահովման համար: Նախագծման և արտադրական աշխատանքները տեղե է 2 տարի: Նշենք նաև, որ այս դասի բուրբակյան արտադրության մեքենաներ կան վրացական ՁՈՒ-ում, որոնք հատկապես են Թուրքիայի կողմից¹⁵⁰:

Նուրո և FNSS ընկերությունները համատեղ իրականացնում են Սաուդյան Արաբիայի ավելի քան 600 միավոր տարբեր դասի ՁՄ-ների արդիականացումն ու վերանորոգումը մինչև 2010 թ., որի ընդհանուր արժեքը կազմում է 540 մլն դոլար¹⁵¹:

IDEF 2009-ին բուրբակյան Otokar ընկերությունը ներկայացավ իր նոր գրահամբեմաներով, որոնք պատկանում են Cobra ՁՄ-ների ընտանիքին, սակայն ավելի կատարելավորված, անվտանգության ու պաշտպանության համակարգերով ավելի հազվեցված: Թուրքական Koç Holding կորպորացիային պատկանող Otokar ընկերությունը ստեղծվել է 1963 թ., որը գործում է քաղաքացիական մեքենաշինության

¹⁴⁵ BMC'den Savunma Bakanligi'na 300 milyon euroluk zerhli arac, Sabah, 23.12.08.
¹⁴⁶ Kazanilmactan BMC'ni TSK'ni ve NATO'na araclari uretiyor, Akşam, 23.04.2009
¹⁴⁷ http://www.armyrecognition.com/2009_mois_news_articles/idef_2009_online_show_news_daily_exhibition_international_defence_industry_fair_information_descript.html
¹⁴⁸ Sb'u Nuroi ընկերության կայք, <http://www.nurolmakin.com.tr/index>

¹⁴⁹ М. Мартюс. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами // Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии. (Сборник статей), ИНИИВБ, М., 2002, стр. 377-378
¹⁵⁰ Mayın Saldırlarına Karşı Türk Yarımı 'Ejder', Milliyet, 03.02.2009
¹⁵¹ Nuroi, 600 Saudi zerhlesim 540 milyon dolara yemiyor, Sabah, 05.02.2009

ու ռազմական արդյունաբերության ոլորտում: 2009 թ. մայիսին ընկերությունը Թուրքիայի ՊՆ-ի հետ ստորագրեց պայմանագիր, ՋՌՒ-ի կարիքների համար անվավոր ծառայական մեքենաների դասին պատկանող 861 միավոր ՋՄ-6ների և ՆՄՄ-6ների արտադրության վերաբերյալ, որոնք յուրյական բանակին կհանձնվեն 1 տարվա ընթացքում: Ընկերությունը ՋՌՒ-ի կարիքների համար առաջին ծառայական մեքենաների արտադրությունը սկսել է 1987 թ.:

Ընկերության փորձարաններում 1987 թ. սկսած հավաքվում է արտադրվում են Land Rover Defender 90, 110 և 130 մոդելի ամենազանգացներ և Akrep մարտական մեքենաները, որոնք մինչ օրս կիրառության մեջ են ՋՌՒ-ի ու անվտանգության մարմինների տարբեր ստորաբաժանումներում: Այս դասի մեքենաները տարբեր տարիներին արտահանվել են մի շարք երկրներ: Մասնավորապես, 1995 թ. ընկերությունը Ալժիրին է վաճառել 700 միավոր Akrep մարտական մեքենա, իսկ 2001 թ. ստորագրված 20 մլն դոլար արժողության պայմանագրով՝ 600 միավոր Land Rover Defender 110 մոդելի ամենազանգացներ, որոնք մաս-մաս պատվիրատուին են հանձնվել 2002 թ.: Երկն դասի 300 միավոր մեքենաներ են վաճառվել նաև Թունիսին՝ 2001 թ. ընթացքում¹⁵²:

2008 թ. նոյեմբերին ընկերությունը Cobra մարտական մեքենաների վաճառքի վերաբերյալ 43 մլն դոլար արժողության պայմանագիր ստորագրեց, որոնք պետք է պատվիրատուին հանձնվեն 2009 թ.¹⁵³:

Ընկերության գլխավոր տնօրեն Ս. Գյոթպյուշի ներկայացրած տվյալների համաձայն՝ Otokar ընկերության շահույթը 2008 թ. կազմել է 70 մլն դոլար, իսկ արտադրանքի վաճառքն ավելացել շուրջ 25 %-ով՝ նախորդ մի րանի տարիների համեմատությամբ: Ընկերության արտադրության ավելի քան 25 հզ. միավոր մարտական մեքենաները կիրառվում են մերձավորարևելյան, եվրոպական ու ասիական 15 երկրներում¹⁵⁴:

Թուրքիայի ՅՁ-ի կարիքների համար ՊԱԳ-Ա-ն տեղակայված մրցույթ է հայտարարել, որի շրջանակներում ՅՁ-երը համարվելու են նորագույն մարտական մեքենաներով: Նախատեսվում է ՅՁ-երի համար ձևոր բերել 336 միավոր հատուկ նշանակության և 1075 միավոր զինատեսակներ կրող մարտական մեքենաներ¹⁵⁵: Հառուել նշանակության

մեքենաները նախատեսվում են հետախուզական դիտարկման, քիմիական, կենսաբանական, ռադիոակտիվ ու միջուկային հետախուզություն սպասվելու, իսկ զինատեսակներ կրող մեքենաները՝ տարբեր դասի երրորդային, հակատանկային համակարգերի ու նոնականետերի կիրառության համար: Երազիրն իրականացվելու է բացառապես տեղական ռազմարդյունաբերության միջոցով, որի մասնակցության համար հայտ են ներկայացրել FNSS, Hema Endüstri և Otokar ընկերությունները: Արտադրական այդ ծրագիրը խինանավորվելու է Պաշտպանական արդյունաբերության հիմնարարի կողմից¹⁵⁶:

Ավելի ներդրումներ են կատարվում յուրյական բանակի համար «ժայռնական տանկերի» արտադրության ոլորտում: Կողմնորոշվելով «ժայռնական տանկերի» նոր սերնդի նախատիպի որոշման հարցում՝ Թուրքիան սեփական ՋՌՒ-ի համար 1000 միավոր նոր սերնդի տանկ արտադրելու ծրագիր հաստատեց, ինչի համար հինական արտադրողներ են ընտրվել յուրյական BMC, FNSS և Otokar ընկերությունները¹⁵⁷:

Թուրքիայի ՅՁ-ի կարիքների համար 1996 թ. հաստատվեց «ժամանակակից տանկ» նախագիծը, որը, սակայն, ի հայտ եկած մի շարք խնդիրների պատճառով ժամանակավորապես դադարեցվեց: Եվ դա փոխարեն 2000 թ. որոշում կայացվեց իրականացնել յուրյական բանակի Leopard 1 և M60 տանկերի արդիականացման աշխատանքները, ինչն ուղղակի ժամանակավոր լուծում էր՝ մինչ հիմնական տանկերի ձեռքբերման մանրամասների ճշգրտումն ու նախագծի սկսելը: 2004-2005 թթ. ՊԱԳ-Ա-ն BMC, FNSS և Otokar ընկերությունների միջև անկազմվեցին խորհրդակցություններ՝ Թուրքիայում ժամանակակից տանկերի նախագծման ու արտադրության վերաբերյալ: Տեղական հնարավորություններով տանկերի արտադրության ALTAY նախագծի վերաբերյալ որոշում կայացվեց, ըստ որի՝ անհրաժեշտ տեխնոլոգիաները ձեռք են բերվելու արտերկրյից, իսկ նախագծումն ու արտադրությունը իրականացվելու է Թուրքիայում¹⁵⁸:

Նախագծի նպատակն է յուրյական բանակի հնացած տանկերը փոխարինել երրորդ սերնդի տանկերով: Կողմնորոշվելով «ժայռնական տանկերի» նոր սերնդի նախատիպի որոշման հարցում՝ ՊԱԳ-Ա-ն որոշում է կայացրել սեփական ՋՌՒ-ի համար 250 միավոր նոր սերնդի տանկ արտադրել, ինչի համար հիմնական արտադրող է ընտրել յուր-

¹⁵² N. Gilby, Nurturing Turkey's War Machine, Turkey and The Arms Trade 1998-2002: A Process, March 2003

¹⁵³ Otokar zinhil arası satacak, Yeni Safak, 18.11.2008

¹⁵⁴ Sevdar Gorgüs, Savunma Sanayii İnde Kara Platformu, Savunma Sanayii Gündemi, Temmuz 2008, s.17, Otokar yeni nesil askeri araçlarıyla IDEF 2009 fuarına katıldı, <http://www.otokar.com.tr>, 04.05.2009

¹⁵⁵ Oduva süper zırhlı araçlar geliyor, Star, 2009-04-30

¹⁵⁶ Kara Kuvvetleri, süper zırhlı araçlarla takviye edilecek, Zaman, 30.04.2009

¹⁵⁷ Milliyet, 18.07.2006

¹⁵⁸ ALTAY Projesi, Milli İmkanlarla Modern Tank Üretimi, Savunma Sanayii Gündemi, Temmuz 2008, s.80

ըլակ Հոլդինգ-ին պատկանող Otokar ընկերությունը: Նոր տանկերի արտադրությունը կազմակերպվելու է այդ ընկերության Ալարազարի գործարանում: Հայրենական տանկերի արտադրության հարցը բնաճարկվել է դեռևս 1996 թ., սակայն մեծ ծախսատարության պատճառով դադարեցվել էր 2004 թ.: Թուրքիան ALTAY անվանակոչված տանկերի արտադրության ոլորտում համագործակցելու է Հարավային Կորեայի հետ: 2008 թ. հուլիսին հարավկորեական Hyundai Rotem է Otokar ընկերությունների միջև ստորագրված շուրջ 400 մլն դոլար արժողության պայմանագրի համաձայն՝ հարավկորեական կողմը պետք է օգնի բուրբակային տանկերի արտադրության գործում՝ ապահովելով անհրաժեշտ տեխնոլոգիաներով: Արտադրության մշակումներն ու սեփականության իրավունքը պատկանում է Թուրքիային: Տանկերի նախագծման, նախատեսվող արտադրության, փորձարկումների ու որակական ստուգումների ընդհանուր բյուջեն գնահատվում է 500 մլն դոլար, քանի որ նորագույն տեխնոլոգիական լուծումներ են անհրաժեշտ լինելու: Նախատեսվում է մինչև 2012 թ. ավարտել նախատիպերի արտադրությունը, է անմիջապես սկսել առաջին խմբաբանակի հերթական արտադրությունը: Ընդհանուր արտադրական գործընթացի պատասխանատվությունը դրված է բուրբակային 3 ուղծաարդյունաբերական ընկերությունների վրա: Otokar ընկերությունը իրականացնելու է տանկի մեխանիկական համակարգի, ASELAN-ը՝ էլեկտրոնիկ սարքավորումների ու կապի միջոցների, իսկ MKEK-ը՝ հիմնական կրակային փողի ու գրանի արտադրությունը: Արտադրվելիք այդ տանկերի վրա օգտագործվելու է 120 մմ տրամաչափի հրափող:

MKEK ընկերությունը որպես ենթակապալառու ՊԱՎ-վի որոշմամբ ներգրավված է տանկերի արտադրության ALTAY թախապծոմ: 2008 թ. հուլիսի 29-ին բուրբակային այդ ընկերության ու Hyundai-Rotem ընկերության միջև ստորագրվեց տեխնիկական օժանդակության ու տեխնոլոգիաների փոխանցման մասին համաձայնագիր, ինչի շրջանակներում այդ ընկերությունը ստանձնեց արտադրվելիք տանկերի 120 մմ տրամաչափի հիմնական զենքի համակարգի արտադրությունը: Բայց այդ, 2008 թ. նոյեմբերին ALTAY նախագծի հիմնական կապալառու հանդիսացող Otokar ընկերությունը պայմանագրի ստորագրեց MKEK ընկերության հետ՝ տանկերի հիմնական զենքի համակարգի նախագծման ու արտադրության վերաբերյալ¹⁹⁹:

Նոր արտադրվելիք տանկերը համարված են լինելու քիմիական, փրկողական ու միջուկային հարձակումների դեմ պաշտպանական

հատուկ համակարգերով: 1500 ձիաուժ հզորության շարժիչը հնարավորություն կտա ժամում մեծացնել 70-80 կմ արագություն: Այն կարող է գործել նույնիսկ 4 մետր ջրի խորության պայմաններում: Ըստ բոլոր գերնորականների՝ նոր արտադրվելիք մեկ միավոր տանկը իր հնարավորություններով կարող է կատարել ներկայումս բուրբակային բանակի միասին վերցրած 4 միավոր M48 տանկերի գործառնությունը: Այն հնարավորություն կունենա անընդմեջ ընթանալ մինչև 500 կմ է շարժման ընթացքում կրակ արձակել¹⁹⁹: Նշենք, որ հարավկորեական վերը նշված տանկը իրենից ներկայացնում է ամերիկական Abrams M-1 տանկի տեղայնացված, է որոշակի փոփոխված սարքերակը:

Միաժամանակ Թուրքիան սկսել է նաև իր բանակի տանկերի արդիականացման լայնածավալ ծրագիրը: 2005 թ. նոյեմբերին ՊԱՎ-վի է Իսրայելական ռազմական արդյունաբերության (Israel Military Industries) ընկերության ու Elbit Systems ընկերության միջև ձեռք բերված համաձայնությունը՝ Իսրայելին ստանձնեց բուրբակային բանակի 170 միավոր M-60 տանկերի արդիականացման ծրագիրը՝ 688 մլն դոլար արժողությամբ: Նախատեսված է դրանք մի շարք բնութագրերով համապատասխանեցնել վերջին սերնդի իսրայելական տանկերին: Իսրայելական Merkava տանկերից բուրբակային տանկերին կփոխարենն ու 120 մմ տրամաչափի հրանոթը: Թուրքական տանկերի արդիականացման վերաբերյալ պայմանագիր էր կնքվել դեռևս 2002 թ., սակայն տեխնիկական պատճառներով հետաձգվել էր դրա իրագործումը: Տանկերի որոշ թաղադրամասերի արտադրությունն սկսվել էր 2006 թ. վերջին, իսկ նոր տանկերի րողարկումը՝ 2007 թ. սկսվեց բուրբակային Կայսերի թաղաքում: Նույն ծրագրի շրջանակներում M-60 տանկերը հանդերձավորվել են մի շարք համակարգերով, որոնք օգտագործվում են իսրայելական Merkava 4 տանկերում, է այդ 170 տանկերը նորացված ձևով Թուրքիան պետք է ստանար 2009 թ.¹⁹⁹: Սակայն նախագծի իրականացումը հետաձգվել է մինչև 2011 թ., քանի որ արդիականացված տանկերի հետ կապված իսրայել էին եկել տեխնիկական որոշ խեղություններ: 2009 թ. սեպտեմբերին արդեն ավարտվել

¹⁹⁹ Makina ve Kimya Endustrisi Genel Müdürlüğü, 2008 yılı Faaliyet Raporu, s. 16

¹⁹⁹ Milli tank için doğmeye başladı, Milliyet, 30.07.2008, 500 milyon \$'lık proje OTOKAR'ın, Yeni Şafak, 30.07.2008, Türkiye'nin ilk milli tankı Altay, Otokar'la start veriyor, Sabah, 30.07.2008

¹⁹⁹ Hürriyet, 23.11.2005

էին 100 միավոր տանկերի արդիականացման աշխատանքները, որոնք հանձնվել էին Թուրքիայի ՑՂ-ին¹⁶²:

2005 թ. նոյեմբերին Գերմանիան 298 միավոր Leopard-2 տանկ է վաճառել Թուրքիային: ԳՂ-Հ-ի պաշտպանության նախարարությունը հավատել է, որ նույն թվականի նոյեմբերին Բեռլինում կողմերը պայմանագիր են ստորագրել Թուրքիա 298 տանկ մատակարարելու մասին: Պայմանագրի համաձայն՝ պետք է մատակարարվեին մարտական այնպիսի մեքենաներ, որոնք գտնվում էին բուրժուական պահեստում և չէին օգտագործվում: Թուրքիան մաս առաջարկ էր ներկայացրել Բեռլինին՝ բուրժուական բանակի սպառազինության մեջ գտնվող տանկերի արդիականացման վերաբերյալ¹⁶³:

Իրականացվում են նաև Leopard 1, M60 և այլ դասի տանկերի արդիականացման ու տեխնիկական համալրման աշխատանքներ: Մասնավորապես, 2002 թ. ՊՆ-ի կողմից ASELSAN ընկերությունը ստացավ բուրժական բանակի 160 միավոր Leopard IA1 տանկերի արդիականացման ու կրակային համակարգի վերազինման ծրագրի իրականացման պարտավորությունը՝ 160 մեկ դոլար ընդհանուր արժեքով¹⁶⁴: Երազիրն ամբողջությամբ ավարտվեց 2009 թ. նոյեմբերին և, ընդհանուր առմամբ, արդիականացվել է 170 միավոր տանկ, որոնք վերազինվել են ASELSAN ընկերության նախագծման կրակի կառավարման Volkon համակարգերով¹⁶⁵:

ASELSAN ընկերությունը ստանձնել է նաև այլ երկրների տանկերի արդիականացման աշխատանքները: Մասնավորապես, 2009 թ. ընկերությունը պայմանագիր ստորագրեց Չիլիի ՋՌԻ-ի ռազմական գործարանի (FAMAE) հետ՝ այդ երկրի բանակի 100 միավոր Leopard տանկերի արդիականացման վերաբերյալ: Պայմանագիրը ներառում է նաև այդ երկրի ՋՌԻ-ի կարիքների համար էլեկտրոնային պայթյալի,

տեղեկատվական համակարգերի, հրամանատարական հսկողության, ՀՕՊ միջոցների ոլորտում հասագործակցության զարգացում¹⁶⁶:

Նոր սերնդի տանկերի արտադրության նախագիծը, կարևոր է սակ, տեղական ռազմական արտադրության ամենախոշոր ծրագրերից է, որ երբևէ առաջադրվել է ՊԱԳՎ-ի կողմից:

2009 թ. նոյեմբերին բուրքական Hema Defense և Hattat Holding ընկերությունների հետ ՊԱԳՎ-ն ստորագրեց պայմանագիր՝ Թուրքիայի ՋՌԻ-ի համար տանկային փոխադրիչների ու կցատանկերի արտադրության վերաբերյալ: Ըստ պայմանագրի՝ մինչև 2010 թ. վերջը ՋՌԻ-ին են մատակարարվել 45 միավոր փոխադրիչ, որոնք նախատեսված են M60 և նոր սերնդի տանկերի փոխադրումներն իրականացնելու համար¹⁶⁷:

Վերջին շրջանում բավականին ակտիվացել է ռազմատեխնիկական ոլորտում համագործակցությունը Թուրքիայի ու Հարավային Կորեայի միջև: Ըստ բուրքական արդյունքների՝ բուրքական կողմը պատասխանում է ավելի քան 100 մեկ դոլարի գինատեսակներ գնել, այդ թվում 155 մեկ տրամաչափի ինքնագնաց իրևանային համակարգը:

Ցամաքային միջոցների ու հատկապես տարբեր դասի ՋՄ-ների արտադրությունը համարվում է Թուրքիայի ռազմարդյունաբերության ամենամեծ ու առավել խտստուննայից ճյուղերից: Ռազմարդյունաբերության վերընշյալ հատվածի աշխատանքների ընդհանուր ծավալը 2007 թ. կազմել է 300 մլրդ, իսկ արտահանումը՝ 120 մլրդ դոլար, ինչը կազմում է ընդհանուր բուրքական ռազմարդյունաբերական արտադրանքի արտահանման շուրջ 30 %-ը: Ռազմական մեքենաշինությունը 2009-2016 թթ. ռազմարդյունաբերության ոլորտների ռազմավարական փաստաթղթով համարվում է առանցքային զարգացման ոլորտներից և որպես ռազմավարական նպատակ՝ նախատեսվում է մինչև 2010 թ. հատվածի ընդհանուր աշխատանքային ծավալը հասցնել 750 մլրդ, իսկ արտահանումը՝ 300 մլրդ դոլարի¹⁶⁸:

¹⁶² Jorailider tanklarda geci vitesi unuttu, <http://www.haberturk.com>, 07 09 2009
¹⁶³ Almanya'dan Leopard 2'ler geliyor, Milliyet, 09 11 2005 (նրի համար տեսձոր, մինչև 2007 թ. Թուրքիան Գերմանիայից մեծ է քելել 298 միավոր Leopard-2, 300 միավոր Leopard 1 տանկ, 300 միավոր ինչ BTR-60 խորհրդային արտադրության պահպանվող տարածվող, 30 միավոր RF-4 դասի հետախուզական ինքնարկի, G-3 և այլ դասի ինքնաձիվ, KPG-7 KPG-7 խորհրդային արտադրության հատաստելիքն ներառանելու: Almanya'dan tanklara izin çıktı, <http://www.ihassonadakika.com>, 06 05 2009. Նշենք, որ Գերմանիայից մեծը քելված խորհրդային արտադրության նվաճ է այլ գինատեսակներ շատ են հայտնվել Արդյունաբերում:

¹⁶⁴ Hedef Türk malı tank, Radikal, 22 09 2002
¹⁶⁵ Leopard-1 tankları modernize edildi, Star, 12 11 2009

¹⁶⁶ IDEF 09' da Aselsan, Aselsan, N 2, 2009, s. 10; Aselsan, Şifli tankların modernleştirilerek, Sabah, 29 04 2009
¹⁶⁷ Yerli tank taşıyıcı araç ve römoör için imzalar atıldı, <http://www.savunmasanayi.net>, 07 10 2009
¹⁶⁸ 2009-2016 Savunma Sanayii Sektörü Strateji Dokümanı, Savunma Sanayii Müsteşarlığı, Nisan 2009, ss. 13-16, http://www.ssm.gov.tr/TR/kturumsal/Documents/2009_SSSS.pdf

3:2 Հրիտահրետամային համակարգեր

Թուրքիայի ռազմական արդյունաբերության ոլորտում գործում են մի քանի ընկերություններ, որոնք մասնագիտացված են ռազմական տեխնիկայի, սպառազինության ու տարբեր վիճակոստակների արտադրության ոլորտում: Հրիտային տեխնոլոգիաների, գեներատորային համալիրների (այսուհետ՝ ՋՀՀ), հրետամային համակարգերի արտադրության ոլորտում գործում են թուրքական ROKETSAN, ASELSAN ու MKEK ընկերությունները, ինչպես նաև մի քանի այլ ընկերություններ տարբեր բաղադրամասերի արտադրական գործընթացում:

Հրիտային արտադրության ոլորտում է մասնագիտացած ROKETSAN թուրքական ընկերությունը, որը հիմնադրվել է 1988 թ., իր գործունեությունն սկսել է Եվրոպական կոնսորցիումի համար Stinger ՋՀՀ-ների FIM-92 հրիտների շարժիչների արտադրությամբ: Ընկերությունը հիմնականում գործում է հրիտային համալիրների, ինչպես նաև առանձին բաղադրամասերի նախագծման ու արտադրության ոլորտում: Ընկերության բանկետներն են Թուրքիայի ՋՈՒ զարգացման հիմնադրամբ, ASELSAN է MKEK ռազմարդյունաբերական ընկերությունները¹⁶⁶: Այդ ընկերությանն է պատկանում փոքր հեռահարության հրիտների, ինչպես նաև հրիտների տարբեր բաղադրիչների՝ վեկտորային կառավարման մասերի, մարտավայելիկների, կառավարման համակարգերի արտադրությունը, ինչպես նաև ՌՕՌ-ի կամար RAPIER Mk-2 ՋՀՀ-ների հրիտների արտադրությունն ու արդիակահանգումը: Ընկերությունն այժմ աշխատանքներ է իրականացնում Թուրքիայի ՋՈՒ-ի համար մեծ հեռահարության ՀՕՊ համալիրների ստեղծման համար: Հակատանկային հրիտների ծրագրի շրջանակներում ընկերությունը թուրքական քանակին տրամադրեց սեփական նախագծման T-122 MBRL է T-107 MBRL համակարգային կրակի ռեակտիվ համակարգ (այսուհետ՝ ՆՎՌՀ), որոնք ընդհանուր թվով ներկայումս թուրքական քանակի սպառազինության մեջ կազմում է շրջը 90 միավոր¹⁷⁰:

Ընկերությունը վերջին տարիներին ստանձնել է փոքր և միջին հեռահարության հակատանկային հրիտների նախագծման ու արտադրության պարտավորությունը, որ առաջադրվել էր Պաշտպանական արդյունաբերության խոյնիղի նխառում: Փոքր հեռահարության հրիտների նախատեսված են մարտական մեքենաների վրա, իսկ միջին

հեռահարության հրիտները՝ արտադրության մեջ գտնվող T-429 ATAK հարվածային ուղղափոխների վրա տեղադրվելու համար¹⁷¹:

ROKETSAN թուրքական ընկերության տնօրեն Հ. Բայառը 2005 թ. վերջին հայտարարեց, որ տարբեր տեսակի հեռահար գործողության հրիտների արտադրության համար ընկերությունն ունի բոլոր անհրաժեշտ մարդկային, գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքները:

Թուրքական աղբյուրների համաձայն՝ այժմ Թուրքիայում աշխատանքներ են ընթանում 1000 կմ հեռահարության քայխտիկ հրիտների նախագծման ու արտադրության ուղղությամբ, որոնք արտադրությունը սկսվելու է առաջիկա տարիներին: Սակայն ըստ թուրք մասնագետների՝ հնարավոր են այդ աշխատանքները ձգձգվեն, ինչը կառված է տեխնոլոգիական բարդությունների հետ: Հրիտային նախագծերն ի պաշտոնի բավ ծանոթ թուրքական պահեստագործի գեներալ Ա. Ռուդոլֆի համոզմամբ՝ չնայած, որ Թուրքիան արդեն որոշակիորեն արդիակառուց է հրիտների տեխնոլոգիաներին և կարող է ինքնուրույն իրականացնել աշխատանքները, այնուամենայնիվ, դեռևս բարդություններ են առկա հեռահար հրիտների արտադրության ոլորտում: Հստ նրա մտրկայուն ավելի իրատեսական է մինչև 600 կմ հեռահարության հրիտների արտադրությունը, որի ուղղությամբ տարվում են հստակ աշխատանքներ¹⁷²:

2002 թ. հունվարի 14-ին թուրքական Milliyet թերթը հրավարակցեց մի հոդված, որում նշվում էր, որ Թուրքիայում արտադրված առաջին քայխտիկ հրիտի փորձարկումն անցել է հաջող: Թերթի տեղեկատվություն համաձայն՝ «J missile» կոչվող հրիտը չինական տեխնոլոգիաների հիման վրա թուրքական ROKETSAN ընկերության կողմից ճման առաջին արտադրանքն էր: Դրա առաջին փորձնակն արձակումը կատարվել է 2001 թ. դեկտեմբերին՝ Ստամբուլի մերձակա արմատնով շրջակայքում: Հստ թերթի հաղորդման՝ փորձարկված այդ հրիտը հանդիսացել է չինական M-7 հրիտի կառավարման և ուղղորդման համակարգով ավելի կատարելագործված նախատիպը՝ 150 կմ գործողության շառավղով¹⁷³: Թուրք-չինական համագործակցության արդյունքում ստացված տեխնոլոգիաների շնորհիվ Թուրքիայում 2002 թ. հաջողությամբ սկսվեց YILDIRIM B-611 անվանումն ստացած հրիտ-

¹⁶⁶ Siva Roketsan ընկերության կայք՝ <http://www.roketsan.com.tr>

¹⁷⁰ <http://www.roketsan.com.tr/122eng.html>

¹⁷¹ Hürriyet, 07.05.2008.

<http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basimbulteni/Pages/20080505.aspx>

¹⁷² Türkiye 1000 kilometrelik füzele üretilcek, <http://www.haberturk.com>, 2008-09-03

¹⁷³ С. Сардановский, Аспекты полуголодного беззастенчивости Черноморья

<http://www.hsng.crimeainfo.com/03-Sardanosky-rt/>

ուայնի համալիրի փորձարկումները, որի հետահարությունն, ըստ բուրավակա տվյալների, հասնում է մինչև 250 կմ, իսկ բախտակի հրթիռի թաշը՝ 1200 կգ: Ներկայումս այն Թուրքիայի S2-ի սպառազինության մեջ գտնվող ամենամեծ հեռահարության հրթիռային համալիրն է¹⁷⁴: Հարկ է նշել, որ որոշ մասնագետներ կասկածի տակ են դնում նման քննարկարժեքի հավաստիությունը: Մինչև 2007 թ. այդ նախագծի մասին գրեթե հստակ տեղեկատվություն չկար, միայն այդ նույն թվականին տեղի ունեցած շքերթի Ժամանակ պարզ դարձավ, որ այդ նույն «J missile» անվանումը կրող հրթիռը հանդիսանում է մարտավարական YILDIRIM հրթիռային համալիրը: Չնայած հիշյալ համալիրի մասին չկան լիարժեք տեղեկություններ, հայտնի է, որ ROKETSAN ընկերությունն աշխատանքներ է իրականացնում դրանց կատարելագործման ուղղությամբ¹⁷⁵:

Ընկերությունն առաջիկայում նպատակ ունի էլ ավելի մեծացնել արտադրության շրջանակները՝ դառնալով հրթիռաշինության առաջատար ընկերություն: Ընկերության կողմից արտադրված ՀԿՌՀ-ները բուրքական արտադրության առաջին նման արտադրանքն էին, որ արտահանվեցին մի շարք երկրներ: Մասնավորապես, ԱՄՆ-ի հետ ստորագրված համաձայնագրի շրջանակներում ընկերությունը փոխանցեց T-122 ՀԿՌՀ-ներ, ինչպես նաև ստանձնեց այդ երկրի ՋՌՌ-ում գտնվող 122 մմ տրանսչափի ՀԿՌՀ-ների արդիականացման աշխատանքները: Մինչև 2008 թ. ընկերության արտահանման մասկվները կազմել են շուրջ 500 մլն դոլար¹⁷⁶:

Ընկերությունը երկար ժամանակ աշխատանքներ էր իրականացնում «օդ-երկիր» դասի «Cirit 2.75» լավերային կառավարման հակատանկային հրթիռի ստեղծման ուղղությամբ, որը պետք է օգտագործվի T-129 ATAK հարվածային ուղղաթիռների կողմից: Հրթիռների փորձարկումը հայտնի էր անցավ 2008 թ.: Այժմ արդեն աշխատանքներ են իրականացվում 2010 թ. սկսած դրանց խմբաբանակային արտադրությունն սկսելու ուղղությամբ¹⁷⁷:

¹⁷⁴ Operasyonda Yeni Füzeler de Denendi, <http://www.cukhaber.com>, 17.12.2007, "Turk füzeleri Yunanistan'ı varabilen", <http://www.ajansge.com>, 15.07.2008

¹⁷⁵ Anda Mecvutluga, Turkish Surface to Surface Rocket and Missile Systems - III, Air Combat Information Group (ACIG), http://s1885677001.online.de/CMS/index.php?option=com_content&task=view&id=192&Itemid=47, 21.07.2008

¹⁷⁶ http://www.iskv.org.tr/index.php?option=com_content&task=view&id=62&Itemid=70

¹⁷⁷ Jereed (Cirit) (Turkey), Air-launched rockets,

<http://www.janes.com/extracts/extract/jaw/jaw052.html>, June's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 32

Թուրքիան 80-ական թթ. վերջից տարբեր նախագծեր մշակեց S2Հ-ների ու երեսունայնի նոր համալիրների ձեռքբերման, համատեղ արտադրության ու տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ: Թեև բուրքական կողմն այդ ոլորտում նախապատվություն տալիս էր ԱՄՆ-ի հետ համագործակցությանը, այնուամենայնիվ տեխնոլոգիաների տրանսֆերման շուրջ տեղեղծված անհամաձայնությունների պատճառով, Թուրքիան, որպես այլընտրանք, պայմանագիր ստորագրեց չինական ընկերության հետ՝ WS-1 ՀԿՌՀ-ի համատեղ արտադրության շուրջ: 1996 թ ստորագրված բուրք-չինական ռազմական պայմանագրով չինական կողմի աջակցությամբ Թուրքիայում ROKETSAN և KALEKALIP ընկերությունների բազայի հիման վրա 1997 թ. սկսվեց չինական WS-1B ՀԿՌՀ-ների նմանօրինակ հանդիսացող T-300 KASIRGA համալիրների արտադրությունը՝ 250 մլն դոլար ընդհանուր բյուջեով: KASIRGA-ի հրթիռներն ունեն 100 կմ հեռահարություն, 150 կգ մարտազավթիկով: Ներկայումս բուրքական բանակն սպառազինության մեջ գտնվում է նուր 30 միավոր WS-1A/B (KASIRGA) ՀԿՌՀ¹⁷⁸:

Հրթիռների արտադրության ոլորտում 90-ական թթ. կեսերից լուրջ համագործակցություն սկսեց ծավալվել հատկապես Իսրայելի ռազմարդյունաբերական ընկերությունների հետ: 2003 թ. սկսեցին քայլեր ձեռնարկվել Իսրայելի հետ ՀՕՊ հրթիռների համատեղ արտադրության ուղղությամբ: Էլշտպարում (Թուրքիա) իտալական ROKETSAN ընկերությունը սկսեց համագործակցել իսրայելական Rafael ընկերության հետ՝ Popye հրթիռների համատեղ արտադրության ոլորտում: Թուրքական կողմը հետագայում էլ կը շահագրավությունն էր հայտնում Իսրայելի ափսոցիտն արդյունաբերության հետ համատեղ միջին հեռահարության «օդ-երկիր» հրթիռների, ինչպես նաև Arrow 2 հակաբախտակի հրթիռային համալիրների (ATBMs) և AGM-142 Popye 2 «օդ-երկիր» միջին հեռահարության հրթիռների համատեղ արտադրության վերաբերյալ¹⁷⁹:

2009 թ. փետրվարի 22-26-ը ԱՄՆ-ում անցկացված ռազմաարդյունաբերական միջազգային ցուպահանդեսի մասնակցող բուրքական ROKETSAN ընկերությունը 90 մլն դոլար արժույթյան պայմանագիր ստորագրեց Ալ-Ջարեբ ընկերության հետ՝ հրթիռային համակարգերի արտադրության վերաբերյալ, որոնք ՋՌՌ-ին կհանձնվեն 2010 թ.: Հա-

¹⁷⁸ <http://ihcasandefence.blogspot.com/2009/02/roketan-t-300-kasirga-hurricane.html>

¹⁷⁹ Eugene Kogan, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry, Conflict Studies Research Centre, Middle East Series 05/43.

[http://www.da.mod.uk/CSRC/documents/midfile_east05\(43\)-EK_p_10-11](http://www.da.mod.uk/CSRC/documents/midfile_east05(43)-EK_p_10-11)

մակարդի հիմնական մասը կարտադրվի Թուրքիայում, իսկ որոշ բաղադրամասեր՝ ԱՄՆ-ում: ROKETSAN ընկերությունը պատրաստվում էր հրթիռների արտադրության գերաբնույժ պայմանավորյալ առտրագվեցնաև արարական BURKAN ռազմատրոյունաբերական ընկերության հետ¹⁹⁰:

ROKETSAN ընկերությունը, 2009 թ. ստորագրված պայմանագրի համաձայն, որպես ենթակազարաուու մասնակցելու է Raytheon ընկերության կողմից ԱՄՆ-ի համար GEM-T հրթիռները գործողության մեջ դնող համակարգերի արտադրության ու հավաքման գործընթացին, որն իրականացվելու է ընկերության Անկարայի գործարանում: Փաստորեն, ROKETSAN ընկերությունը, հանդիսանալով Raytheon-ի ՀՕՊ նախագծերի խոշորագույն ենթակապալաուուներից, համարվում է որպես ստորեր բաղադրամասերի արտադրության ու մատակարարման խոշորագույն կենտրոն¹⁹¹:

Էլեկտրոնային սարքավորումների ու հրամանատարականակակողության միջոցների արտադրության ոլորտում գործում է ASELSAN պետական ընկերությունը: Ընկերության հիմնական արտադրատեսակներն են ռազմական կապի միջոցները, տեղեկատվական, ուղարային, էլեկտրասպալովական, ինչպես նաև հրթիռային սարքեր բաղադրամասերը, մարտավայրերն ու կառավարման համակարգերը: Ընկերության արտադրատեսակներին են պատկանում ներկայումս բուրբական բանակի սպասալիմության մեջ գտնվող ATILGAN Kaideye Monteli Stinger, ZIPKIN Kaideye Monteli Stinger ցամաքային շարժական և BORA ծովային ՀՕՊ համալիրների արտադրությունը¹⁹²:

ASELSAN ընկերությունն արտադրական ոլորտում արդեն դուրս է եկել սպասագիտության միջազգային շուկա՝ մեծացնելով արտահանման տեսակներն ու ծավալները: 2006 թ. ընկերությունն իր արտադրության ոլորտում հաջողություն գրանցեց կելեոբասալովական նուրագույն «պիչեր-ցերեկ դիտարկման և իրրակի հայտնաբերման» ASEFLIR-300T համակարգի ստեղծման գործում, որը կարող է տեղադրվել օդային և ծովային միջոցների վրա: Նախնական փուլում նախատեսվում է 10 նման համակարգով զինել անօդաչու ինքնաթիռ-

ները, այնուհետև նաև 50 համակարգ տեղադրել մարտավարականակարվածային ուղղորիռների վրա¹⁹³:

2006 թ. դեկտեմբերին կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց առաջիկա 10 տարիների պաշտպանական արդյունաբերության նախագծերում առաջնային զերակատարություն հանձնել ASELSAN ընկերությանը: Հատկապես այդ ընկերությունը ստանձնեց երկրի ՌՕՌ-ի ինքնաթիռների մի մասի և Ժամդարմերիայի հրամանատարությանը պատկանող ուղղաթիռների ավիացիոն համակարգերի արդիականացման աշխատանքներն իրականացնելու պարտավորությունը¹⁹⁴: Չնհրահրիտալին ու հրետանային համալիրների արտադրության ոլորտում գիտական և տեխնոլոգիական մշակումներն իրականացնում է TÜBITAK-ը, որը կատարում է նաև հետազոտություններ ու զարգացման նախագիծեր սարքեր քնագալաուներում¹⁹⁵:

Փորը հետահարության հրթիռահրետանային համակարգերի արտադրության մշակումներն սկսել են իրականացվել 80-ական թրկաներին՝ Թուրքիայի Ռազմական արդյունաբերության հետազոտական ինստիտուտի (SAGE)-ի կողմից սեփական բյուջեով, որի առաջին արդյունքը եղավ G-67 և SAGE 71 փորը հետահարության հակատանկային հրթիռների մշակումներն ու ստեղծման աշխատանքները: Հետագայում ՅՁ-ի կարիքներն ապահովելու նպատակով ինստիտուտը MKEK ընկերության հետ համագործակցությամբ սկսեց աշխատանքներ իրականացնել ՀԿՌ-ների միջին ու մեծ հետահարության հրթիռների արտադրության ոլորտում, ինչի արդյունքը եղավ 107 մմ Anadolus և 122 մմ Mizrak շղեկավարվող հրթիռների արտադրությունը¹⁹⁶:

Թուրքիայի Ռազմական արդյունաբերության հետազոտական ինստիտուտի (SAGE), որը գտնվում է TÜBITAK-ի կազմում, աջակցության ու մշակումների արդյունքում ենարավոր դարձավ Թուրքիայի ՅՁ-երի հրամանատարության հետ համագործակցությամբ իրականացնել նի շարք ծրագրեր, որոնցից նշանավորներն են TOROS 230A միջնի հե-

¹⁹⁰ Harrisry, 23 02 2009

¹⁹¹ Raytheon Names Roketsan Key Supplier for Patriot Missile Assembly, <http://raytheon.mediaroom.com/index.php?s=43&item=1254&pagetemplate=release>, Raytheon Picks Turkish Partner for Patriot Program, <http://www.defensenews.com>, 08.05.2009

¹⁹² Sbu Aselesan ընկերության կայք՝ <http://www.aselesan.com.tr>

¹⁹³ <http://www.gbulen.ssm.gov.tr>, 17.09.2006

¹⁹⁴ <http://www.gbulen.ssm.gov.tr>, 18.12.2006

¹⁹⁵ <http://www.tubitak.gov.tr>

¹⁹⁶ A. Mevlutoglu, Turkish Surface to Surface Rocket and Missile Systems - II, Air Combat Information Group (ACIG), http://s1188567700.online.de/CMS/index.php?option=com_content&task=view&id=191&Itemid=47

առաջարկում, TOROS 260A մեծ հեռավորության ՀՎՈՂ-ների հրթիռների արտադրությունը, որոնք ունեն իսրայելական ծագում¹⁹⁷։

Հրետանային զենքերի, պայթյուցիկ սարքավորումների, բերել սպառազինության ու տարրեր փնտնանակների արտադրության մեջ ամենամեծ ընկերությունը MKEK-ն է։ Սպառազինության արտադրությունն իրականացվում է ընկերության՝ Անկարայում, Քորդրալիյի և Չանբրդի մահանգներում գտնվող 12 գործարաններում¹⁹⁸։

Հրետանային, հրաձգային փնտնանակների, ինչպես նաև ՋՀՀ-ների որոշ բաղադրամասերի արտադրությունը կենտրոնացված է Քորդրալի և Չանբրդի գործարաններում։ TÜBITAK-SAGE-ի ու MKEK ընկերության միջև ստորագրված համաձայնագրով դեռևս 90-ական թթ. կեսին սկսվեց T-107 և T-122 ՀՎՈՂ-ների խմբարանակային արտադրությունը¹⁹⁹։ T-122 Sakarya ՀՄՈՂ-ի հետագա կատարելագործման արդյունքում հնարավոր եղավ ապահովել ROKETSAN ընկերության կողմից արտադրված TR-122, TRB-122, TRK-122, SR-122, SRB-122, SRK-122 և այլ 122 մմ տրամաչափի հրթիռների կիրառումը։ Համալիրի արտադրությունը շարունակվել է մինչև 2008 թ. և ՑՀ-ին հանձնվել շուրջ 70 համալիր²⁰⁰։ ROKETSAN ընկերության T-122 Sakarya ՀՎՈՂ-ն նախատեսված է կենդանի ուժի, ռազմական տեխնիկայի, շինությունների, հրամանատարական կետերի ոչնչացման համար։ Այն Թուրքիայում գտնվում է խմբարանակային արտադրության մեջ և անընդհատ կատարելագործվում է։ Ըստ մասնագետների՝ մեծ է նաև դրանց արտասահման հնարավորությունը²⁰¹։

Միևնույն ժամանակ Թուրքիան դեռևս զգալի գումարներ է ծախսում արտերկրներից հրթիռային սպառազինության ձեռքբերման ուղղությամբ։

2006 թ. օգոստոսին Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյուլունը հայտարարեց, որ պատրաստվում են օտարերկրյա ռազմական գնումների ուղիներով ԱՄՆ-ից 139 մլն դոլար արժողությամբ

¹⁹⁷ TOROS 230-ը սակ մինչև 65 կմ, իսկ TOROS 260-ը մինչև 110 կմ հեռավորության, համապատասխանաբար 120 և 145 կմ մարտագոյնիկներով ՏնԿ՝ <http://www.sage.tubitak.gov.tr>, <http://www.fazelerim.ozel.tk.net>, <http://www.internethaber.com>, <http://17.12.2007>, http://www.janes.com/extracts/extracts/janua_1138.html

¹⁹⁸ <http://www.mkek.gov.tr/english/hakkimizda.aspx>

¹⁹⁹ Вооружения США и Россия экономика стран Азии // Информационно-аналитический справочник РАН. Институт Востоковедения, отв. ред. А. З. Егоров. Москва 2000, стр. 77-78.

²⁰⁰ 40 կմ հեռավորության այդ համալիրը կարող է 80 մլն. քնարարտ արձակել 40 հրթիռ, ինչն ավելանորություն է արտադրված 250.000 մ² տարածությունում։ ՏնԿ՝ <http://theusandefence.blogspot.com/2009/01/roketan-t-122-sakarya-system.html>, 29.01.2009

²⁰¹ <http://www.new-factoria.ru/missile/wobbb122a122.shtml>

SLAM-ER Cruise տիպի 50 հրթիռներ գնել։ Ըստ աղբյուրների՝ Գյուլունը հաստատել է Թուրքիային այդ բանակի հրթիռներ վաճառելու հարցով ԱՄՆ պաշտպանության և անվտանգության համագործակցության վարչության կողմից ԱՄՆ Կոնգրես դինելու մասին լուրը²⁰²։ Այդն իսկ մեղք բերված այդ հրթիռները նախատեսված են հեռահար գործողության և օդից ցամաք հարվածներ հասցնելու համար։

2006 թ. տեղեկատվություն եղավ այն մասին, որ ամերիկյան Textron Systems ընկերությունը, որն ակտիվորեն համագործակցում է ԱՄՆ ՌՕՌ-ի հետ, Թուրքիային է վաճառել ցամաքային ռազմական գործողությունների համար նախատեսված CBU-105 տիպի կատավարիկ «օդ-երկիր» դասի հրթիռներ՝ այդ երկրի ՌՕՌ-ի F-16 սնրավոճիչների վրա տեղադրելու համար²⁰³։

2007 թ. հունվարին ՊԱԿՎ-ն ՑՀ-ի հրամանատարության սպառազինության ուժեղացման շրջանակներում 80 հատ միջին հեռավորության հակառադարձային հրթիռային համալիրների (բուրք. *Oria Menzili Tanksaver System*) (յուրաքանչյուր համալիրի համար 10-ական հրթիռներով) ձեռքբերման նպատակով մրցույթ հայտարարեց, որին մասնակցում էին ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերություններ²⁰⁴։ Երկար ձգձգումներից հետո բարբական կողմը կատարեց իր վերջնական ընտրությունը և չնայած, որ բուրբական սպառազինության հիմնական մասը ամերիկյան և իսրայելական արտադրության են, այնուամենայնիվ նախապատվությունը տրվեց օտեսականին։ 2008 թ. ապրիլին Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հաստատվեց միջին հեռավորության հակառադարձային հրթիռային համալիրների ձեռքբերման 200 մլն դոլար արժողության ծրագիրը, որտեղ բուրք զինվորականները նախապատվությունը տվեցին օտեսական «Рособоронэкспорт»-ին պատկանող «Корнет-Е» համալիրին։ Ըստ նախատեսվածի՝ Թուրքիան գնել է 80 այդպիսի համալիր և 800 հրթիռ²⁰⁵։ Հայտանրցույթին մասնակցում էին ամերիկյան Raytheon Tow կոնտրոլյանգը և իսրայելական Rafael պետական արդյունաբերական ընկերությունը, որոնց մերժումը կապված է ավելի շատ այդ երկրների կառավարմանը քաղաքական ճնշում գործադրելու Թուրքիայի մարտավարական քայլի հետ։

²⁰² <http://www.milliyet.10.08.2006>

²⁰³ <http://www.gbulien.ssm.gov.tr>, 05.11.2006

²⁰⁴ <http://www.gbulien.ssm.gov.tr>, 05.02.2007

²⁰⁵ <http://www.gbulien.ssm.gov.tr>, 11.04.2008

Դեռևս 1998 թ. թուրքիայի ՊՆ-ն պայմանագիր էր ստորագրել ֆրանսիական խոշորագույն MBDA ընկերության հետ՝ թուրքիայի ՅՋ-ին Eryx հակատանկային հրթիռներով ապահովել վերաբերյալ, որի ընդհանուր արժեքը կազմում էր 404 մլն եվրո: Ըստ պայմանագրի՝ 10-ամյա ժամանակահատվածում ֆրանսիական ընկերության և թուրքական MKEK ընկերության համատեղ արտադրությանը ՋՌԻ-ին պետք է մատակարարվեր 600 միավոր հակատանկային հրթիռային համակարգ և 9200 միավոր հրթիռ: 2002 թ. Կրասնիայում յուրը մասնագետների ներկայությամբ այց են կազմել փորձարկումներ, որից հետո 3260 միավոր հրթիռ է մատակարարվել թուրքիային¹⁹⁶: Թուրքական զորավարժարաններում համակարգերի հետազոտ փորձարկումները որոշ թվաքանակներ են արձանագրել, ինչի մասին տեղյակ է պաշտի ֆրանսիական կողմին, որից հետո ՊԱԳՎ-ն 2004 թ. չեղյալ է հայտարարել նախապիմը և պահանջել վճարված գումարի փոխեստացում: Երկար ժամանակ կողմերի միջև տարածակետայինները հարթվելու նպատակով ֆրանսիական ընկերությունը զիջել է միջազգային դատարան: 2008 թ. հուլիսին Միջազգային իրավաբան դատարանը որոշում կայացրեց հետ վերադարձնել թուրքական կողմի վճարած գումարից (280 մլն) միայն 75 մլն-ը¹⁹⁷:

Փաստորեն թուրքական ընկերությունները բավականին մեծ հաջողությունների են հասել ստրատեգիկ շղկավարժող հրետանային հրթիռների արտադրության ոլորտում: Ելելու է դրանք հիմնականում հանդիսանում են այլ երկրներում ստեղծված տարատեսակների արտադրություն, սակայն այս ձևաթղթում մեկ բնի րան չի տատ:

3.3 Թերևս արտապինություն

Հրետանային զենքերի, արաբուցիկ սարքավորումների, թերևս սպառազինության ու տարրեր վիճատեսակների արտադրության մեջ ամենամեծ ընկերությունը հանդիսանում է MKEK-ը: Սպառազինության արտադրությունն իրականացվում է ընկերության Անկարայում, Բըրզըրլակի և Չանբըրքի նահանգներում գտնվող 12 գործարաններում¹⁹⁸:

Ընկերության արտադրացանկին են պատկանում տարրեր տրամաչափի գնդափորները, MP5 մակնիշի տարրեր մոդիֆիկացիայի ինքնաձիգները, 7.62 մմ տրամաչափի G3 ինքնաձիգները, 35 մմ և 20 մմ

զուգ փողանի հակաօդային և հետակային հրանոթները, 120 մմ HY-12, 81մմ NT-1 ընդամորթները, 107 և 122 մմ հրետանային համակարգերը, T-155 Firtina և Panter շարժական հրետանային համակարգերը և այլն¹⁹⁹:

Թուրքիայի ՅՋ-ի կարիքների համար T-155 Panter հրետանային համակարգի նախագծման ու մշակման աշխատանքներն իրականացվել են 90-ական թթ. և առաջին արտադրանքը՝ 18 միավոր, արդեն բաժանվել է հանձնվել 2002 թ. սկզբներին: Ըստ Jane's քրիտանական հեղինակավոր վերլուծական կազմակերպության՝ նախագծային ու արտադրական աշխատանքներն, ամենայն հավանականությամբ, իրականացվել են այլ երկրների տեխնոլոգիական աջակցությամբ: Այսպես այդ, թուրքերից աշխատանքներն էին ամերիկյան M44 և M52 համակարգերի արդիականացման լայնածավալ աշխատանքներ²⁰⁰:

ՊԱԳՎ-ի, ինչպես նաև MKEK և KALEKALIP ընկերությունների միջև 2009 թ. հունվարին ստորագրվեց համագործակցության պայմանագիր՝ թուրքիայի ՋՌԻ-ի համար նոր զայի հետևակի հրացանի նախագծման ու արտադրության վերաբերյալ: Ըստ պայմանագրի՝ սկզբնական շրջանում արտադրվելու են 50 միավոր 7.62 մմ տրամաչափի ավտոմատ հրացաններ, իսկ աջողության դեպքում 30 ամվա ընթացքում կիրականացվի խմբաբանակային արտադրություն²⁰¹:

MKEK ընկերությունը ստանձնել է ՋՌԻ-ի կարիքներն ապահովելու նպատակով 5.56 մմ և 7.62 մմ տրամաչափի հրաձգային զենանտեսակների ու հրացանների արտադրությունը: Նախագծի իրականացման վերաբերյալ 2009 թ. ընկերությունը պայմանագիր ստորագրեց ՊԱԳՎ-ի հետ: Արտադրական գործընթացում որպես ենթակապալառու մասնակցություն է ունենալու նաև թուրքական KALEKALIP ընկերությունը²⁰²:

2007 թ. ծրագրեր են մշակվում թուրքական բանակում մինչև օրս կիրառվող չորս 500 հզ. միավոր G3 հետակային ինքնաձիգների արդիականացման ու նորագույններով դրանց փոխարինման ուղղությամբ: Այդ առնչությամբ տապալել էր ներկայացվել MKEK ընկերությանը, և սուսմաստիվում էին գերծանական հաճատագրի հիման վրա արտադրված HK-33 մոդելները, որոնք ՋՌԻ-ին հանձնվեցին ընդամենը 80 հզ. օրինակ և հետագա արտադրությունը նպատակա-

¹⁹⁶ <http://www2.ssm.gov.tr/katalog2007/tr/urunler.html>

¹⁹⁷ <http://www.janes.com/articles/James-Armour-and-Artillery/155-mm-52-calibre-Panther-howitzer-Turkey.html>

¹⁹⁸ <http://www.miloyun.TL/cipre/piti>, <http://www.haber3.com>, 02.09.2009

¹⁹⁹ Տես MKEK ընկերության կայքը՝ <http://www.mkek.gov.tr/en/engelsihakkimizda.aspx>

¹⁹⁶ <http://www2.ssm.gov.tr/katalog2007/tr/urunler.html>

¹⁹⁷ <http://www.janes.com/articles/James-Armour-and-Artillery/155-mm-52-calibre-Panther-howitzer-Turkey.html>

¹⁹⁸ <http://www.miloyun.TL/cipre/piti>, <http://www.haber3.com>, 02.09.2009

¹⁹⁹ Տես MKEK ընկերության կայքը՝ <http://www.mkek.gov.tr/en/engelsihakkimizda.aspx>

²⁰⁰ Makin ve Kimya Endustriasi Genel Mudurlugu, 2008 yılı Faaliyet Raporu, s. 16

հարձար չզտմվեց: Սեկ այլ առաջարկ ներկայացվեց բուրբական Տarsilmaz ընկերության կողմից, որն առաջարկում էր ՆԱՍՐ-ի չափանիշներին համապատասխան M4 մակնիշի հրացանները³⁰³: Ի դեպ, այդ ընկերությունը աշխատանքներ է իրականացրում սեփական նախագծման դիպլոմատիկ հրացանների արտադրության ոլորտում և համագործակցում է ամերիկյան Cold L2 ընկերության հետ: Արտադրանքի շուրջ 65 %-ն արտահանվում է ավելի քան 50 երկրներ, արտահանման ամենամեծ քանիքն իրականացվում է ԱՄՆ-ին³⁰⁴:

ՏԶ-ի կարիքների համար MKEK ընկերության ու Թուրքիայի ՊՆ-ի միջև ստորագրված պայմանագրով իրականացվում է 25 մմ տրանսչափի տարրեր սողիվիկացիայի 510 հզ. միավոր զենքերի արտադրությունը, այդ թվում՝ 300 հզ. միավոր M 792 HEI-T, 150 հզ. M 791 և 60 հզ. միավոր M 793 TP-T ուսումնասիրական զենացիքներ³⁰⁵:

MKEK ընկերությունը բուրբական Yüksel Holding-ի հետ համատեղ մասխառն է հետախառնվարդող որոտա զենքի մեկ համակարգ, որի նախին տեղեկատվություն էր տրամադրվել 2008 թ. Մայալյալայում անցկացված ռազմաարդյունաբերական միջազգային ցուցահանդեսի ժամանակ: Առանց մարդու, հետախառնվարդող մեխանիկական կրակային համակարգը (IMTAKS) նախատեսված է հիմնականում հակահանրակական գործողությունների, զինվորական ուղեկազմերի պաշտպանության ու անմատչելի վայրերում մարտական գործողությունների իրականացման համար: Համակարգն օժտված է ջերմային դետեկտորներով լայն տեսողառ ապահովելու, մաղդկանց և այլ իրերի շարժումները որսալու, օպերատորին ազդանշան տալու, տարրեր դասի ինքնաձիգների կամ հրացանների կիրառման, մինչև 2 կմ հեռավորությունից ռադիոհամախառնության միջոցով ստացված տվյալները և հրամանները փոխադարձ փոխանակման հնարավորություններով³⁰⁶:

Թուրքիայի ՊՆ-ի, Անվտանգության գլխավոր վարչության ու ժառանգաբերիայի հրամանատարության կողմից 2008 թ. MKEK ընկերության ստացած պատվերների ընդհանուր գումարը կազմել է շուրջ 340 մլն ԹԼ: Ընկերությունը 2008 թ. վերջին արդեն վերոնշյալ գերատեսչություններին է հանձնել պատվերների 66 %-ը: Ըստ նախնական պայմանագրերի ու նախագծերի՝ ներքին պատվերների ընդհանուր գումարը 2009 թ. կազմելու էր ավելի քան 400 մլն ԹԼ: Ընկերության 2008 թ. արտահանման ծավալները կազմել են 33 մլն 586 հզ. դոլար:

2008 թ. ընկերությունը տարրեր դասի սպառափնուրյուն է արտահանել Արբերյան, Վրաստան, Գերմանիա, Ռեմ Բրիտանիա, Հունաստան, Ֆինլանդիա, Բուրայել, Բուլղարիա, Ռումինիա, ԱՄՆ, Հորդանան, Եգիպտոս, Թունիս, Բրազիլիա, Կոլոմբիա, Վենեսուելա, Ֆիլիպիններ, Մալայզիա, Պակիստան³⁰⁷: Ըստ Թուրքիայի ՊՆ-ի տվյալների՝ 2009 թ. նոյեմբերի դրությամբ MKEK ընկերության արտահանման ծավալները աննախադեպ ան գրանցեցին՝ հասնելով 92.5 մլն դոլարի³⁰⁸: Ընկերության գլխավոր սնորհն Ռ. Միլիտարիոլում 2009 թ. վերջերին հայտարարեց, որ առաջնիկայում ընկերությունը շուրջ 300 մլն ԹԼ է ներդրելու, որի շրջանակներում իրականացվելու են Թուրքիայի ՏՈՒ-ի համար նոր սպառափնուրյուն արտադրության տարրեր նախագծելու: Արտադրության ու վաճառքի ծավալներով 2008 թ. ընկերությունը բուրբական արդյունաբերական 500 խոշոր հաստատությունների մեջ գրավել է 98-րդ տեղը³⁰⁹:

Հրետանային համակարգերի, տարրեր դասի հրթիռների ու ականների ոլորտում խոշորագույններից է հանդիսանում Պաշտպանական արդյունաբերության գիտահետազոտական-կոնստրուկտորային ինստիտուտը (*Savunma Sanayi Araştırma ve Geliştirme Enstitüsü*), որը ստեղծվել է 1972 թ.: որպես TÜBİTAK-ի ստանձին ինստիտուտ: Ինստիտուտի իմնական գործունեության ոլորտներն են հակատանկային, հակակալանային տարրեր դասի հրթիռների, փոքր ու միջին հեռահարության հրետանային համակարգերի, օդային միջոցների կողմից կիրառվող զինատեսակների, պայթյուցիկների մշակումներն ու արտադրությունը³¹⁰:

TÜBİTAK-ը մշակում է գերճշգրտ սպառափնուրյուն համակարգեր, որոնք կիրառվում են օդուծի կողմից և նախատեսված են ցամաքային միջոցներից հարվածելու համար: Ամերիկյան MK-84 հաստակ ունեցող վերափոխված են կառավարվող գերճշգրտ սպառափնուրյուն: Դ-ա միկրոէլեկտրոնիկայի, տիեզերական կառավարման համակարգերի ոլորտի լրջագույն աշխատանք է, և այդ գործում բուրբական ընկերության ձեռքբերումները նշանակալից են³¹¹:

Թուրքիայի հյուսիսարևելյան Գիրեսում և Տրապիզոն նահանգներում գործում են իմնականում արտոնագնաների արտադրության ոլոր-

³⁰³ G3 piyade tufeginin yerine Sarsilmaz'in önerisi M4, Star, 05.11.2007

³⁰⁴ Sarsilmaz'a ABD den ortak geldi, Haber 7, 26.09.2005, Yeni Safak, 02.12.2007

³⁰⁵ Makin ve Kimya Endustrisi Genel Mudurlugu, 2008 yili Faaliyet Raporu, s.17

³⁰⁶ MKE'den Mehmetcik'e yeni robot silah, Zaman, 23.04.2008

³⁰⁷ Makin ve Kimya Endustrisi Genel Mudurlugu, 2008 yili Faaliyet Raporu, s. 13

³⁰⁸ Gönül, En önemli tehdit terör örgütü, <http://www.haber7.com>, 10.11.2009

³⁰⁹ MKEK'den süper silahlar geliyor, <http://www.haber3.com>, 25.10.2009

³¹⁰ http://www.sage.tubitak.gov.tr/en/proje_uzun.asp

³¹¹ TÜBİTAK akıllı bomba ve silü üretti, <http://www.ssm.gov.tr/TR/dokumanasyon/basinbuleteni/Pages/20090427.aspx>

տում մասնագիտացած Girsan և TISAŞ ընկերությունները: Girsan ընկերությունը հիմնադրվել է 1994 թ. և արդեն 1995 թ. ներկայացրեց իր առաջին Yavuz 16 մոդելի ատրանակները: Եռքը 200 աշխատակիցներ ունեցող այդ ընկերությունը տարեկան 60 հզ. միավոր ատրանակների արտադրության հնարավորություն ունի: 2008 թ. ընկերությունը ստանձնեց ՏՋ-ի համար 10 հզ. միավոր Yavuz տիպի ատրանակների մատակարարման գործը²¹²:

TISAŞ ընկերությունը հիմնադրվել է 1993 թ. Տրապիզոնում որպես KOSGEB և MKEK ընկերությունների համատեղ կազմակերպություն: Այն մասնագիտացած է ատրանակների արտադրության ոլորտում, արտադրատեսակներն են Zigana, Kanuni և Fatih մոդելի ատրանակները, դրոշմ կիրառվում են ՋՈՒ-ի և Երկրի անվտանգության մարմինների համակարգում²¹³: Ընկերությունը 2004 թ. հայտարարված մրցույթի շրջանակներում ՊՆ-ի հետ ստորագրած սլաձմնագրով ստանձնեց նախարարությանը մեկ տարվա ընթացքում 70 հզ. միավոր ատրանակների հանձնման պարտավորությունը: Ընկերությունը պատվերներ է ստանում նաև արտասահմանյան այլ երկրներից²¹⁴: Թուրքական ընկերությունները փաստորեն վաղուց արդեն փոքր սպառազինությունների բնագավառում հասել են մեծ հաջողությունների՝ մատակարարելով սեփական ՋՈՒ-ի պահանջարկի զգալի մասը:

3.4. Ռազմական կապի, էլեկտրոնային պաշարի, հետախուզության ու հրամանատարական հսկման համակարգեր

Վերջին տարիներին տեխնոլոգիական նորագույն մշակումները ռազմական ոլորտում հանգեցրեցին նոր մարտավարական մեթոդների մշակմանը, որոնք էականորեն ազդում են իրակամագիտող ռազմական գործողությունների առավել արդյունավետ ու օպերատիվ կատակարման ու մարտական գործողությունների ելքի վրա: Մարտական գործողությունների միջազգային փորձը ցույց է տալիս, որ տեղիկառվական ու կատակարման նորագույն համակարգերը զգալիորեն բարձրացնում են ՋՈՒ-ի կատակարման ու մարտակարգությունը: Ժամանակակից ռազմական գործողությունների վարման տեսանկյունից էլեկտրոնային, ազդարարման ու կապի, կատակարման համակարգերը, ինչպես նաև ռադիոէլեկտրոնային պաշարի միջոցները ունեն առանցքային նշանակություն, և առանց նման զարգացած համակարգերի ժա-

մանակակից մարտական գործողությունների իրականացումը գործնականում զգալիորեն նվազեցնում է դրանց արդյունավետությունը: Ժամանակակից ռազմական գործողությունները բնութագրվում են մեծ բանակությամբ տարրեր տեսակի գործերի մասնակցությամբ, տարածական ընդգրկումով, մեծ ինքնամկրությամբ, իրավիճակի կտրուկ փոփոխություններով: Այդ սեմնը հանգեցնում է գործերի կատակարման համար մեղմամեջտ տեղեկության ծավալի մեծացման և պահանջում է դրա մշակման տեղողության կրճատում: Նման պարագայում մարդկային գործունի փոխարինում են կառավարման ավտոմատ համակարգերը²¹⁵:

Թուրքիայի ռազմական արդյունաբերության ոլորտում և ՋՈՒ-ի արդյունահանման ռազմավարության շրջանակներում լուրջ կարևորություն է տրվում դեկալարման ու վերահսկողության համակարգերի, էլեկտրոնային հետախուզության ու ռազմական կապի միջոցների արտադրությանն ու զորատեսակներում դրանց ներդրմանը:

ASELSAN ընկերությունը ստեղծվել է 1975 թ. և հանդիսանում է Թուրքիայի ՋՈՒ-ի զարգացման հիմնադրամի կազմակերպություն: Ընկերության հիմնական նպատակը ՋՈՒ-ի ու անվտանգության մարմինների համար կապի և էլեկտրոնային սարքավորումների տեղակայման արտադրությունն է: Ընկերությունը նախագծային ու արտադրական ծրագրեր է իրականացնում հետևյալ ոլորտներում. ռազմական և քաղաքացիական կապի միջոցներ, էլեկտրոնային պաշարի համակարգեր, ՌՏԿ-ներ, սպառազինության համակարգեր, կրակի կատակարման ավտոմատ, հրամանատարական հսկողության ու հետախուզության համակարգեր, էլեկտրասպիկկական սարքավորումներ, կառավարման և ճակիչացիայի, ավիոնիկայի համակարգեր²¹⁶:

ASELSAN ընկերությունը 1984 թ. սկսած մշակում է արտադրում է հատուկ սարքավորումներ ու համակարգեր, ռադիոէլեկտրոնային պաշարի ու հետախուզության ոլորտում: Լուրջ հաջողություններ է գրանցել նշված ոլորտներում, ինչպես նաև ցամաքային ու օդային համակարգերի մշակումների ու արտադրության ոլորտում, որի շրջանակներում շարունակաբար իրականացվում են նախագծային նոր աշխատանքներ:

Տեղիկառվական համակարգերի ու ռազմական կապի միջոցների ծրագրի շրջանակներում ընկերությունը ՋՈՒ-ին է հանձնել սեփական

²¹² <http://www.yavuz16.com>

²¹³ <http://www.trabzonsilah.com>

²¹⁴ Trabzon Silah Fabrikası, zskere 70 bin adet tabanca yapacak, Zaman, 08.05.2004

²¹⁵ Է. Ա. Մամարյան, Չորրորդ կառավարման ավտոմատացված համակարգի փոփոխման որոշ պրոբլեմներ, Հայկական քանակ. 3 (29) 2001, էջ 30

²¹⁶ <http://www.aselsan.com.tr>

արտադրության տարբեր դասի ռազմական ռադիոընդունիչներ, ներքին տեղեկատվական հաղորդիչներ:

Ընկերության արտադրացանկին է սյտակնում Մարտավարական դաշտային պաշտպանության համակարգը (TASMUS), որն իրականացնում է ռազմական գործողությունների հակոդությունն ու կառավարումը կենտրոնի կողմից և օպերատիվ տեղեկատվություն ապահովում հրամանատարական կետի ու այլ միավորների միջև: Այդ համակարգը Թուրքիայի ՋՌ-ում ներդրվել է 2000 թ., և ընկերությունը աշխատանքներ է իրականացնում բանակի համար միացյալ օպերատիվ տեղեկատվական դաշտի ստեղծման ուղղությամբ²¹⁷: Ընկերության կողմից նախատեսվում էր 2009 թ. ընթացքում ՋՌ-ին հանձնել ավելի կատարելագործված (TASMUS-G) համակարգը, ինչը կապահովի ցանցակենտրոն պատերազմների ժամանակակից տեսությունից բխող բանակի միացյալ տեղեկատվական դաշտը²¹⁸:

Ընկերության կողմից ՋՌ-ում ներդրված X-Band արբանյակային կոնտրոլիսցիոն համակարգը հանդիսանում է բուրբակյան բանակում ներդրված առաջին ռազմական արբանյակային կապի ցանցը, որը ՋՌ-ի համար ապահովում է արագ կապի միջավայր՝ TÜRSAT-2A արբանյակի միջոցով²¹⁹:

Թուրքական ՋՌ-ում ներդրվել են ընկերության կողմից արտադրված MILKED 3T2, MILKAR 3AV մակնիշի շարժական տեղեկատվական ռադիոստիչ և տեղորոշիչ համակարգեր, որոնք իրականացնում են արագ և գալյուն էլեկտրոնային հեռախոսակապ: Համակարգի տարրեր մոդիֆիկացիաները նախատեսված են ցամաքային, օդային ու ծովային պատճառների համար: MILKAR 3AV մակնիշի հեռախոսակապ համակարգը իրականացնում է նաև հակառակորդի օպերատիվ հաղորդակցությունների խափանման ու արգելակման գործողություններ: Այդ համակարգը կցված է Land Rover 110 մակնիշի բուրբակյան արտադրության մեքենաներին: ASELSAN-ի մշակման Մարտավարական էլեկտրոնային հեռախոսակապ, ռադիոաղորդության հայտնաբերման (*Direction Finding*) համակարգը ռազմական գործողությունների պայմաններում իրականացնում է հակառակորդի հաղորդակցությունների ուղղությունների որոնման, որման, լսման ու ձայնագրման օպերատիվ գործողություններ: Ընկերության տեղադրված է Otokar ընկերության արտադրության AKREP ՋՄ-ի մեք, ինչը

հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում համակարգը տեղափոխել տեղից տեղ²²⁰:

Մի շարք նախագծային ու արտադրական նախագծեր են իրականացվում ռազմական կապի ու հրամանատարական հսկողության համակարգերի (C4ISR) բնագավառում, ինչպես օրինակ մոբիլ հրամանատարական հսկողության կայաններ, հրամանատարական հսկողության գրասենյակային կենտրոններ և այլն: Ոլորտում կարևորագույններից է համարվում BAIKS-2000 մարտկոցի կրակային կառավարման համակարգչային համակարգը, որը դաշտային ռազմական գործողությունների ընթացքում ապահովում է փրկախմբի ոչնչացման արագ և դիպուկ կրակի ավտոմատ կառավարումը²²¹:

MARS V մոդելի հետախուզական գրահամեքենան իրականացնում է ռազմական գործողությունների ընթացքում փրկախմբի հայտնաբերումն ու հավաքված տվյալները փոխանցում հրամանատարական հսկողության և կրակի կառավարման կետերին: Համակարգն աշխատում է գիշեր-ցերեկ պայմաններում, համակարգչային ապահովման շնորհիվ: Դրանք տեղակայված են Cobra դասի մեքենաների վրա:

Ընկերությունն արտադրում է նաև տարբեր դասի կրիպտատարրեր, ցանցային կրիպտոհամակարգեր, կրիպտոհեռախոսներ և վերանման սարքեր:

Ընկերությունը, ներքին անվտանգության համայնքում, իրականացրել է նաև Ժանդարմերիայի միասնական կապի համակարգի (JEMUS) ծրագիրը:

Բացի դրանից, ընկերությունն աշխատանքներ է իրականացնում հակաօդային ռադիոտեղորոշման կայանների (այսուհետ՝ ՌՏԿ) ստեղծման ուղղությամբ և արդեն 2009 թ. ՋՌ-ին այն հանձնեց առաջին բուրբակյան նախագծման ՌՏԿ-ն²²²:

Ընկերության կողմից արտադրված հանրային անվտանգության տեղեկատվական համակարգերի տարբեր մոդելներ կիրառվում են երկրի անվտանգության տարբեր մարմինների կողմից: Բացի այդ, ընկերությունն իրականացնում է նման դասի համակարգերի վաճառքներ: 2006 թ. ընկերությունը ԱՄՆ-ին է վաճառել 4700 APCO թվային ռադիոհամակարգեր, իսկ 2007 թ. Պակիստանի ՊՆ-ի հետ ստորա-

²¹⁷ <http://www.aselsan.com.tr>

²¹⁸ Yeni Nesil Taktik Saha Mubabere Sistemi (TASMUS-G), ASELSAN, N 1, 2009, s. 40-43

²¹⁹ Aselsan: One of the leading company in Global Defence Market, Defence Turkey, Volume:2, Issue: 8 Year 2007

²²⁰ <http://www.aselsan.com.tr>

²²¹ http://www.aselsan.com.tr/urun.asp?urun_id=86&lang=tr

²²² Aselsan hava savunma erken ikaz radarini teslim etti, <http://www.sasad.org.tr/haberler.asp?id=99, 12.01.2009>

գրված պայմանագրի շրջանակներում ընկերությունը վաճառել է SK-2 4700 մոդելի կրիստալոգրիտաձև կարգեր²²¹։

Ընկերությունը «2112 GSM կրիստալոգրիտների (վերածանն) նախագծի» շրջանակներում իրականացրել է մշակումներ GSM դասի բջջային կրիստալոգրիտների նախագծման ոլորտում և 2007 թ. ավարտեց առաջին նախատիպերի արտադրությունը։ Հնուսխումբը ապահովում են գաղտնի հեռահաղորդակցություն և ապահովված են գաղտնալուծման համաձայն՝ խմբաբանակալին արտադրությունն սկսվելու էր 2008 թ. և կիրառվելու էր անվտանգության ու պետական համակարգի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից։ Նախատեսվում էր Թուրքիայի կարիքների համար արտադրել 10 հզ. միավոր հեռախոս²²²։

2007 թ. մայիսին ՊԿ-ի ու ASELSAN ընկերության միջև ստորագրված պայմանագրի շրջանակներում ընկերությունը ստանձնել է Թուրքիայի ՁՌ-ի համար գերկարճալիք փոքր հեռավորության վրա աշխատող ռադիոհամակարգերի մատակարարման գործընթաց։ 18 մլն դոլար արժեքի դրամային աշխատանքներ են ավարտվում և ապահովվելու են փոքր ստորաբաժանումների ներքո և կառավարում²²³։

2007 թ. հունիսին ստորագրված պայմանագրով ASELSAN ընկերությունը Հյուսիսային Կալյուսի Թուրքական Հանրապետության (ՀԿԻՀ) անվտանգության մարմինների կողմից էր մատակարարելու սեփական արտադրության PRC 9651 մոդելի ձեռքի թվային ռադիոընդունիչներ 678 հզ. դոլար ընդհանուր արժեքով²²⁴։ Մինտյոն ժամանակ, ընկերությունը 2006 թ. հաղորդ ճանաչվեց Ուրուգվայի ՁՌ-ի կարիքների համար ռադիոէլեկտրոնային սպարաթի ու ռադիոկապի միջոցների ձեռքբերման համար հայտարարված միջազգային մրցությունում։ 3 մլն դոլար արժեքի դրամային աշխատանքի համաձայն՝ ընկերությունն այդ երկրի բանակին էր մատակարարելու ռադիոհամակարգերի խափանման շարժական կայաններ ու ներքին հաղորդակցման թվային ռադիոհամակարգեր²²⁵։

2004-2006 թթ. ընթացքում ASELSAN ընկերության կողմից իրականացված հեռագրառական-փորձարարական ստորկողորդական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 250 մլն դոլար²²⁶։

Ընկերության վերջերս հաջողված ծրագրերից էր համարվում հակահարձակական գործողությունների, ճանաչման իրավիճակների ու հետախուզական դիտարկման ոլորտում կիրառվող IZCI որոտ համակարգը, որն ստեղծվել է տեխնոլոգիական մշակումների ծրագրի շրջանակում։ Հեռակառավարվող այդ համակարգը բացի տվյալների փոխանցումից հնարավորություն ունի իր լաբորանի դիտարկման համակարգի կողմից հայտնաբերված թիրախի ուղղությամբ կրակ արձակել։ Դիտարկման համակարգը, որը գինված է հետստատեսային ու ցերմային տեսախցիկներով, գործում է նաև վիշերային պայմաններում և իրականացնում տվյալ տարածքի կլիմայական պայմանների մասին տվյալների փոխանցում կառավարման կենտրոն²²⁷։ Վերոնշյալ համակարգի հետ միաժամանակ ընկերությունը աշխատանքներ է իրականացնում նաև վերջրյա և ստորջրյա ճնանաստիպ միջոցների, որոնք ստացել են Deniz անվանումը, արտադրության ուղղությամբ, որոնք կիրառվելու են կարևորագույն նավահանգիստների, ոսգնարագանների ու հանգույցների իսկողության նպատակով²²⁸։

Ընկերությունը աշխատանքներ է իրականացնում Թուրքիայի ՁՌ-ի կարիքների համար ՌՏԿ-ների արտադրության ծրագրի ոլորտում, ինչը հաստատվել էր 1991 թ. հունվարին՝ Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում։ Աշխատանքների առաջին փուլում ՁՌ-ին հանձնվեցին ցամաքային դիտարկումների համար նախատեսված չորս 200 ՌՏԿ-ներ ASKARAD ՌՏԿ-ները շրջանակներում։ ASKARAD անվանումն ստացած ՌՏԿ-ները սահմանային դիտարկումների նպատակով կիրառվում են Մալայալիայի, Մալեզիայի, Արգենտինայի ու ՀԿԻՀ-ի ՁՌ-ում։ ARS-2000 մոդելի Դիտարկման և կրակի կառավարման ՌՏԿ-ն դարձավ թուրքական նախագծման ու արտադրության առաջին արտադրանքն այդ ոլորտում²²⁹։

2008 թ. հունվարից ASELSAN ընկերության կառուցվածքային ոլորտում նոր վերակազմավորումներ էին իրականացվելու, որի արդյունքում որպես առանձին հեռագրառական բաժիններ ծրագրեր են իրականացվելու Պաշտպանական համակարգի տեխնոլոգիաների և ՌՏԿ,

²²¹ Aselsan Faaliyet Raporu 2008, <http://www.aselsan.com.tr>

²²² Aselsan, TSK için kriptom telefon üreticisi, Hürriyet, 27.10.2007

²²³ TSK'ya yeni mali teklisi, Hürriyet, 09.05.2007

²²⁴ Aselsan, N. 2, Ağustos 2007, s. 25

²²⁵ Նույն տեղում, էջ 26

²²⁶ Aselsan, N. 2, Ağustos 2007, s.28

²²⁷ Aselsan One of the leading company in Global Defence Market, Defence Turkey, Volume:2 Issue: 8 Year: 2007

²²⁸ Aselsan'dan insansiz sistemleri, ASELSAN, N. 1, 2009, s.26

²²⁹ Նույն տեղում:

էլեկտրոնային պաշարի ու հեռախոսային համակարգերի խմբային բաժինները²³²:

Աերոնշաղ ոլորտում առաջատարներից է թուրքական HAVELSAN ընկերությունը, որը հիմնադրվել է 1982 թ.²³³ որպես թուրք-ամերիկյան համատեղ ընկերություն: Սակայն 1985 թ. ընկերության կապիտալի, բաժնետոմսերի 98%-ն անցել է Թուրքիայի ՋՈՒ-ի գաղափարապետ հիմնադրամին: Ընկերության հետազոտական աշխատանքներն ու արտադրական գործընթացն իրականացվում է հիմնականում հրամանատարական հսկողության, համակարգչային, հեռախոսական համակարգերի, հակաօդային, ռազմածովային կապի, փարձասարքերի ու ուսումնական, կառավարման համակարգերի ու անվտանգության էլեկտրոնային միջոցների ոլորտում: HAVELSAN ընկերությունը, 2006 թ. մայիսին Թուրքիայի ՊՆ-ի հետ ստորագրած պայմանագրով, ստանձնեց Թուրքիայի ՑՁ-ի համար միասնական հրամանատարական հսկողության (C2) տեղեկատվական համակարգերի ենթակառուցվածքի (KKBSAY) զարգացման նախափուլը, որով գործերում պետք է ամբողջովին ներդրվի միասնական կառավարման ու տեղեկատվական համակարգ²³⁴: Նախափուլը վերջնականապես ավարտվեց 2008 թ., և այդ համակարգը ներդրվեց ՑՁ-ում, ինչն ապահովում է ՑՁ-ին պատկանող ողջ տեղեկատվական համակարգերի միև մույաների փոխանցման միասնական դաշա²³⁴:

Կոչ Savunma թուրքական ընկերությունը 2008 թ. ավարտեց ՋՈՒ-ի Տեղեկատվական համակարգի (TBS) նախագծի աշխատանքները, և այն ներդրվեց ԳԸ-ի համակարգում: Համակարգն ապահովում է ՋՈՒ ԳԸ-ի և գործերի տեսակների հրամանատարությունների, Ժամայանքների ու Առաջնայն անվտանգության հրամանատարությունների, ՊՆ-ի միջև ճարտավարական, րիկուերային, կադրային ու տեղեկատվական օպերատիվ տվյալների ամբողջական փոխանցումը²³⁵:

TÜBİTAK-ին պատկանող Ազգային էլեկտրոնիկայի և կրիպտոլոգիայի հետազոտական ինստիտուտի (UEKAE) կողմից մշակվել է հատուկ կրիպտոհամակարգ (SIR), որն ապահովում է գաղտնի փաստաթղթերի անվտանգ ու պաշտպանված փոխանցումները տարբեր

երկրների միջև: Նախագիծն իրականացվել է ինստիտուտի ինժեներների ու մասնագետների կողմից և համարվում է թուրքական նախագծման միակ նման համակարգը: 2009 թ. հետազոտական այդ ինստիտուտը պատվեր է ստացել ՆԱՏՕ-ից՝ 600 միավոր նման համակարգ մատակարարելու վերաբերյալ: ՆԱՏՕ-ի անդամ երկրներում ներդրվելիք համակարգերը ապահովելու են երկրների միջև հատուկ նշանակության գաղտնի փաստաթղթերի ու տվյալների փոխանցումը: Թուրքական արտադրության այդ համակարգը անցել է ՆԱՏՕ-ի ռազմատեխնոլոգիական չափանիշների բոլոր փորձարկումները: Թուրքիայի համար առավել կարևորություն է ներկայացնում այն, որ որոշ ընկերություններ իրենց նախագծերով մասնակցություն են ունենում ՆԱՏՕ-ի ռազմական տարբեր ծրագրերում: Ինքնիտուտի որոշ արտադրանքներ նախատեսվում է ՆԱՏՕ-ի պատվերների շրջանակում մատակարարել 2010 թ.²³⁶:

2009 թ. ռազմական տեղեկատվական համակարգերի ոլորտի ամերիկյան Harris Corporation ընկերությունը ստաիկայում իրականացնելու է ներդրումներ թուրքական ռազմաարդյունաբերական ոլորտում: Ըստ պայմանագրվածության²³⁷ թուրքական կապի և ռազմական համակարգերի Atel Telekomunikasyon ընկերության հետ համատեղ, նախանական 2 նգ դոլար ներդրումներով, իրականացվելու են համատեղ արտադրական ծրագրեր, որոնք նախատեսվում են մատակարարել Թուրքիային ու մի շարք մերձավորարևելյան երկրների: Atel Telekomunikasyon ընկերությունը ստեղծվել է 1997 թ. Անկարայում, որը ներկայումս երկրի տարածքում ունի 36 մասնաճյուղեր²³⁷:

Թուրքական ընկերությունները ակտիվ աշխատանքներ են տանում ՋՈՒ-ում կապի ու տեղեկատվական, հրամանատարական հսկողության նորագույն համակարգերի ներդրման ուղղությամբ, ինչը բանակի կրամատակարարության կողմից դիտվում է որպես առաջնահերթ խնդիրներից մեկը: Բացի Թուրքիայի ՋՈՒ-ի կարիքների ապահովմանն ուղղված ծրագրերից, ինչպա ընկերությունները տարբեր երկրների հետ ստորագրված պայմանագրերի շրջանակներում իրականացնում են նրանց ՋՈՒ-ի կապի ու տեղեկատվական համակարգերի արդիականացման աշխատանքներ ու վաճառք:

Տեղեկատվական, կապի ու հրամանատարական հսկման համակարգերի ոլորտում գործում են նաև նորաբաց մի շարք այլ ընկերու-

²³² Azelesan' da yeniden yapılanmabaşlıyor, <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/200711105.aspx>
²³³ Havelsan, 2007 Faaliyet raporu, <http://www.havelsan.com.tr/Yatirimcilikheskileri/FaaliyetRaporu.aspx>
²³⁴ <http://www.havelsan.com.tr/SisCoz/Projeler.aspx>
²³⁵ TSK' da Büyük Bilgi Projesi, <http://www.trt.gov.tr>, 2008-01-31;
<http://www.kocsavunma.com/guncel.html>

²³⁶ NATO, TÜBİTAK' a 600 adet "SIR" siparişi verdi, Milliyet, 23.02.2009, NATO'nun güzelliklerini Türk yapımı 'ar' saklayacak, Radikal, 04.09.2009
²³⁷ U.S. Defense Industry Firm To Invest In Turkey, <http://www.turkishpress.com>, 26.04.2009

ՌԱԶՄԱՍՈՎԱՅԻՆ ՌԻՖԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՑՈՒՄԸ ՈՒ
ՌԱԶՄԱՍԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Ռազմական ավիացիա, ԱՅՄ-ներ

ՌՕՈՒ-ը բուրբալան ՋՌՒ-ի գործառնությունների մեջ միշտ էլ առանց-րային տեղ են գրառնելը: ՌՕՈՒ-ը, հազիցամ լինելով էիմնականում ա-մերիկյան արտադրության տեխնիկայով է արքրավորումներով, իրենց վրա կրում են նաև կիրառության և դերակատարության անմրիկյան հիմնարար սկզբունքները: Իսկ վերջիններին մոտ ավիացիայի դերա-կատարությունը միշտ բարձր էինելի վրա է գտնվում, որը բուրբալան հրամանատարությունը ճիշտ է հասկանում և գնահատում: Պատա-հախան չէ, որ ՋՌՒ-ի համայիր արդիականացման շրջանակում գրառն ներդրումները բաժին են հասնում ռազմական ավիացիային:

Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործառնիր կոմի-տեն 2005 թ. ողալում կայացրեց ուժեղացնել երկրի բիկունրային ներա-կատարվածքները, ինչի համար մտաղիր է առաջիկա 10 տարվա ըն-րացրում 50 մլրդ դոլարի ներդրումներ կատարել այդ ողրալում: Հիմնա-կանում պաշտպանական էիմնաղամի հաշվին կատարվելիք այդ ներդրումներն շարքում են սպազայի ռազմական ողղարիտենր հա-մարվող ATAK կռչված 50 միավոր հարվածային ողղարիտենրի և հատկապես վերջին տարիներին շատ կիրառվող AWACS ինրնարիտ-ենրի ձեղրբերումը²⁷⁹:

Թուրքիայի կազալատուական մրազրերում տեղ են գտել հետևյալ նախազձեղրը ապազայի ռազմական ինրնարիտենրի, 50 միավոր հար-վածային ողղարիտենրի, ինչպես նաև ՋՌՒ-ի համար 50 միավոր ընդ-հանուր օգտագործման ողղարիտենրի ձեղրբերում: Թուրքիայի ռազ-մական ողրառի պատասխանատուները ներկալումս առաջնային են համարում ՌՕՈՒ-ի սպատազինուրյան, միոցնելի կատարելազոր-մանն ու ազելի նոր տեխնիկայի ձեղրբերման խնդրները:

Դեռես 1997 թ. Պաշտպանական արդյունաբերության գործառնիր կոմիտեն հայտարարեց բանալի համար 145 միավոր ռազմական, հարվածային-հետախտգական ողղարիտենրի համատեղ արտաղրու-րյան և ձեղրբերման նախազձի (ATAK) մասին, որի ընդհանուր ար-մեղը կազմում էր շուրջ 2 մլրդ դոլար: Արդյուրյին մասնակցելու հայտեր ներկայացրեցին անմրիկյան Bell Textron ընկերությունն իր Super Cobra

²⁷⁹ Տես Թուրքիայի ռազմաարդյունաբերողների միավորման կայք՝ <http://www.sasad.org.tr>

²⁷⁷ Akşam, 21.11.2005

և ռուսական «Բոսփորոսլուքուրթ»-ն ու «Անատ» զործարանը իսրայելական բորո նավիգացիոն, կողային ուղղորդման համակարգով զինված Ka-50-2 ուղղաթիռներով: Ի դեպ, ռուսական կողմն առաջարկել էր ավելի նպատակաբեր պայմաններ՝ այդ երկրներ արտահանման նպատակով Թուրքիայում նման ուղղաթիռների արտադրություն հիմնելու համար: Չնայած առաջարկված նպատակները պայմաններին 2004 թ. նախին բորոսական կողմը դադարեցրեց մրցույթն ստանց հարող կողմին ստեղծանելու²⁴⁰: Անճնայն հավանականությամբ բորոսական կողմը ներարկել է 1 ամերիկյան կողմի ճնշմանը բոլջ շուտով ռուսական ռազմաարդյունաբերական ընկերությունների ներգրավել նման խոչըր ռազմական նախագծում:

Թուրքական բանակի համար տպառնջվորյան ձեռքբերման առաջնային նախագծերի շարքում ԳԱԿ-4-ն չարբ 50 ռազմական ուղղաթիռների ձեռքբերման մրցույթ հայտարարեց, որին մասնակցում էին ռուսական, հարավաֆրիկյան, իտալական և ֆրանս-գերմանական ընկերությունները: Ելկար ձգվածակերպից հետո ֆրանս-գերմանական EADS Eurocopter (Tiger)-ը և ռուսական (Ka-50-2)-ը զորս մնային մրցույթից²⁴¹:

Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյուլուր 2006 թ. օգոստոսին հայտարարեց, որ ԶԶ-ի իրամասնատրոսյան մարտավարական հետախուզության և հարվածային ուղղաթիռների նախագծի (ATAK) շարբ կարունակվեն քունակությունները հարավաֆրիկյան Denc Aviation ընկերության առաջարկած Roovalk CSH-2 և իտալական Augusta Westland ընկերության A-129 Mangusta ուղղաթիռների շարբ: Կարևորություն էր ներկայացնում այն, որ երկու ընկերություններն էլ պարտատեսիանություն են հայտարարել Թուրքիայի հետ կիմնել համատեղ արտադրություն, իսկ իտալական ընկերությանը մուլցիսի շահագրգորություն էր հայտնել իր գործարանը տեղափոխել Թուրքիա²⁴²:

Արագվոն էլ, որ ուղղաթիռների ձեռքբերման մրցույթին մրցույթի վերջնական արդյունքները կիրառարարվեն 2006 թ. վերջին, սակայն նույն տարվա դեկտեմբերին կաշայած պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի միտում այդ հարցով ոչ մի որոշում չկատարվե: Որոշ տեղեկությունների համաձայն միտուլ բնրացում

կատակարության ներկայացուցիչները առաջարկել են հարող մասնաչել կամ հարավաֆրիկյան, կամ էլ իտալական ընկերություններից որևէ մեկին, սակայն զինվորականները պնդել են երկու կողմին էլ նախագծում ներգրավելու անհրաժեշտության մասին²⁴³:

2008 թ. գարնանը վերջնական որոշում կաշայվեց ATAK նախագծի իրականացման վերաբերյալ: Որոշումը կաշայվեց հօդուտ իտալական AugustaWestland ընկերության, որի հետ կերբված պայմանագրով նախատեսվում է Թուրքիայում սկսել 50 միավոր (նետապայում ևս 40 միավորի արտադրության հնարավորությունը) T-129 ռազմական ուղղաթիռների արտադրությունը, որի գործում որպես կիմնական կապալատ է ընտրվել յուրական TUSAŞ ընկերությունը: Նախագծի արները կազմում է 1 մրդ եկր: Արտադրական գործընրացում մասնարածին կունենան՝ նաև մի շարբ բորոսական ռազմաարդյունաբերական ընկերություններ, ինչպես օրինակ ASELSAN-ը՝ ծրարայինն ապախովման ու տարբեր սարքավորումների արտադրության և ROKETSAN-ը՝ հրերային միջոցներով համարկուտ գործում: Իտալական ընկերությունն ապահովելու է բորոսական արտադրողներին տեխնոլոգիաներով ու աներումչոլ գիտատեխնիկական քազայով: T-129 ռազմական ուղղաթիռների արտադրության ու արտահանման իրավատրությունները, ինչպես նաև սեփականության իրավունքը պատկանում են Թուրքիային: Իտալական ընկերությունը նույնիսկ տարածաշրջանային կենտրոն կիմնեց Թուրքիայում՝ շուրբ 20 իմեներների մշտական աշխատանքային ներգրավվածությամբ²⁴⁴:

Որպես առաջին քալ՝ 50 միավոր ուղղաթիռների արտադրությունից հետո նախատեսվում է սկսել արդեն ավելի մեծ խորքանակի արտադրություն՝ հետագայում իրականացնելով նաև որանց արտահանումը՝ Թուրքիան շարծնելով ռազմական ուղղաթիռների արտադրության տարածաշրջանային կենտրոն: Ըստ իտալայի մասնագետների՝ առաջիկա 10 տարիների ընրացում նախագծի հաջող ընրացրի պարապայում Թուրքիան կարող է համաշխարհային շուկայում ռազմական տեխնիկայի արտահանման գլավի դերակատարություն ստանճնել²⁴⁵:

Այսպիսով, Թուրքիան կերոչյալ նախագծով, մի կողմից իրականացնում է երկրի բանակի ՌՕՌՆ-ի համաքումը նորակայուն ռազմական ուղղաթիռներով, մյուս կողմից էլ կիմնում տեղական արտադրություն՝

²⁴⁰ A. Turyak, O novon avriacizimom razreze v Turzium, IHDHedR

<http://www.imeg.ru/news/stat/2005/11-03-03.htm>

²⁴¹ Turkey Shortlists 2 Attack Helicopter, <http://www.defencenewsbydaily.com/2006/07/turkey-shortlists-2-attack-helicopters/index.php>

²⁴² Kara Kuvvetleri, helikopter koruyunda 2 yem firma du anlagi, Milliyet, 30.06.2006

²⁴³ Fakuk-taruz helikopteri ihalesinde yine karir cikmadik, Zaman, 13.12.2006

²⁴⁴ 1 milyar dolarlık helikopter ihalesince Türkiye ihazat merkezine dönüştü, Hürriyet, 07.05.2008; Milli taruz helikopteri havalandiriyor, <http://www.haber3.com>, 26.10.2009

²⁴⁵ Türkiye Atak'a kalktı, Yeni Şafak, 24.06.2008

փորձելով դուրս գալ ռազմական տեխնիկայի վաճառքի համաշխարհային շուկա:

2007 թ. հունվարին Թուրքիան ԶՁ-ի համար 10 բեռնատար-տրանսպորտային ուղղափոխների գնման մրցույթ հայտարարեց: Գործարքի արժեքը գնահատվում էր շուրջ 500 մլն դոլար: Մրցույթի հիմնական հավակնորդները ամերիկյան և ռուսական ընկերություններն էին, հատկապես Boeing ընկերությունը իր CH-47 Chinook, Sikorsky ընկերությունը՝ CH-53 Super Stallion և ռուսական ուղղափոխչինակյան ընկերությունն իր Mi-26 Halo ուղղափոխներով: Նշենք, որ մինչև մրցույթի պաշտոնական հայտարարումը, Boeing ընկերությունն արդեն նախնական կապեր էր հաստատել թուրքական իշխանությունների հետ՝ 10 ուղղափոխների վաճառքի հետ կապված²⁶⁴: Թուրքիայի կողմը հետագայում նախապատվությունը տվեց ամերիկյան CH-47 Chinook ուղղափոխներին՝ վաճառքի վերաբերյալ դիմում-ատաշարկ ներկայացնելով ամերիկյան կառավարությանը: Նշենք, որ այդ ուղղափոխների ձեռքբերմամբ թուրքական ՋՌԻ-ը կհամադրվեն ծանր տրանսպորտային ուղղափոխներով, որոնք մինչ այդ լիային բանակում: Օդային փոխադրումների համար հիմնականում կիրառվում էին ամերիկյան S-70 Black Hawk ուղղափոխները²⁶⁵: 2009 թ. դեկտեմբերին Պենտագոնն արդեն դիմեց ԱՄՆ Կոնգրեսին՝ Թուրքիային շուրջ 1,2 մլրդ դոլար արժույթի 14 միավոր CH-47 Chinook ուղղափոխներ և անհրաժեշտ այլ պահեստամասեր վաճառելու վերաբերյալ՝ հավաստիացնելով, որ «այդ գործարքը չի ազդի տարածաշրջանում ուժային հավասարակշռության վրա»²⁶⁶:

Ելնելով ամերիկյան ընկերությունների ներդրումների համար Թուրքիայի նպատակադր արձանաներից՝ Թուրք-ամերիկյան խորհրդի (ATC) վարչական խորհրդի նախագահ Ք. Սկոտլորդիսը 2005 թ. հոկտեմբերին հայտարարեց, որ ցանկանում են Թուրքիան դարձնել ամերիկյան Sikorsky ընկերության ուղղափոխները տարածաշրջանի երկրների վաճառելու կենտրոն: Ամերիկյան Sikorsky ընկերության հետ պայմանագրի շրջանակներում Թուրքիան ծրագրել է իր ՌՇՈՒ-ի համար գնել այդ ընկերության արտադրության 17 միավոր S-70B SEAHAWK ռազմական ուղղափոխներ, որոնք նախատեսվում էին րա-նակին մատակարարել 2009 թ.: Թուրքիան այդ պայմանագրի շրջա-

նակներում նախկինում արդեն ձեռք էր բերել իշխյալ ուղղափոխի տարատեսակ համարվող BLACKHAWK ուղղափոխներ²⁶⁷:

2009 թ. ապրիլին Մոսկվայում անցկացված Ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսի շրջանակներում ամերիկյան Sikorsky ընկերության ու թուրքական Alp Havacilik, TUSAŞ, Milsom ընկերությունների միջև ստորագրվեց համագործակցության պայմանագիր: Sikorsky ընկերության տնօրենի տեղակալ Ս. Էստիլը թուրքական կողմին լայնամասշտաբ համագործակցության առաջարկ ներկայացրեց, քան որի, երբ թուրքական ՋՌԻ-ի կարիքների համար ձեռքբերվելիք 100 միավոր ուղղափոխների հայտամրցույթը հաղթի Sikorsky ընկերությունը, ասա այդ արտադրական գործընթացում կներգրավվեն նաև թուրքական ընկերությունները, ինչը հետագայում շուրջ 8 մլրդ դոլարի եկամուտ կապահովի Թուրքիայի համար, քանի որ մինչև 2017 թ. ընկերությունը նախատեսում է շուրջ 32 մլրդ դոլար ընդհանուր արժողության ուղղափոխներ վաճառել²⁶⁸:

Թուրքիան պարտավորվում է Ռուսաստանից գնել շուրջ 1 մլրդ դոլար ընդհանուր արժողության 32 միավոր Mi-28 Havoc հարվածային ուղղափոխ: Նման որոշում կայացվեց այն բանից հետո, երբ 2007 թ. ԱՄՆ-ի կողմից մերժվեց Թուրքիային Cobra և Super Cobra ուղղափոխներ վաճառելու դիմումը²⁶⁹:

Սիևույն ժամանակ, 2009 թ. դրությամբ, Թուրքիան շահագրգռված էր ամերիկյան Bell AH-1W Cobra ուղղափոխների ձեռքբերման հարցում, ինչի հետ կապված Թուրքիայի ՋՌԻ ԳԳ-ի պետ Ի. Բաշդուրի «Կաշիգետոն կատարած այցի ընթացքում քննարկվել է նաև այդ հարցը: 2007 թ. ԱՄՆ-ը մերժել էր Թուրքիային վաճառել այդ նույն դասի 10 միավոր ուղղափոխներ, ինչն, ամենայն հավանականությամբ, կապված էր T-129 ուղղափոխների արտադրության շուրջ թուրք-իտալական բաժնեկցությունների հետ: Թուրքիան ցանկանում էր մինչև նոր ուղղափոխների արտադրությունը, իր կարճամասնաժամ կարիքների համար ձեռք բերել ամերիկյան ուղղափոխներ, որոնք կիրառվու էին հիմնականում բրդական գոտիայինների դեմ պայքարում»²⁷⁰:

²⁶⁴ Hürriyet, 21.10.2005

²⁶⁵ IDEF-e rekor katılım, Milliyet, 28.04.2009

²⁶⁶ Турция срочно закупит у России 32 вертолета Ми-28.

²⁶⁷ <http://www.zvezda.ru/news/news194579>

²⁶⁸ Lale Sarıbrahimoğlu, Turkey confident of stop-gap deal for US AH-1Ws, Jane's Defence Weekly, vol 46, issue 25, June 2009, p. 16; Turkey to buy weapons from US, Hürriyet Daily News, 28.06.2009

²⁶⁹ Turkish Daily News, 09.01.2007

²⁷⁰ Turkey plans to buy U.S. heavy lift helicopters, Turkish Daily News, 06.05.2008

²⁷¹ Turkey to Acquire CH-47F CHINOOK Helicopters, <http://www.defencetalk.com/turkey-to-acquire-ch-47f-chinook-helicopters-23305/>, США поставит Турции 14 десантных вертолетов Вуззак, 08.12.2009

Իրականացվում են նաև Ռ-ՈՌ-ի կործանիչների, ռազմական բազմաբաղաժան ինքնաթիռների արդիականացման ու բանակը նոր սերնդի կատարելագործված ինքնաթիռներով համալրելու տարրեր նախագծել:

Թուրքիայում ռազմական ավիացիայի զորատուն գործում են մի շարք ընկերություններ ու գործարաններ, որոնք իրականացնում են կինմականում Թուրքիայի ՋՌՌ-ի տարրեր դասի ռազմական ինքնաթիռների ու ուղղաթիռների հավաքման աշխատանքներ, առանձին սարքավորումների ու բաղադրամասերի արտադրություն: Ռազմական ավիացիայի հիմնական գործարաններն ու ընկերություններն են Թուրքիայի ինքնաթիռաշինական ընկերությունը (TUSAŞ), որի գործարանը գտնվում է Մյուրթերում, Էսքիշեհիրում գտնվող ավիացիոն շարժիչների արտադրության ընկերությունը (TUSAŞ Motor Sanayi, TEI), ՌՕՌԻ հրամանատարության 1-ին, 2-րդ և 3-րդ ռազմական սայտին վերանորոգման և տեխնիկական սպասարկման կենտրոնները, որոնք գտնվում են համապատասխանաբար Էսքիշեհիրում, Սոյսսեիրում և Անկարայում:

Ռազմական ավիացիայի զորատուն գործող ամենամեծ ընկերությունը Թուրքական ինքնաթիռաշինական ընկերությունն է (TUSAŞ), որը իր իրականացրած ծրագրերի ու ծավալների առումով համարվում է բարձրական ամենամեծ ռազմաարդյունաբերական ընկերությունը: Ընկերությունն իր հիմնադրումից (1984 թ.) մինչև 2009 թ. իրականացրել է ավելի քան 231 մլն դոլարի վաճառք, իսկ իրականացրած և դեռևս իրականացվող նախագծերի ընդհանուր արժեքը կազմում է 8 մլրդ դոլար: Այն հիմնականում իր գործունեությունը սկսեց ամերիկյան F-16 ռազմական ինքնաթիռների արդիականացման աշխատանքներով: Ընկերությունը տարրեր տարիներին ներգրավված է եղել CN-235 բեռն տրանսպորտային, SF-260D ուսումնական ինքնաթիռների, Cougar A5-532 փրկարարական ու տարրեր դասի բազմանպատակ յուղաթիռների համատեղ նախագծային ու արտադրական թափուտ նախագծերում²⁵³:

Թուրքիայում ամենամեծ ռազմատեխնիկական նախագիծը կարելի է համարել F-16 ինքնաթիռների արտադրման, հավաքման գործունեացը, որի որոշումը կայացվել էր դեռևս 1983 թ.: Թուրքական գործարաններում ամերիկյան ռազմական ինքնաթիռների հավաքման գործունեացը սկսվեց ԱՄՆ-ի աջակցությամբ ու երկկողմ ռազմական պայմանագրերի շրջանակներում, ինչը հնարավորություն էր տալիս ամերիկյան կողմին ավելի շահավետ պայմաններով իրականացնել ինքնաթիռների հավաքումն ու վաճառքը մերձավորարևելյան մի շարք

երկրների: Բուն աշխատանքները սկսվել են 1987 թ. TUSAŞ ընկերության Անկարայի և TEI ընկերության Էսքիշեհիրում գտնվող շարժիչաշինական գործարաններում, ուր «Peace Onyx 1» նախագծի շրջանակներում մինչև 1999 թ. 4 մլրդ 158 մլն դոլար քնդիանոր արժողությամբ հավաքվել է 278 միավոր ռազմական ինքնաթիռ, որոնք ոչ միայն սպահովել են թուրքական բանակի կարիքները, այլ նաև արտահանվել այլ երկրներ²⁵⁴: 90-ական թթ. սկզբներին, «Peace Vector 4» անթիվակապական ծրագրի շրջանակներում Եվրատիայի ՋՌՌ-ի համար թուրքական ընկերության գործարաններում իրականացվել են 46 միավոր F-16 ինքնաթիռների արտադրությունն ու հավաքման աշխատանքներ²⁵⁵:

2008 թ. ընկերությունը ստանձնեց Պակիստանի ՌՕՌԻ-ի 42 միավոր F-16 կործանիչների արդիականացման աշխատանքները՝ 75 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Աշխատանքները սկսվել են 2009 թ. և իրականացվում են ընկերության Անկարայի գործարանում²⁵⁶:

1998 թ. ընկերության գործարանում սպորտովեց 52 միավոր CN-235 բեռն տրանսպորտային ինքնաթիռների արտադրության ծրագիրը: Հետագայում ՊԱԳ-Ա-ն 108 մլն դոլար արժողության պայմանագիր էր ստորագրել TUSAŞ ու իսլամական CASA ընկերությունների հետ՝ հավելյալ 9 միավոր ինքնաթիռների արտադրության վերաբերյալ, որոնք պետք է հանձնվեին Թուրքիայի ՌՕՌԻ-ին ու Առափնյա անվտանգության հրամանատարությանը²⁵⁷:

TUSAŞ ընկերությունը ներկայումս ներգրավված է A400M նոր սերնդի տրանսպորտային ինքնաթիռների արտադրության նախագծում: Չնայած այդ ծրագրին Թուրքիան միացել էր դեռևս 1988 թ., սակայն մասնակից երկրների կողմից որևէ վերջնական որոշում չէր կայացվում նախագծի վերաբերյալ: Գերմանիայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Սեժ Բրիտանիայի ու Թուրքիայի մասնակցությամբ նախագծի վերաբերյալ վերջնական պայմանագիր ուժի մեջ մտավ 2003 թ. մայիսին: Նման նախագծին բաղադրական կողմի մասնակցությունը հատկապես կարևորվում է միջազգային հեղինակավոր ռազմաարդյունաբերական նախագծերում Թուրքիայի ներգրավման ռազ-

²⁵³ TUSAŞ, Türk savunma sanayi şirketleri arasında büyük başarı sağladı, Zaman, 26.04.2009

²⁵⁴ F-16'lar 20 yildir Türk semalarında, <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinhulteni/Pages/20071014.aspx>
²⁵⁵ M. Magrov, Военно-экономическая олимпиада Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами... с. 372
²⁵⁶ Turkish Aerospace Industries to upgrade 42 F-16 jets, <http://www.defence.pk>, 20.08.2008, Turkish company will upgrade Pakistan's F-16s, <http://www.dailytimes.com.pk>, June 30, 2009
²⁵⁷ M. Magrov, 6շվ. աշխ.:

մավարության տեսանկյունից: Ըստ պայմանագրի՝ Թուրքիան ձեռք է բերելու 10 միավոր ինքնաթիռ 1.5 մլրդ կելո ընդհանուր արժեքությամբ, ինչի շրջանակներում էլ TUSAŞ ընկերությունը ստանձնել է նախագծի աշխատանքների 5.56 % մասնաբաժինը: Ընկերությունն արտադրելու է ինքնաթիռների ֆյուզելաժի որոշ բաղադրամասեր: Նախատեսվում է ինքնաթիռները Թուրքիային մատակարարել 2009-2014 թթ. ընթացքում²⁹⁸:

Երկիրը	Չեղջերվակներ ինքնաթիռների քանակը	Նախագծին մասնակցության մասնաբաժինը
Վերմանիա	60	33.33%
Բելգիա	8	4.40 %
Ֆրանսիա	50	27.78 %
Մեծ Բրիտանիա	25	13.89 %
Իսպանիա	27	15.00 %
Թուրքիա	10	5.56 %
Ընդամենը	180	100 %

2007 թ. TUSAŞ ընկերության կնքած պայմանագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 1.2 մլրդ դոլար: Ընկերության ղեկավարության կողմից դրված ռազմավարական ծրագրով նախատեսվում է մինչև 2023 թ. ընկերության ստանձնած ծրագրերի ընդհանուր արժեքը հասցնել 20 մլրդ դոլարի և 2010 թ. դուրս գալ միջազգային շուկա²⁹⁹:

2006 թ. վերջին Թուրքիան ՌՕՌՏ-ի գարգացման նախատևով ԱՄՆ-ից շուրջ 2.9 մլրդ դոլար արժեքությամբ 30 միավոր F-16 Block 52 դասի ռազմական ինքնաթիռներ և անհրաժեշտ այլ սարքավորումներ ու մատայություններ գնելու որոշում կայացրեց, որը հետագայում հավանության արժանացավ Պենտագոնի կողմից: Այդ գործարքի հիմնական կապալառուն ամերիկյան Lockheed Martin ընկերությունն է, սակայն նախատեսված է նաև թուրքական տեղական արդյունաբերության

²⁹⁸ Çuk Uluada Bir Projeinin Doğuşu: A400M Projesi, Savunma Sanayii Gündemi, Ekim 2008, Sayı 6, ss. 70-78

²⁹⁹ Տե՛ս ընկերության գլխավոր մենեջեր Ի. Կորքուլայի հարցազրույցը Defence Turkey պորտալումին Defence Turkey, Vol 3, Issue: 13, 2008

աջակցությունը³⁰⁰: 2009 թ. փետրվարին պարզ դարձավ, որ գործարքի հետ կապված որոշ փոփոխություններ են եղել, և Lockheed Martin ընկերությունը Թուրքիայի ՌՕՌՏ-ին է մատակարարելու 14 միավոր F-16C և 16 միավոր F-16D ծողիկ ռազմական ինքնաթիռներ³⁰¹: Ամենայն հավանականությամբ, հենց այդ 30 միավոր F-16 ինքնաթիռներ գնելու նպատակահարմարությունից ելնելով, Թուրքիան հրաժարվեց Իսրայիլի մասնակցությամբ թուրքական օդուժի 50 միավոր F-4 Phantom ուղամակն ինքնաթիռների արդիականացման 500 մլն դոլար արժեքությամբ գործող ծրագրին:

Թուրքիայի ՌՕՌՏ-ում ներկայումս F-16 ոմրակովիչների բիվը հասնում է մոտ 215-ի, որոնք 1980-90-ական թթ. արտադրվել են TUSAŞ ընկերության Անկարայի մոտ գտնվող գործարանում, ինչպես նաև TEI ընկերության Էսքիշեիր քաղաքի ֆաբրիկայում՝ Lockheed Martin-ի հետ կնքված պայմանագրերի հիման վրա³⁰²:

Ներկայումս դրված է ՌՕՌՏ-ի F-16 ոմրակովիչների արդիականացման և վերանորոգման խնդիրը: Ռազմաօդային հրամանատարության ենթակայության տակ գտնվող 200 միավորից ավել F-16C և F-16D ինքնաթիռների այդիականացման աշխատանքներն իրականացնելու է ամերիկյան Lockheed Martin ընկերությունը՝ շուրջ 635 մլն դոլար արժեքությամբ պայմանագրի շրջանակներում: Արդիականացման աշխատանքներն իրականացվելու են հիմնականում ամերիկյան ընկերության Ֆորթ Կոլբի գործարանում և թուրքական TUSAŞ ընկերության ժեներալուրյուններում: Նախատեսվում է աշխատանքներն ավարտել 2016 թ.³⁰³:

Հայալական միջոցներ են հատկացվում նաև Թուրքիայի ՌՕՌՏ-ի ոմրակովիչների արդիականացման և հատկապես նորագույն ռազմական ինքնաթիռների ձեռքբերման ուղղությամբ: ՊԱԳ-Վ-6 նրկրի պատմության մեջ ամենամեծ պաշտպանական նախագիծը հանդիսացող ՌՕՌՏ-ում նոր սերնդի ինքնաթիռների կարիքի համար ավելի քան 10 մլրդ դոլար արժեքությամբ 100 միավոր կորմանիչներ գնելու ծրագիրն ստացադրելի առաջիկա 20 տարիների ընթացքում:

Թուրքիան ծրագրել է գնել 100 միավոր F-35 ինքնաթիռ, որի ընդհանուր արժեքը կազմում է 10 մլրդ դոլար: Ըստ նախագծի՝ առաջին

³⁰⁰ Hürriyet, 13.12.2006, <http://www.defenceindustrydaily.com>, 02.10.2006

³⁰¹ U.S. Lockheed gets \$797 million contract for Turkish F-16 fighters, Hürriyet Daily News, 25.02.2009

³⁰² Turkish Daily News, 02.08.2006, The Military Balance 2009, International Institute of Strategic Studies, London 2009, p. 156

³⁰³ <http://www.guhtun.ssm.gov.tr>, 28.12.2006

ինքնաբիտները Թուրքիային կհանձնվեն 2014 թ., որոնք կփոխարինեն ներկայումս օգտագործման մեջ գտնվող հնագույն F-16 և վիետնամական պատերազմի շրջանից հայտնի F-4 կործանիչ-ոմրակռիչները³⁶⁴։

Թուրքիային այդ խոշոր պաշտպանական նախագծում ներգրավելու համար մրցակցությունը ընթանում էր հատկապես ամերիկյան Lockheed Martin ընկերության Joint Strike Fighter F-35 կործանիչի (ավելի քան 200 մրդ ղոլար արժեքով) արժեքի նկատմամբ, որտեղ արտադրության նախագծին մասնակցում են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Նիդերլանդները, Դանիան, Նորվեգիան, Թուրքիան, Կանադան և Ավստրալիան։ Այստեղից էլ 2400 կործանիչ և նախատեսվում է դրանք երկրներին հանձնել 2012 թ.) և Եվրամիության անդամ մի շարք երկրների կողմից համատեղ արտադրության մեջ գտնվող Eurofighter Typhoon ինքնաբիտի միջև³⁶⁵։

Eurofighter Typhoon ինքնաբիտներն արտադրող եվրոպական կոնսորցիումը ցանկանում էր, որ Թուրքիան ևս դառնա ինքնաբիտների արտադրության իր արդյունաբերական նախագծի բաղկացուցիչ մասը։ Եթե Թուրքիան ընդուներ այդ առաջարկությունը, ապա Eurofighter-ի որոշ պահեստամասեր կարտադրվեին նրա տարածքում։ Կոնսորցիումի առաջատար իտալական Alenia Aeronautica կորպորացիան Թուրքիային առաջարկեց միանալ եվրոպական այդ նախագծին՝ պատրաստակամություն հայտնելով արտոնելու պայմաններ տրամադրել այդ երկրին։ Կոնսորցիումի ղեկավարության առաջարկի համաձայն 120, 80 կամ 40 ինքնաբիտների գնման պարագայում բուրքական ռազմարդյունաբերական ընկերություններին էին հատկացվելու համապատասխանաբար 9, 6 կամ էլ 3.2 մլրդ դոլարի արտադրական պատվերներ։ Առաջարկությունը տարածվելու էր բուրքական լավիացիոն արդյունաբերության ըլուր ձեռնարկությունների՝ վրա, որոնք հետագայում իրականացնելու էին նաև ինքնաբիտների վերանորոգման և սեյսնիկական սպասարկման աշխատանքները³⁶⁶։

Երկար ժամանակ ՊԱԿ-Կ-ի նիստերում ինքնաբիտների ընտրության հարցում վերջնական որոշում չէր կայացվում։ Այդ երկրի կառավարությունը կողմնակից էր կոմբինացված լուծման նպատակահարմարությանը, այն է՝ գործընկերություն զարգացնել F-35 JSF կործանիչների արտադրության ծրագրի շրջանակներում և միանալ եվրոպական

Eurofighter կոնսորցիումին՝ ԵՄ-ին անդամակցության ճանապարհին «տագնավարական լծակ» ձեռք բերելու համար։ Այնինչ, զինվորական բարձրագույն երամանատարությունը ՊԱԿ-Կ-ի նիստում հայտարարեց միայն F-35 ինքնաբիտների ձեռքբերման նպատակահարմարության մասին։ Չինվորականություն համար հիմնավորումն այն էր, որ Թուրքիայի ՌՕՌ-ը հիմնականում համադրված ևն ամերիկյան ինքնաբիտներով, և ռազմական օդաչուների պատրաստման ծրագիրը հիմնված է ԱՄՆ-ի համապատասխան համակարգի վրա։ Նման ընտրությունը պայմանավորված էր նաև Հինհանակական առավել մեծ ծախսերից խուսափելու անհրաժեշտությանը, որը կարող էր ծագել տարբեր արտադրության ինքնաբիտների ձեռքբերման վեճքում³⁶⁷։

2006 թ. դեկտեմբերին կայացած պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում քարձրագույն զինվորականության կողմից հավանության արժանացավ F-35 JSF կործանիչներ ձեռք բերելու և դրանց արտադրությանը մասնակցելու որոշումը։ Թուրքիան միացավ աշխարհի ամենամեծ պաշտպանական նախագծին՝ ինքնաբիտաշինական հսկայական ծրագրին։ ԱՄՆ-ի Lockheed Martin ընկերության Տեխաս նահանգի Ֆոլդս Կորթի ինքնաբիտաշինական գործարանում արտադրության պատրաստվող F-35 ուղղահայաց թռիչք և վայրէջք կատարող ինքնաբիտների ստեղծման նախագծին մաս կազմեց նաև Թուրքիան, և այդ ինքնաբիտների վաճառքից մասնաբաժին պետք է հատկացվի նաև այդ երկրին։ F-35 ինքնաբիտների արտադրության նախագծի ամբողջական արժեքը կազմում է 276 մլրդ դոլար։ Նոր սերնդի F-35 ինքնաբիտների արտադրության գործընթացում բուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունները ստանձնել են ավելի քան 5.5 մլրդ դոլարի մասնաբաժին, որից ամենախոշորներն են՝ TUSAŞ ընկերությունը 3 մլրդ 700 մլն, TEI-ն 630, KALEKALIP-ը 490, AYESAŞ-ը 290 և ASELSAN-ը՝ 180 մլն դոլար մասնաբաժնով³⁶⁸։ 2009 թ. ապրիլին Lockheed Martin ընկերությունը 3 պայմանագիր ստորագրեց բուրքական ALP Havacilik, ASELSAN և KALE Havacilik ընկերությունների հետ՝ ինքնաբիտների արտադրության գործընթացում ներգրավվելու վերաբերյալ։ ALP Havacilik և KALE Havacilik ընկերություններն արտադրելու են ինքնաբիտների ֆուլայլասմենթի առաջնամասը և

³⁶⁴ A. McGregor, նշվ աշխ., էջ 13

³⁶⁵ Akşam, 29.03.2006

³⁶⁶ Avrupa'nın ve ABD'nin savas uçaklarını Türkiye'ye yansı, Radikal, 05.12.2006

³⁶⁷ Turkish Daily News, 27.10.2006

³⁶⁸ F-35-ի Turk inması,

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinhalt/eni/Pages/20071106.aspx>

քերի քաղաքամասերը, իսկ ASEL-SAN-ը՝ քիրախի նշանաձև գլխարկաօդային կառավարվող²⁶⁹։

TUSAS ավիացիոն ընկերությունը Lockheed Martin ընկերության F-35 Lightning II ռազմական ինքնաթիռի արտադրության խմբի առաջատար Northrop Grumman ISS International ընկերության (ընկերությունը ինքնաթիռների կենտրոնական ֆյուզելաժամերի նախագծման և արտադրության առաջատարն է) հետ ստորագրեց պաշտոնական փաստաթուղթ, որով Թուրքիան դարձավ այդ ինքնաթիռների արտադրության մեջ ներգրավված երկրներից մեկը։ 3 մյոլ դոլար արժեքով այդ պայմանագրի համաձայն՝ TUSAS ընկերությունն ստանձնելու է արտադրվելիք կործանիչների համար ավելի քան 400 կենտրոնական ֆյուզելաժամերի արտադրության գործընթացը։ 2008 թ. նոյեմբերին ընկերությունը Անկարայում բացեց քաղաքամասերի արտադրությանը հարմարեցված իր նոր արտադրամասը՝ արտադրական գործընթացն իրականացնելու նպատակով²⁷⁰։

2007 թ. հուլիսին ԱՄՆ Կոնգրեսը հավանություն տվեց Պենտագոնին՝ Թուրքիային վաճառել շուրջ 51 Block II Tactical Harpoon հակա-նավային հրթիռներ, ինչպես նաև առանձին սարքավորումներ և անհրաժեշտ ծառայություններ տրամադրել 159 մլն դոլար ընդհանուր արժեքով։ Չեղք թեքված հրթիռներն օգտագործվելու են երկրի ՌՇՈՒ-ի կողմից՝ բարձրացնելով և ավելի ուժեղացնելով ՌՇՈՒ-ում գոյություն ունեցող հրթիռային արենալը²⁷¹։

Թուրքական կառավարությունը նաև դիմել էր ԱՄՆ-ին «օդ-օդ» դասի միջին հեռահալության կառաքելագործված AIM-120C-7 AMRAAM հրթիռներ, ինչպես նաև 2 հրթիռային կառավարման ուղղորդման համակարգ, առանձին քաղաքամասեր ու ծառայություններ գնելու կապակցությամբ՝ 157 մլն դոլար ընդհանուր արժեքով։ 2008 թ. սեպտեմբերին պարզ դարձավ, որ ԱՄՆ Պաշտպանական անվտանգության համագործակցության գործակալությունը տեղեկացրել է Կոնգրեսին այդ վաճառքի հնարավորության մասին²⁷²։

Ներդրումներ են կատարվում նաև անօդաչու թռչող սարքերի²⁷³ (այսպես՝ ԱԹՄ, թուրք. *Insansız Hava Aracı*, անգլ. *Unmanned Aerial Vehicle*) արտադրության ու ձեռքբերման ոլորտում, ինչն, ըստ թուրք զինվորականների, էլ ավելի կարճրացնի անհամաչափ մարտահրավերների, հատկապես թուրք գոտեայինների դեմ պայքարի արդյունավետությունը։ ՋՈՒ-ի կարիքների համար տարբեր նշանակության ԱԹՄ-ների ձեռքբերումը դրված է առաջնային ծրագրերի շարքում։ Թուրք զենկազմներից մեկի ընդոչմամբ՝ «որքան թուրքական բանակը համարված լինի հետապուլսական ու սենտրալին համակարգով, այնքան էլ մեծ կլինի իր նշեղի կիրառմամբ թուրք արդյունների հասնելը»։ Թուրքիայի ՋՈՒ Գ-Ը-ի նախկին պետ Յ. Բյույուրանցըրը մի առիթով խստաբանակ էր, որ, Դիարբեքիում տեղակայված 7-րդ կորպուսի հրամանատար եղած ժամանակ, կարող էր կրճատել կորպուսը շուրջ 40 %-ով, եթե ստալակոնության մեջ լինեին հետախույզական ու հարվածային ԱԹՄ-ներ²⁷⁴։

Սեփական նախագծման ԱԹՄ-ների ուղղությամբ 1990-ական թթ. սկզբից ակտիվ աշխատանքներ է իրականացնում TUSAS ընկերությունը։ 1992 թ. փորձարկվեց ընկերության նախատիպային առաջին ԱԹՄ-ն։ Դեռևս Թուրքիայի ՋՈՒ-ում կիրառված են ընկերության կողմից արտադրված Turan անօդաչու թիթայային (նպատակային) ինքնաթիռները, որոնց բիլն, ըստ թուրքական աղբյուրների, հասնում է

²⁷¹ Ժամանակակից ռազմական գործողություններում ծանրակշիռ դերակատարում են ստացել ԱԹՄ-ները, որոնք կիրառվում են ռազմական օբյեկտների նախնական և հետախույզական դիտարկում իրականացնելու համար և այլն։ ԱԹՄ-ների առաջին թռչող կիրառությունը կատարվել է փետրվարյան պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կողմից, որի ընթացքում իրականացվել է շուրջ 3500 թռիչք և կորուստներ կազմել են ընդամենը 4 %։ 21-րդ դարակազմի ԱԹՄ-ն և Իսրայելի կողմից ԱԹՄ-ների մարտական կիրառման բառակազմերը դարձավ Արևելքում և Արևմուտքում Սիան ժամանակակից երկրորդ պատերազմի ժամանակ (2006-2007թթ.) իսրայելական ԱԹՄ-ները իրականացրել են ավելի քան 1500 մարտական թռիչք։ Ըստ որչ տեղեկությունների՝ 2006 թ. ԱԹՄ-ի Սիսայակ ՋՈՒ-ում ԱԹՄ-ների թվը կազմել է մոտ 60 հարյուր մեդալ։ ԱԹՄ-ների արտադրության ոլորտում առաջատարներ են ԱՄՆ-ը և Իսրայելը, մի շարք այլ երկրներ նույնպես իրականացնում են արտադրական նախագծեր։ Ավելի մանրամասն տես Ա. Հովհաննիսյան, Սի քսնի նարյեր ավիացիայի, Եր. 2009; B. Hecanese, İncinlaotunla cto let v bozaycel/ Hexanlaotunla soctunne obozretne, № 32, 11-17 Ocak 2009, str. 8-9; Իսրայելից քայի, Արևելքում Արևելքի երկրներից ԱԹՄ-ների արտադրության ծրագրեր է իրականացնում Իսրայելը։ Հանելեկեր և Թինարե քաղաքներում գործում են 2 ինքնավար ընկերություններ՝ Hesa և Qods։ Hesa-ի արտադրության Ababi (200 կգ) ԱԹՄ-ն սկսել է արտադրվել 1986 թ-ին և կիրառվել Իսրայելական ներախույզական պատերազմների կորպուսի ու Հնարավորակի կողմից Լիբանոնում։ Qods-ին են պատկանում Mohajer-2 և Saegheh-2 ԱԹՄ-ները։ SIA Armads International, Issue 3, 2008, p. 28

²⁷⁴ Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 34

²⁶⁸ Lockheed Martin den Türk sanayisine büyük katkı sağlayacak 3 anlaşma, Zaman, 28.04.2009

²⁷⁰ Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 34

²⁷¹ US missile sales to Turkey clears congress, Turkish Daily News, 02.07.2007

²⁷² Zaman, 29.09.2008

2 հազարի: Որպես հիմնական նախագծող՝ ընկերությունն աշխատանքներ է իրականացնում 30 հզ. ուսնաչափ բարձրության և 24 ժամ օդում մնալու հնարավորություններ ունեցող ԱԹՍ-ների նախագծման ուղղությամբ և նախատեսում այդ ոլորտում աշխատանքներն ավարտել 2010 թ.²⁷⁵: Ընկերությունն արդեն պայմանագրեր է ստորագրել Թուրքիայի ՊՆ-ի հետ՝ 2011 թ. ԶՈՒ-ին 30 միավոր հետախուզական ԱԹՍ-ների մատակարարելու վերաբերյալ: Այն զինված է լինելու էլեկտրաստիկական համակարգով, ինչը հնարավորություն կտա դիտարկում իրականացնել գիշերային ու վառ եղանակային պայմաններում²⁷⁶:

Դեռևս 1993 թ. Թուրքիայի ԶՁ-ի կարիքների ապահովման և քրդական զինյալների դեմ պայքարի նպատակով պայմանագիր ստորագրվել ամերիկյան General Atomics Aeronautical Systems Inc. ընկերության հետ ԱԹՍ-ների մատակարարման վերաբերյալ, որի շրջանակներում բուրբակյան քանակը համալրվեց 6 նման միջուկներով ու GNAT 750-45 մոդելի տեղային հսկողային կայանով: 1998 թ. նույն ընկերության հետ ստորագրված մեկ այլ պայմանագրով բուրբակյան քանակին տրամադրվեց 2 միավոր I-GNAT արդիականացված ԱԹՍ-ներ, որոնք ԶՈՒ-ում կիրառվում են մինչև օրս²⁷⁷:

ՊԱԳՎ-ի կողմից իրականացվում են տեղական միջուկներով բուրբակյան նախագծման ԱԹՍ-ների արտադրության նախագծեր: 2004 թ. մեկնարկեց «Թուրքական ԱԹՍ (TIHA)» նախագիծը, որտեղ որպես հիմնական կապալառու ներգրավված է TUSAS բուրբակյան ընկերությունը: Նախագծի տարբեր ոլորտներում ու համակարգերի նախագծման գործում ենրակապալառու ընկերություններ են ASELSAN-ը, Milssoft-ը, Savronik-ը, STM-ը, STD-ը²⁷⁸: Ընկերությունը նախագծել է TIHA-A միջին հետախուզական ԱԹՍ-ն, որը պետք է առաջին անգամ օդ բարձրանա 2009 թ.: Այն համալրված է ASELSAN ընկերության արտադրության AseFlir-300T սենսորային դիտակման համակարգով: Նախատեսվում է հետագայում իրականացնել նաև դրանց վաճարք այլ երկրներին: Դրա բազայի հիման վրա արտադրվելու են

բարձր հետախուզական TIHA-B ԱԹՍ-ները: Ընկերությունը նախագծել է նաև փոքր մարտավարական 85 կգ Gozcu ԱԹՍ-ները²⁷⁹:

2007 թ. բուրբակյան քանակին մատակարարվեցին փոքր դասի ԱԹՍ-ներ, որոնց նախագծումն ու արտադրությունը իրականացվել էր տեղական Global Teknik, Ortadoğu Teknik Üniversitesi-SATEK և Kalekalep Baykar ընկերությունների կողմից: Ներկայումս Kalekalep-Baykar և Vestel ընկերությունների կողմից իրականացվում է «Արտավարական ԱԹՍ-ների արտադրության նախագիծը», որի շրջանակներում նախատեսվում է ԶՁ-ին տրամադրել հետախուզական դիտարկման մարտավարական ԱԹՍ-ներ²⁸⁰:

ԱԹՍ-ների նախագծման ու արտադրության ոլորտում վերջին մի քանի տարիներին աշխատանքային ծրագրեր է իրականացնում բուրբակյան Vestel ընկերությունը: 2009 թ. ապրիլին ընկերության սնորհությունը հայտարարեց, որ ավելի քան 6 տարի տևած աշխատանքներից հետո ավարտվել է սեփական նախագծման առաջին ԱԹՍ-ի նախատիպի արտադրությունը, որի մշակման համար ընկերությունը ներդրել է 20 մլն դոլար: Ըստ ընկերության պատասխանատուների՝ ինքնարիդ կարող է բարձրանալ 16 հզ. ուսնաչափ և օդում մնալ 12 ժամ: Այն հիմնականում նախատեսված է դիտարկումներ իրականացնելու համար: Փորձարկումների հաջող ընթացքի դեպքում ընկերությունը պայմանագիր էր ստորագրելու Թուրքիայի ՊՆ-ի հետ՝ խորաքանակային արտադրության վերաբերյալ²⁸¹: 2009 թ. հոկտեմբերի 13-ին Սիեոլի քաղաքի մերձակայքում Vestel ընկերության արտադրության «Karayel» հետախուզական ԱԹՍ-ի առաջին փորձարկումն անհաջողության մատնվեց: ԱԹՍ-ն հենց առաջին րոպիի ժամանակ ցած ընկավ 1200 մ բարձրությունից: Նույն րվակների ապրիլի 30-ին անհաջող ավարտ ունեցավ նաև Baykar ընկերության արտադրանք «Çaldıran» հետախուզական ԱԹՍ-ի առաջին փորձարկումը²⁸²:

2007 թ. տեղեկատվությունը հայտնվեց, որ բուրբ ինժեներների կողմից նախագծվել է ամօշալու ուղղարտ, որի նախատեսվող գտնվում է ռուսամասիտրյան գործընթացում ռազմական պատասխանատուների կողմից: Malazgirt անվանումն ստացած այդ ուղղարիդը, որն ունի

²⁷⁵ TIHA ve F-35 projelerinde öncelikli görevleri üstlendi, Cumhuriyet, 08.12.2008

²⁷⁶ İçte Türk yapımı casus uçakları(TÖHA), Zaman, 06.12.2008

²⁷⁷ İnci Paket İHA Tedarik Projesi,

²⁷⁸ http://www.ssm.gov.tr/TR/Projeler/havaaracları/havatamamlanmis/Pages/İnciPaketİHA_K.aspx

²⁷⁹ Sapmaz, Akıncı, Ardic, Aleçakar, Türk'ye'de İnanmaz İhava Aracı (İHA) Uygulanıyor, H. ULUSAL HAVACILIK VE UZAY KONFERANSI, İTÜ, 15-17 Ekim 2008, İstanbul,

²⁷⁹ Andy Nativi, Ankara bulks up industry and export, Defense Technology International, Vol 1, N. 7, September 2007, p. 30

²⁸⁰ Taktik İHA Geliştirme Projesi,

²⁸¹ http://www.ssm.gov.tr/TR/Projeler/havaaracları/prjgrpiba/Pages/TaktikİHAGelştirme_K.aspx

²⁸² Vestel 20 milyon dolara insansız uçak geliştirdi denemeyi Efes'te yapacak, Hürriyet, 20.04.2009

²⁸³ Yerli heron'lar sapır sapır dökülüyor, Radikal, 13.10.2009, Bir tane daha düştü, Hürriyet, 13.10.2009

ընդամենը 5 կգ կշիռ, կարող է բռնել մինչև 15 կմ քարձրանալ 10 կլ. ոտնաչափ: Ըստ այդ տեղեկատվության՝ ՊՆ-ի պատասխանատուներն ուսումնասիրություններ են կատարում դրանց հետագա արտադրությունն սկսելու ուղղությամբ²⁸³:

Ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով բուրբական կողմը քայլեր է ձեռնարկում հետախուզական ԱԹՍ-ների ձեռքբերման ուղղությամբ: 2005 թ. Թուրքիան 183 մլն դոլար արժեքով պայմանագիր էր ստորագրել Իսրայելի հետ՝ Իսրայելի Ավիայիտն արդյունաբերության ընկերության ու Elbit Systems ընկերությունների համատեղ արտադրության 10 միավոր Heron հետախուզական ԱԹՍ-ների գնման վերաբերյալ²⁸⁴: Ըստ պայմանագրի՝ բուրբական ՁՈՒ-ը ստանալու էին 10 միավոր Heron ԱԹՍ-ներ, որոնք իսրայելական կողմը տրամադրելու էր 2008 թ. վերջին: Սակայն, բուրբ-իսրայելական հարաբերություններում ի հայտ եկած քաղաքական տարածանյությունների պատճառով, իսրայելական կողմը նույնիսկ փորձ կատարեց չեղյալ հայտարարել այդ պայմանագիրը: Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլի Իսրայել կատարած այդ ընթացքում ձեռքբերված պայմանավորվածություններով արդեն դրանք պետք է Թուրքիային հանձնվեին 2009 թ. ապրիլին²⁸⁵:

Թուրքական կողմը, միևնույն ժամանակ շահագրգռված է ամերիկյան MQ-9 Reapers հարվածային ԱԹՍ-ների ձեռքբերմամբ, ինչի նպատակով 2009 թ. փետրվարին պաշտոնապես դիմել էր ԱՄՆ-ին: Ամերիկյան General Atomic ընկերության արտադրության այդ ինքնաթիռները իրենց լավագույնն էին դրսևորել Ալդրանտանոմս և Իրաքում ամերիկյան ՁՈՒ-ի իրականացրած ռազմական գործողությունների ժամանակ, ուստի բուրբական ռազմական պատասխանատուների համար դա լավագույն միջոց կարող է լինել քրդական զինյալների ռշնչայնման նպատակով ձեռնարկվող ռազմական գործողությունների համար:

2009-2016 թթ. ռազմաարդյունաբերության ոլորտների ռազմավարական փաստաթղթում յուրյ ռազմաարդյուն է դարձված ԱԹՍ-ների նախագծման ու արտադրության առաջնահերթություններին՝ հետագայում միջազգային շուկայում հաջողություններ գրանցելու հեռանկարով: ԱԹՍ-ների արտադրության տեղական բազայի վարպետը ինժեներական և ներառելու է հետևյալ համակարգերը.

փոքր ԱԹՍ-ներ (Mini IIIA)
մարտավարական ԱԹՍ-ներ (Taktik IIIA)
օպերատիվ ԱԹՍ-ներ (Operativ IIIA)
ռազմավարական ԱԹՍ-ներ (Stratejik IIIA)
հարվածային, մարտական ԱԹՍ-ներ (Taarruzi, Muharip IIIA):

Որպես ռազմավարական խնդիր է որված ամբողջությամբ տեղական ռազմաարդյունաբերության միջոցներով մինչև 2009 թ. մարտավարական ԱԹՍ-ների առաջին նախատիպի, 2010 թ.՝ ամբողջական համակարգի արտադրությունը, 2011 թ.՝ օպերատիվ ԱԹՍ-ների համաձայնումը: Ռազմավարական ու հարվածային ԱԹՍ-ների նախագծման, գտնվածման ու արտադրության ոլորտում որպես նպատակ առաջադրված է մինչև 2010 թ. սեպտեմբերի մասնակցությունը միջազգային կոնսորցիումներին ու արտերկրների հետ համատեղ նախագծերին²⁸⁶:

2009 թ. մեկնարկից տեղական ռազմաարդյունաբերական բազայի էինքի վրա 1970-ական թթ. բուրբական ՌՕՈՒ-ում գտնվող RF-4E ռազմական հետախուզական ինքնաթիռների արդիականացման նախագիծը: Արդիականացված այդ ինքնաթիռները ՁՈՒ-ին կ'առաջանն մինչև 2020 թ.: 2009 թ. մայիսին արդեն ՌՕՈՒ-ին հանձնվելիս նորագույն ավիայիտն կատարածան ու տեղեկատվական համակարգերով համարված 2 միավոր ինքնաթիռներ, որոնց հետախուզական ու դիտարկման համակարգերն արդիականացվել էին ASELAN, MIKES ընկերությունների համատեղ ջանքերով: Ընդհանուր առմամբ, նախատեսված է արդիականացնել 18 միավոր այդ դասի ինքնաթիռներ, որոնք աշխատանքները կավարտվեն 2010 թ.²⁸⁷:

2009 թ. օգոստոսի 10-ին ՊԱԳ-Լ-ի ու TUSAS ընկերության միջև ստորագրվեց Թուրքիայի ՌՕՈՒ-ի F-16 կործանիչների արդիականացման մասին պայմանագիր, որով TUSAS ընկերությունը է Առաջին ռազմաօդային տեսնիկական սպասարկման կենտրոնի հրամանատարությունը (*I'nci Hava Kmal Bakım Merkezi Komutanlığı*) իրականացնելու են 165 միավոր F-16 ռազմական ինքնաթիռների արդիականացման աշխատանքները: Նույն օրը ստորագրված մեկ այլ պայմանագրով՝ HAVELSAN ընկերությունը ստանձնեց ՌՕՈՒ-ի հրամանատարության համար F-16 ռազմական ինքնաթիռների վերանորոգման արտադրության նախափուլը²⁸⁸:

²⁸³ Türkiye'nin ilk insansız helikopteri. Millazgiri, <http://www.ssm.gov.tr/dokumantasyon/basimbulteni/Pages/20070820.aspx>
²⁸⁴ Turk HERON'lar göçüde, <http://www.ssm.gov.tr>, 04.12.2008
²⁸⁵ Günül 8 Heron da geliyor, Sabah, 28.01.2009

²⁸⁶ 2009-2016 Savunma Sanayi Sektörü Strateji Dokümanı, Savunma Sanayi Bakanlığı, Nisan 2009
²⁸⁷ Milli uçak modernizasyon projesi tamamlandı, Hürriyet, 08.05.2009
²⁸⁸ <http://www.ssm.gov.tr/TR/etkinlikler/izmlatarenleri/Pages/2009CI6sozlesmeimza.aspx>

ինքնաբախանալու դրսևում տեղական հնարավորությունները մեծացնելու և առավել արդյունավետ նախագծերի իրականացման նպատակով 2007 թ. բուրբակա՝ TUSAŞ և օդային միջոցների համար տարբեր մոդելի շարժիչների արտադրության դրսևում գործող բուրբակա՝ TEI ընկերությունները պայմանագիր ստորագրեցին, որով միավորեցին իրենց ջանքերը արտադրական դրսևում: Այդ նախածնուրբան նպատակը ինքնաբախանալու տարբեր դրսևներում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացումն ու համակարգումն էր²⁹⁵:

2006 թ. մարտին TUSAŞ ընկերությունը 92 մլն դոլար արժողության պայմանագիր ստորագրեց ՊԼՍ-Կ-ի հետ՝ ՌՕՌԻ-ի համար Hurkuş ուսումնական ինքնաբախանալու արտադրության վերաբերյալ, որոնք գործառնության կնտնեն 2011 թ.²⁹⁶:

2007 թ. Հարավային Կորեայի ավիատեխնոլոգիական ընկերությունը (KAI) Թուրքիայի հետ ստորագրեց 500 մլն դոլար արժողության պայմանագիր՝ հիմնական ուսումնական ինքնաբախանալու վաճառքի մասին: Ըստ պայմանագրի՝ մինչև 2013 թ. բուրբակա կողմին կհանձնվեն 55 միավոր KT-1) ուսումնական ինքնաբախանալու, որոնք կփոխարինեն բուրբակա՝ րանակի ուսումնավարական ծրագրերում շատ վաղուց կիրառվող T-37 մոդելի ինքնաբախանալու²⁹⁷: Ըստ պայմանագրի՝ կորեական ընկերությունը տեխնոլոգիական աջակցություն է ցույց տալու TUSAŞ ընկերությանը հետագայում նման ինքնաբախանալու նախագծման ու արտադրության դրսևում²⁹⁸:

2009 թ. ապրիլին Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլի Հարավային Կորեա կատարած այցի ընթացքում երկու երկրները պայմանագիր ստորագրեցին, որով բուրբակա՝ կողմ այդ երկրին մինչև 2011 թ. վաճառելու է բուրբակա՝ HAVELSAN ընկերության կողմից մշակված օդաչուների վարժեցման էլեկտրոնային մարտական ուսուցման համակարգերը (Electronic Warfare Training Systems) 97 մլն դոլար արժողությամբ: Նման համակարգերի արտադրություն HAVELSAN ընկերությունն արդեն իրականացրել է Թուրքիայի և Պա-

կիստանի ՌՕՌԻ-ի համար²⁹⁹: Նշենք, որ Թուրքիայի կողմից կորեայի հանրապետություն CN-235 բուրբակա՝ վարժաարքերի արտահանումից հետո այդ համակարգերի վաճառքը հանդիսացավ երկրորդ խոշոր բուրբակա՝ արտահանումն այդ երկիր:

4.2 ՀՕՊ և ՀՀՊ համակարգի վարժացման ծրագրերը

Թուրքիան ծրագրել է հիմնովին արդիականացնել երկրի ՀՕՊ համակարգը և ստեղծել սեփական հակահրթիռային պաշտպանություն, ինչը շատ բանով կազված է սպատակներունների աճող մրցակցի և Մերձավոր Արևելքում ՁՈՁ-ի ու հրթիռային տեխնոլոգիաների տարածման խնդիրների հետ³⁰⁰: Թուրքիայի պաշտպանական ռազմավարության այն մտեցումը, որ երկրի ՁՈՁ-ը պետք է պատրաստ լինեն կանխի Թուրքիայի դեմ հարձակումներն ու սպատակները մինչև բուրբակա՝ տարածքին հասնելը, ենթադրում է երկրի օդային տարածքի համակարգի ավելալարություն, երբ հաշվի առնենք վերջին տարիներին մերձավորարևելյան տարածաշրջանում սպառազինությունների աճող մրցակցը ու հրթիռային տեխնոլոգիաների վարժացումը: Թուրքիայի ռազմական ղեկավարության համար տարածաշրջանում անկախախնայելի զարգացումների հնարավորության պարագայում խիստ իրատեսակ է դստնում սեփական զարգացած ՀՕՊ համակարգի ստեղծումը, որի որ տարածաշրջանում անվտանգության ղարձակ հրթիռային տեսակետների արտածումն ու հատկապես Իրանի կողմից բախտոկ հրթիռների վարժացումը բուրբակա՝ ռազմաարտադրական շրջանակների կողմից դիտարկվում են որպես ազգային անվտանգության մարտադրակները: 90-ական թթ. Թուրքիան լուրջ անհանգստություն էր հայտնում Իրանի, Իրաքի ու հաս Սիրիայի կողմից ջինիական ու կենսաբանական զենքերի ու հրթիռների զարգացման հնարավորությունների կապակցությամբ: Թուրքիան Մերձավոր Արևելքում լրջորեն փոտակցեց բախտոկ հրթիռների լայնամասշտաբ կիրառման մարտադրակները Մոցի առաջին պատերազմում, երբ Իրաքը սկսեց օգտագործել Scud-Bs և Al-Hussein հրթիռները, իսկ հետագայում արդեն լուրջ մտայնություններ սկսեց առաջ բերել Իրաքի կողմից ՁՈՁ օգտա-

²⁹⁵ TAI ve TEI buçerleri birlestiriyor, <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/20070923.aspx>

²⁹⁶ Turkey's New Trainer, Defense Technology International, Vol. 1, N. 6, July/August 2007, p. 8, Hurkuş kanatlandı, Tercüman, 03.04.2009

²⁹⁷ <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/20070807.aspx>; TAI-KAI ortaklığı ile eğitim uçağı üretilecek, <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/20070720.aspx?ortlar>

²⁹⁸ Güney Kore ile savunma ortaklığı, <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/20070827.aspx>

²⁹⁹ South Korea To Buy Turkish EWTS; <http://www.defensencnews.com>, 16 Apr 2009, HavelSan'dan Kuzey Kore'ye elektronik harp sistemi ihraç, Zaman, 21.04.2009

³⁰⁰ U. Սինաջան, Իրաքիա-բուրբակա՝ ռազմաարտադրական համագործակցությունը բրթական հիմնակների համասնարում, «21-րդ դար», N. 4, էրեսան, 2006, էջ 86

գործման հնարավորությունը²⁹⁹։ Թուրքիայի համար ներկայումս լուրջ մարտահարվեր է ներկայացնում Իրանի կողմից հրթիռային տեխնոլոգիաների զարգացումը, միջուկային ուղրոտման իրանական ծրագրերն ու տարածաշրջանային զարգացումների անվանխատեսելիության գործոնը։

ՀՕՊ հետահար համակարգի ստեղծման ուղղությամբ 2006 թ. հունիսին վարչապետ Ռ. Թ. Էրդողանի նախագահությամբ գումարված Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց երկրի ՀՕՊ-ն ուժեղացնելու համար սկսել արդյունաբանական լայնածավալ ծրագրի իրագործումը³⁰⁰, փոքր ու միջին հեռահարության համալիրների ու պաշտպանական միջոցների արտադրության գործում գերակայությունը տալով տեղական ընկերություններին³⁰¹։ Ապատակը կայանում է նրանում, որ բուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունները, համագործակցելով աշխարհի առաջատար ընկերությունների հետ, յուրացնեն ՋՀՀ-ների ստեղծման բարդ ու գիտատեխնիկական գործընթացը՝ հետագայում իրականացնելով ինքնուրույն աշխատանքներ։

ՀՕՊ ամրապնդման ու զարգացման ծրագրի շրջանակներում Թուրքիան նախատեսում է իր 82-ի համար ձեռք բերել 45 փոքր հեռահարության համալիրներ (T-LALADMIS), հետագայում ևս 45 համալիրների ձեռքբերման հավանականությամբ, և ևս 12 համալիրներ՝ ՌՃՌ-ի համար։ Իրանը հիմնականում պահանջվելու են ռազմական քաղաքների պաշտպանությունը։ Այդ համալիրները հիմնականում արտադրվելու են ROKETSAN ընկերության կողմից։ Չեռթերվեյի միջին հեռահարության համալիրները (T-MALADMIS) պաշտպանվելու են օդային տարածքը ռազմական ինքնաբիթներից։ Փոքր հեռահարության ՋՀՀ-ների պահանջարկի որոշ մասը Թուրքիան փոքրում է ապահովել տեղական ռազմաարդյունաբերության միջոցով։ Մասնավորապես, 2001 թ. Թուրքիայի ՊՆ-ն ASELSAN ընկերության հետ 256 մլն դոլար արժողության պայմանագրի ստորագրեց՝ քանակային ՀՕՊ համալիրների մատակարարման վերաբերյալ, որով ԶՈՒ-ին մատակարարվելու էին 70 միավոր Atılgan և 78 միավոր Zırkon (11 միավոր ՌՈՒՌ-ի համար)։ Մատակարարումը քանակին սկսվեց 2004 թ.³⁰²։

ՀՕՊ միջոցների կարիքների մի որոշ մասը ապահովեց ASELSAN ընկերության արտադրության Atılgan և Zırkon տեսակի համալիրներով։ Սինչև 2009 թ. ԶՈՒ-ին արդեն հանձնվել էին ավելի քան 100 մման համալիրներ և նախատեսվում է 2010 թ. մատակարարել ևս 48 համալիրներ³⁰³։

ՀՕՊ հետահար համակարգերի ձեռքբերման համար Թուրքիայի կողմից հայտարարված միջազգային հայտամրցույթին մասնակցության հայտ ներկայացրեցին ամերիկյան (Patriot)-ը, ռուսական (C-300IMY-2 Փասորո)-ը և ամերիկա-իսրայելական համատեղ արտադրության (Arrow-2) ՋՀՀ-ները։ Թուրքիան պլանավորում էր 2006-2009 թթ. ընրացրում գնել մեծ հեռահարության 4 համալիր՝ 800 մլն դոլար ընդհանուր արժողությամբ, իսկ 2010-2014 թթ. գրեթե նույն արժողությամբ ձեռք բերել ՀՕՊ հեռանկարային 4 համալիրներ։ Ռուսական կողմից հետ Թուրքիայի ռազմական ներկայացուցիչները ռուսական գործարան կատարած այցի ընթացքում րենարկել են նաև պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցության վերահանրող հարցեր³⁰⁴։

Բանն այն է, որ 2008 թ. վերջին Ռուսաստանի պաշտպանության նախարար Ա. Սերգեյևիչի Թուրքիա կատարած այցի ընթացքում րենարկվել են երկկողմ ռազմական համագործակցության մի շարք հարցեր, այդ բովանակումով՝ Թուրքիայում ՀՕՊ համակարգերի ներդրման խնդիրները, որի ընթացքում Ռուսաստանի պաշտպանության նախարարը վերահաստատել է համալիրների վաճառքի ռուսական առաջարկը³⁰⁵։

Հւստ բուրքական և ռուսական արդյունքների՝ քանակցություններ էին ընթանում Թուրքիային C-400 Կրայմ ՀՕՊ համալիրների հնարավոր վաճառքի շուրջ, ինչը հաստատել է նաև «Рособоронэкспорт»-ի ներկայացուցիչը³⁰⁶։ Ավելի վաղ, ռուսական լրատվամիջոցների տեղեկատվության համաձայն, Ստամբուլում 2009 թ. ապրիլին անցկացված Ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսի (IDEF) մասնակից Թուրքիային C-400 Կրայմ համալիրների հնարավոր վաճառքի հետ կապված հարցերը րենարկվել են ռուսական ռազ-

²⁹⁹ Scheinm Udum, Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence, Turkish Studies Institute, Vol. 4, N3, 2003, p. 76

³⁰⁰ Turkish Daily News, 01.04.2007

³⁰¹ Zaman, 18.02.2006

³⁰² Н. Соколов, Состояние и перспективы развития ВВС Турции// Зарубежное военное обозрение. № 4, 2009, стр. 63

²⁹⁹ Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 32

³⁰⁰ Правительство Турции приняло решение о проведении тендера на закупку средств ПВО большой дальности. <http://www.arms-tass.ru>, 21.02.2006

³⁰¹ Turkish, Russian ministers discuss proposals on air defence system, <http://www.hurriyet.com.tr/english/world/10395591.asp>

³⁰² Rostec in talks to sell Turkey air defence systems, company confirms, <http://www.hurriyet.com.tr/english/world/11540318.asp>

մական պատվիրակության ղեկավար Ա. Աբեսմովի և ՊԱԳ-Վ-ի պետ Մ. Բաչարի միջև³⁰³:

Երկար ժամանակ վերջնական որոշում չէր կայացվում, և 2008 թ. մայիսին Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն վերջնականապես վերհաստատեց ՀՕՊ հեռահար համալիրների ձեռքբերման անհրաժեշտությունը, որի ընթացքում հաստատվեց նաև շինական համալիրի մասնակցությունը հայտանրդույթին: Մինչև ինժե րուրբական բանախոս մարտական հերթապահության մեջ գրեթե չկան մեծ հեռահարության ՀՕՊ համալիրներ: Ներկայումս Թուրքիայի օդային տարածքը իսկում են փոքր հեռահարության Rapier, Stinger, Atiagan և Zirkon, ինչպես նաև միջին հեռահարության I-Hawk արդիականացված ԶՀՀ-ները³⁰⁴:

Թուրքական արդյունքների համաձայն՝ որոշ առումներով նախապատվությունը տրվում է ռուսական համալիրներին, սակայն այլ խնդրի շուրջ դեռևս վերջնական մտայնում չկա: Չերթարվելի է ՀՕՊ համալիրներից երկուսը նախատեսվում է մարտական հերթապահության դեմ Անկարայի և Ստամբուլի օդային տարածքները իսկելու համար³⁰⁵:

Մինչև վերջերս ԱՄՆ-ն առանձին բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ՝ Patriot Advanced Capabilities-3 մակնիշի կատարելագործված 6 ԶՀՀ-ների վաճառքի շուրջ, որի արժեքը կազմում է շուրջ 1 մլրդ դոլար³⁰⁶: Ամերիկյան առաջատար Lockheed Martin ընկերությունը բանակցություններ էր վարում րուրբական ASELSAN և ROKETSAN ռազմարդյունաբերական ընկերությունների հետ՝ տեխնոլոգիաների տրամադրման շուրջ:

Patriot-ը նախատեսված է ինքնաթիռների և բեակվոր հրթիռների դեմ օգտագործելու համար, բայց կարող է վնասակարծել նաև բալիստիկ հրթիռները: Հետ ռազմական վերլուծաբանների՝ վերոնշյալ համալիրը

կարող է մրցել ռուսական C-300 ՀՕՊ համալիրների ընտանիքի վերջին ներկայացուցիչների հետ: PAC-3 համալիրն ամերիկյան MIM-104 Patriot միջին հեռահարության «երկիր-երկին» դասի հրթիռներով, խոչըր հրթիռաչինական Raytheon ընկերության PAC-2 ԶՀՀ-ի արդիականացված տարբերակն է: Այն դարձավ աշխարհում ռազմական առումով երաշխավորված միակ հակաբախտիկ ԶՀՀ-ն 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի ժամանակ³⁰⁷: Ի դեպ, 1999 թ. Թուրքիան ձեռք բերել ամերիկյան բանակային երկրորդ մոդիլիկացիայի PAC-2 ԶՀՀ-ների առաջին մարտկոչը: Թուրքական ընկերությունները մասնակցել են Խարպեթան Arrow 2 ԶՀՀ-ների մշակման ու արտադրական գործընթացում, ինչի արդյունքում էլ Թուրքիան ակնկալում էր ձեռք բերել նման համալիրներ³⁰⁸:

Ռուսական վերջ նշված համալիրները, որոնց վերջին ներկայացուցիչը հենց C-400 ԶՀՀ-ն է, իրենցից ներկայացնում են հզոր հակա-ինքնաթիռային և հակաավիոնային համալիրներ: Ռուսական համալիրները կարող են հակառակորդի ինքնաթիռների վնասվածքնել 0.01-30 կմ բարձրության և առավելագույնը 200-400 կմ հեռավորության վրա: Բազմաթիվ հրթիռներ խոցելու պայմանները մի փոքր րույ են, սակայն՝ քավականին հզոր: Համալիր կարող է միապահմից խոցել 6 և ավելի նշանակետեր: PAC-3 ԶՀՀ-ն ռուսական համալիրներից զիջում է խոցելու հեռահարությանը և քարձրությանը, սակայն վերազանցում է խոցելու նշանակետերի քանակով և քավակաի հրթիռների խոցման ցուցանիշներով: Թուրքական կողմը, որոշ առումներով ասավելությունը տալով ռուսական համալիրին, միանշանակ կաննում է ընդլծել իր քաղաքական կամրը՝ ինչն ԱՄՆ-ի ճնշումներից դուրս: Սակայն, մյուս կողմից, եթե րուրբական ղեկավարությունը կաննում է անոնծել երկրի համառարած ՀՕՊ-ի դաշտ, մտավորանքը համալիրան համալիրական ընդհանրո ՀՕՊ-ի համակարգի նման, սակա ռուսական համալիրներով նման համակարգ տեղծելը քավականին դժվար կլինի: Համառարած ՀՕՊ-ի դաշտ տեղծելը, որը կարող է նաև երաշխավորել ՀՀՊ, կարելի է միայն ամերիկյան արքայադրումների և համալիրների այն միասնությամբ, որոնք արդեն կիրառվում են մեկ տեղեկատվական և համագործակցության դաշտում: Թուրքիան արդեն նկատարություններ է ներկայացնում ՀՀՊ-ի այն արդարամասերի հետատմամբ, որոնց

³⁰³ Turkey hopes to buy S-400 air defense systems from Russia, RIA Novosti, 27 04 2009

³⁰⁴ <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/20080501.aspx>

³⁰⁵ <http://www.ssm.gov.tr/TR/dokumanstasyon/basinbulteni/Pages/20080501.aspx>

³⁰⁶ Թուրքական մամուլի հաղորդմամբ՝ ԱՄՆ-ի հայելանա և հունական լրջին ձեռնարկումներ էր մտել ռազմական այդ գործարքը խոչըրդողելու համար: Երանք նամակ Հյուսիս Կովկասի ռազմական ծառայությունների և միջգաղաիկ հարաբերությունների հունձնախորվիներին ու առանձին կողմբանականներին, որտեղ ավում է, որ գներին կանոնավոր ռազմական հակաարակչությունը կհպատում կլիախուղվ, և որ այդ գներով ներառվոր է Լեռնային Ղարաբաղի հակաարարության կարգավորման հարցում Արցրեյանի տակալոր Թուրքիան օպտումա Հայաստանին: Ավաղում, որ այդ վճարարը չի կարող ծառայել ԱՄՆ շահերին և արժեքներին, և որ երթիներին վճարողի հետ կազմված ծրագիր պետք է վերանայվ: Sbu Milliyet, 15.05.2006

³⁰⁷ Turkish Daily News, 01 04 2007

³⁰⁸ Ա. Միննայան, Խարպեթա-րուրբական ռազմավարական համալիրանկությունն արկբությունը տարածաշրջանային անվտանգության ինժեաներիցինքի վրա, Թուրքիա Անվտանգության ու պաշտպանության ինժեաներիցինք, #22, Անթուրանյան կուրթի, N. 1, Երևան 2007, էջ 122; Sbu նաև Hicmetoğlu ve Sozenin odurucu, 31 10 2003

ատկայությունը առաջարկված խնդիր լուծելու համար պարտադիր է: Մասնավորապես, հզոր ՀՕՊ համակարգի կիրառության համար Թուրքիան աներկյան Boeing ընկերության հետ ստորագրված պայմանագրի է «Խաղաղության արժիկ» (թուրք. *Barış Karaisi*) ծրագրի շրջանակներում 2009 թ. ձեռք էր բերելու 2 միավոր Օդային վերահսկողության և կառավարման համակարգեր (AWACS), իսկ ևս 2 միավոր նախատեսվում էր կիրառության հանձնել 2010 թ.³⁰⁹: Թուրքական ՌՕՌ-ի համար պատվիրված համակարգերը, որոնց արտադրական գործընթացում մասնակցում է նաև թուրքական TUSAS ընկերությունը, իրենցից ներկայացնում են աներկյան E-3 C AWACS համակարգի քիչ ավելի պարզեցված տարբերակը՝ Boeing 737 ինքնաթիռի հիման վրա³¹⁰: 1.5 միլի ԱՄՆ դոլար քնդիանոր արժողության այդ ծրագրի հետ կապված՝ Թուրքիայի ԱՌԻ-ին AWACS-ների հանձնումը նախատեսված ժամկետից մեկ տարով հետաձգվել է³¹¹: Նշենք, որ Թուրքիայի ՌՕՌ-ը որոշակի փորձառություն ունեն վերնաշախ համակարգերի կիրառման ոլորտում, մասնավորապես, դեռևս 80-ական թթ. ՆԱՏՕ-ի կողմից Թուրքիայի տարածքում ՆԱՏՕ-ական AWACS-ների կիրառման բազա է կենդանացվել³¹²:

Այսպիսով էր, որ ՊԱԿ-Կ կիրառարկի փոքր հեռահարության ՀՕՊ համայնքների ծրագրի վերաբերյալ իր պայման-առաջարկությունները՝ նախագծին հետաքրքրություն դրսևորել օտարերկրյա ընկերությունների համար: Այն փորձում էր պարզել, թե որտեղ է ինչպես կարող են տեղական ընկերություններն աջակցել ծրագրին, քանի որ նախատեսվում էր արտադրության մեջ զգալի մասնաբաժին հատկացնել տեղական ռազմաարդյունաբերական ընկերություններին: Stinger ԶՀՀ-ի թուրքական տարբերակները դեռևս 2005 թ. սկսել են վաճառել Նիդերլանդներին և մի շարք այլ երկրներին:

Թուրքիայի հրթիռային համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում ՊԱԿ-Կ-ին առաջարկ-փաթեթ ներկայացվելու հարավ-աֆրիկյան Denel ընկերության կողմից, որն առաջարկում էր «Երկիր-օդ» դասի Umkhonto կոչվող հրթիռներ վաճառել այդ երկրին: Նման առաջարկի հետ կապված տեխնոլոգիական հնարավորություններն ու պայմաններն ուսումնասիրվել են ROKETSAN ընկերության մասնագետների կողմից՝ Հարավաֆրիկյան հանրապետություն կատարած

այցի ընթացքում: Համալիրի հրթիռն ունի 130 կգ ընդհանուր քաշ, որից 23 կգ-ը մարտական մասն է և 12 կգ հեռահարություն, համայնք կարող է միաժամանակ 8 թիրախների հարվածել³¹³: Չնայած վերջնական որոշում այդ հարցում չկա, այնուամենայնիվ թուրքական ընկերությունը պատրաստակամություն է հայտնել համատեղ արտադրության շուրջ ծրագրեր մշակելու վերաբերյալ:

AELSAN ընկերությունը երկար տարիներ աշխատանքներ էր իրականացնում ՀՕՊ ՌՏԿ-ների ստեղծման ուղղությամբ և արդեն 2009 թ. ԱՌԻ-ին այն հանձնեց ատաղյից թուրքական նախագծման ՌՏԿ-ն, որն ունի 30 կգ նախաճարձման հնարավորություն: Ներկայումս AELSAN-ի ՀՕՊ վարպետն էր նախագծերի մեջ առաջնային տեղ են արժեցնում «2009 SERDAR ափամերձ հսկողության ՌՏԿ-ի», «2011 TIHA SAR», «2011 նավերի որոնման և կրակի կառավարման ՌՏԿ-ի», «2012 ՀՕՊ ՌՏԿ-ի», «2016 քաղաքակնկնիչ ՌՏԿ-ի» ծրագրերը, որոնք արդեն իսկ իրականացվում են ընկերության ինժեներական լայն քաղաքի վրա³¹⁴: 2009 թ. հունվարի 9-ին AELSAN ընկերությունը ավելի քան 4 տարի տևած պայմանագրերից հետո Թուրքիայի ԶՋ-ի հրամանատարությանը հանձնեց տեղական արտադրության առաջին ՌՏԿ-ն, որը որպես ինժեներական միջոց կիրառվելու է ԶՋ-ի ՀՕՊ հսկողության ու նախագաղապման HERIKKS անվանումն ստացած համակարգի շրջանակներում: Հանձնման պաշտոնական արտադրության ժամանակ Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլը, շեշտելով AELSAN ընկերության հաջողություններն այդ ոլորտում, ցանկություն է հայտնել թուրքական արտադրության ՌՏԿ-ները վաճառել նաև այլ երկրներին³¹⁵:

Թուրքիան, ունենալով մեծ քանակ, արժանի ուշադրություն է դարձնում թուրք գործատեղակների սպասարկողության զարգացմանը, կատարելագործմանը՝ ինչպես արտասահմանից ձեռք բերելով, այնպես էլ սեփական արտադրության միջոցով: Թուրքական բանակը, մշտական ռազմական գործողություններ վարելով լեռնային տարածքներում, լավ փորձի հետ համատեղում է նաև նորագույն ռազմական տեխնոլոգիաները: Դրանով համընթաց, թուրքական ղեկավարությունը, այնուամենայնիվ, ճիշտ կոստիկով ապագայի պատերազմներում օդային հարձակման միջոցների աննախադեպ աճող դերը, պատշաճ ուշադրություն է

³⁰⁹ Yerli Awacs'lar 2009'da hizmete girecek, <http://www.ulasimonline.com>, 12. 12. 2008

³¹⁰ Turkey to Purchase AWACS From Boeing Company, http://english.peopledaily.com.cn/2006/06/06/eng20060606_97246.shtml, 06. 06. 2002

³¹¹ AWACS'ların teslimatı gecikti Boeing'ce uza kesilecek, *Sabah*, 23. 04. 2009

³¹² AWACS Base Open in Turkey, *The New York Times*, 26. 10. 1983

³¹³ <http://www.gbulen.ssm.gov.tr>, 10.10. 2006

³¹⁴ KKK, *ik.milli radarin teslimatı*

http://www.cmturk.tr/t/2009/bitim_teknoloji/teknoloji01/10/333_ik_milli_radarin_teslimatı/508350/d/index.html

³¹⁵ Aselesin hava savumma erken ikaz radarini teslim etti, <http://www.aselesin.com.tr>

դարձնում նաև ՌՕՌ-ի և հատկապես ՀՕՊ-ի զարգացմանը: Լուրջ ուշադրություն է դարձվում ՌՕՌ-ի տարբեր գործառնվարտների օպերատիվ-մարտական պատրաստվածության կատարվող ծնանդ՝ ինչպես առանձին, այնպես էլ ՆԱՏՈ-ի ընդհանուր ՌՕՌ-ի հետ համատեղ մարտական գործողությունների վարման պլանների մշակմանը: ՀՕՊ համակարգի մարտական պատրաստության բարձրացման նպատակով իրականացվում են «Mavi ok», «Sarp» տարեկան զորավարժություններն ու հասուկ նշանակության վարժանքներ¹¹⁶: Թուրքիան ցանկանում է ձեռք բերել ոչ միայն արդիական ու հզոր ՋՀՀ-ներ, այլ նաև օդային ղեկավարման կետեր, ինչպես ինքնաթիռների, այնպես էլ օդապարիկների ու ԱՅՍ-ների տեսքով: Այդ ուղղությամբ խրախուսված և անբիկական մասնակցությունների հետ տեղի են ունենում ակտիվ բնակարկներ: Թուրքական ընկերությունների ուշադրությունից դուրս էլ հատկապես ԱՅՍ-ներն իրենց մեծ հնարավորություններով: Փաստորեն, բուրբական ռազմաքաղաքական շրջանակները հուսակ հասկանում են, որ երկրին հարկավոր է քազմաշերտ և հուսակի պաշտպանություն երկնքից, ինչը միայն կարող են ապահովել օդային ղեկավարման կետերը՝ հզոր ՋՀՀ-ների և կործանիչ ինքնաթիռների համատեղ գործողություններն ապահովող միասնական տեղեկատվական դաստիգ: ASELSAN ընկերությունը, Թուրքիայի ՊԱՍ-Վ-ի հետ միասին, ձեռնամուխ է եղել ՋՌՒ-ի տարբեր գորատեսակների միջև միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմանը, որը ռազմական գործողությունների ժամանակ ապահովելու է օդային, ռազմածովային միջոցների ու ՅՁ-ի միջև օպերատիվ հաղորդակցություն¹¹⁷:

Կման հուսակի հաղորդակցային համակարգ առայժմ կիրառվում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և մասամբ էլ Իսրայելի ՋՌՒ-ում: Գրանով մի քանի անգամ կարճորանա բուրբական ԱՌ-ի ընդհանուր և առանձին ստորաբաժանումների կատարման արդյունավետությունը: Այս ամենը տարածաշրջանի համար նոր շախմախչ է, ճոր մրցակցություն: Թուրքական ՋՌ-ի որակի նման բարձրացման դեպքում տարածաշրջանում միանգամայն կարող է փոխվել ստանց այն էլ փխրուն հավասարակշռությունը: Դժվար չէ հասկանալ, թե բուրբական ՋՌ-ի ղեկավարման արդյունավետության բարձրացումը նման համակարգի շնորհիվ, որրան ուսանելի է մեր նման փոքր ու հերան պետությունների համար: Բանը նրանում է, որ հետախուզական, ղեկավարման և վերա-

հակողության արդիական էլեկտրոնային համակարգերը մի րանի անգամ կարող են բարձրացնել փոքր բաժանների հզորությունը (կեսուկ նոր մարտահրավերներին համասպասախանցեցնելու բուրբական մոդելը մեր տարածաշրջանում բավականին ուսանելի է: Այն նոր մրցակցավար է տարածաշրջանի համար, որից դուրս մնալը ցանկացածի համար պարտության նախանշան է: ՀՀ ՋՌ-ը ևս ակամայից հայտնվել են այդ մրցակցի մեջ: Հայկական ՋՌ-ը, ինձնակնունում ռազմատեսակներիկան խնդիրը լուծելով ներկրծմանը, մեծապես կախված են արտաքին գործնից: Այդ պատճառով, ավելի իրատեսակում է համարվում ժամանակի ընթացքում, համագործակցելով արտասահմանյան ընկերությունների հետ, ստեղծելով միասնական նախագծեր, մասամբ յուրացնել որոշ վիճատեսակների արտադրության գաղտնիքները: Հատկապես խոսքը վերաբերվում է ՅՁ-ի բազմատեսակ հրթիռային սարսակներույանը (հակատեսակային հրթիռային համակիրներ, հրետանային բազմատեսակ հրթիռային համակիրներ, ՀՕՊ-ի փոքր ենտահարության համակիրներ և այլն), որոնք, նախ կիրառվում են ավելի հաճախ, հետևարար նրանց յրակավմի ժախը շատ է, հետո լեռնային պայմաններում ավելի շատ գործածական են, և միևնույն ժամանակ բարձրացնում են կրակի արդյունավետությունը: Բացի դրանից, ամերիկյան նոր կործանիչների (F-35) Թուրքիայում հայտնվելը տարածաշրջանում կարող է զգալիորեն փոխել հավասարակշռությունը, իսկ մեքր թե միայնակ, թե Ռ-ի ռազմավարական համատեղ ծրագրերի մի մասով, ներգրավվելու ենք այս ամենում:

Ռազմաարդյունաբերության ոլորտում գրանցած հաջողություններով հանդերձ Թուրքիայում ղեկուս անիրատեսակում է համարվում միջին և ստավկապես մեծ հետադարձյան արդյունավետ ՀՕՊ համակիրների արտադրությունը, ինչը կարաված է այդ ոլորտում Թուրքիայում անհրաժեշտ տեխնոլոգիաների ու փորձի պակասի, ինչպես նաև համասպասակման փորձառու ինձեներակոնստրուկտորական քազա յունենալու հետ:

Մինչև հիճա, ղեկուս բուրբական ռազմաարդյունաբերությունը հետաք ՀՕՊ և ՀՀՊ միջոցների նույնիսկ քաղաքամասերի արտադրության ոլորտում հաջողություն չի քրանցել և դրանց ձեռքբերման համար միջազգային մրցույթ է հայտարարել: Դշենք, որ աշխարհում շատ ավելի հզոր վիտատեսնիկական քազ ունեցող երկրներ կան, սակայն ղեկ ոչ մի պետություն քացի ԱՄՆ-ից և Ռուսաստանից ինքնուրույն չի ստեղծել մեծ հետախարություն ՋՀՀ:

¹¹⁶ H. Coskun, 6/4, sayfa, 19 63

¹¹⁷ Tankçı, gemi konutani ve pilot birbiriyle konuşabilecek, Hürriyet, 17 04 2009

4.3 Տիեզերական նախագիծը և հետախուզական արբանյակի ծրագրերը

Թուրքիայի ԶՈՒ-ի արդիականացման լայնածավալ ծրագրի համատեքստում ռազմավարական կարևորություն և ներկայացնում տիեզերական հետազոտությունների ազգային հավակնուտ նախագիծը, որը նախատեսում է տիեզերքի ուսումնասիրման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծում: Թուրքական «Տիեզերական նախագիծը» 2005 թ. առաջարկել է այդ երկրի ԱՄՆ-ն, մշակվել Թուրքիայի գիտության և տեխնոլոգիայի բարձրագույն խորհրդի (բուրբ. *Billim ve Teknoloji Yüksek Kurulu*) կողմից և հետագայում լայնորեն ուսումնասիրության ներառվել պաշտպանական արդյունաբերության զորմարդի կառուցի նիստերում: Երազրի իրականացումը դրված է Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդի (TÜBİTAK) վրա, որը պետք է համագործակցի ԶՈՒ ԳՎ-ի, ՌՕՈՒ-ի, ԽՄՆատրոտի նախարարության, ինչպես նաև համալսարանների հետ³¹⁹:

Գետն 2001 թ. մարտին նախարարների խորհուրդը որոշում էր կայացրել Թուրքական տիեզերական կազմակերպության ստեղծման մասին (բուրբ. *Türk Uzay Kurumu*): Որոշման համաձայն՝ ՌՕՈՒ-ի իրաձևատարությունը ձեռնամուխ եղավ խորհրդի կազմակերպման ու օրենսդրական դաշտի ստեղծման ուղղությամբ, և 2002 թ. ընդունվեց «Ազգային տիեզերական գործակալության մասին» օրենք: Նույն թվականին այդ նախատակներով հատկացվեց շուրջ 250 մլն դոլար³²⁰: Իր կուրսերից մեկում Թուրքիայի ԶՈՒ ԳՎ-ի նախկին պետ Հ. Օզքյոզը, անդրադառնալով տիեզերական նախագիծին, հչել էր, որ «Թուրքիայի ԶՈՒ-ի տեսլականը 2000 թ. հետո տեղափոխվում է տիեզերք: Իսկ բանակի գեներալ Ավաթուրը տիեզերական ծրագիրը Թուրքիայի համար համարում էր ժամանակի պահանջ և գտնում, որ ստացն այդ հնարավորությունների օգտագործման ՌՕՈՒ-ը ժամանակի ընթացքում կարող են կորցնել ռազմական գործողությունների արդյունավետությունը³²¹:

Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ակտիվ բայելը են ձեռնարկվում սեփական արբանյակային համակարգի ստեղծման ուղղությամբ: Հավակնուտ այդ ծրագիրը նախատեսված է՝ ավարտին

հասցնել 2015 թ.: Երազրով, մասնավորապես, նախատեսվում է մինչև 2010 թ. բուրքական ՌՕՈՒ-ի սպաներից պատրաստել վեց տիեզերականացներից բաղկացած ջոկատ և մինչև 2012 թ. կատուել ազգային տիեզերականյան: 2012 թ. Թուրքիան միանալու է Եվրամիության տիեզերական ծրագրին, սակայն երեմնական շեշտը դրվելու է Լուսին վրա տիեզերական բազայի ստեղծման և այնտեղ տեղակայվելի համակարգի օգնությամբ սահմանակից Հյուսիսային Իրաքում բուրգ զինյալների տեղաշարժերի մասին հետախուզական տվյալներ ստանալու վրա: Տիեզերական հետախուզության տեղեկատվության շնորհիվ բուրքական բանակը կանխարգելիչ միջոցներ է ձեռնարկելու երկիր գրոհայինների ներթափանցում թույլ չտալու համար, ինչպես նաև ապահովելու է տարանցիկ նավամուղերի ու գազամուղերի անվտանգությունը³²²:

Տիեզերակայանի շինարարությունն իրականացվելու է՝ Հյուսիսում (ԱՄՆ) NASA-ի և Բայկոնուրում (Ղազախստան) Ռուսաստանի տիեզերական գործակալության տիեզերանավերի արձակման գործող կենտրոնների փորձի հաշվառմամբ: Մինչև 2012 թ. նախատեսված է ավարտել մեկնարկային համակարգի շինարարությունը, որի նպատակով Անկարայի, Սերսիսի, Անթարիայի և Իզմիրի վիլայերներում ուսումնասիրվում են հարմար տեղանքները³²³:

Այն Թուրքիայի կողմից դիտվում է որպես ռազմավարական կարևորագույն նախագիծ, ինչն առնչվում է ռազմարական, ռազմական, անվտանգության, գիտության ու սնունտության ոլորտներին: Այն ենթադրում է ինչպես բաղաբացիական, այնպես էլ ռազմական բաղաբղիչներ: Ընդհանուր առմամբ, այդ նախագիծը նախատեսում է բաղաբացիական-ռազմական կիրառում՝ ներառելով նաև օդային-տիեզերական պաշտպանության համակարգ³²⁴:

Տիեզերական նախագիծով նախատեսվում է միանալ Եվրոպական տիեզերական ծրագրին, 2008 թ.՝ բարձր հետախուզության տիեզերակաների նախագիծում և մշակում, տիեզերագնացների պատրաստման ուսումնական ծրագրերի իրականացում, 2009 թ.՝ արձակման համակարգի, նոր հրթիռների և հետախուզական արբանյակների արտադրություն, 2010 թ.՝ հատուկ հեռախոսակների ձևերբերում, 2012 թ.՝ ազգային տիեզերականյանի կառուցում և 2014 թ.՝ «Ազգային հետազոտությունների արբանյակի» արձակում տիեզերք³²⁵:

³¹⁹ Türkiye uzaya adım atacak, Radikal, 22.06.2005

³²⁰ Türk Uzay Sektörüne Heskin Değerlendirme, Savunma Havacılık ve Uzay Sanayii Paneli Raporu/EK-5, Ankara, 2003, <http://www.vizyon2025.tubitak.gov.tr>

³²¹ TSK: Vizyonumuzuz uzaya taşındı, NTV, 06.05.2003

³²² Yem Şafak, 08.01.2007

³²³ <http://www.regnum.ru>, 06.11.2006

³²⁴ Türk Uzay Sektörüne İlişkin Değerlendirme.

³²⁵ Devlet'in hayali, Akşam, 14.09.2005, DİEF 2005, <http://www.thewebanatomian.com>

Ըստ բուրբական աղբյուրների՝ րոբո ինժեներների մասնակցությամբ մշակվել է արտադրվել է առաջին արտադրական տեղական արտադրության արբանյակը, որը, Ռուսաստանի հետ ստորագրված պայմանագրի համաձայն, պետք է տիեզերք ուղարկվի 2010 թ.՝ ռուսական Օրենբուրգի շրջանում գտնվող արձակվան կայանին: RASAT (Gözelim) անունը կրող այդ արբանյակը մշակվել է ստեղծվել է TÜBİTAK-ի Տիեզերական տեխնոլոգիաների հետազոտական ինստիտուտի (*Uzay Teknolojileri Araştırma Enstitüsü*). Պետական պլանավորման կազմակերպության (DTP) միջոցներով: Արբանյակը նախատեսված է քաղաքային պլանավորման, անտառային ու գյուղատնտեսական, ճգնաժամային իրավիճակների ու աղետների դիտարկման ու հսկողության համար. սակայն, կարող է կիրառվել նաև ռազմական մի շարք նպատակներով³²⁵:

Նման խոշորագույն ու միաժամանակ հավակնոտ նախագծի ստանձնումը Թուրքիայի կողմից կայահանելի ինչպես խոշոր Ֆինանսական միջոցներ, այնպես էլ ժամանակակից ներագույն տեխնոլոգիաներ ու մարդկային մասնակիտական ռեսուրսներ այդ ոլորտում, որը ներկա դրությամբ բուրբական կողմը լիովին չունի և, կարելի է ասել, այդ նախագիծը դեռ երկար ժամանակ մեծ ջանքեր կպահանջի: Թեև, ըստ բուրբական ժամանակացույցի նախանշված ժամկետների, ծրագրի իրագործումը անիրատեսական է համարվում, այնուամենայնիվ, կարևորություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Թուրքիայում հատուկ գիտահետազոտական ինստիտուտներում ու համալսարանական շրջանակներում էինձնվում են հետազոտական խմբեր և պատրաստվում մասնագետներ:

Միևնույն ժամանակ քայլեր են ձեռնարկվում հետախուզական սեփական արբանյակն ունենալու ուղղությամբ: Թուրքիան անընդհանր արբանյակային ծառայություններից հրաժարվելու նպատակով վկայել է հետախուզության և հսկողության սեփական արբանյակային համակարգի ստեղծման աշխատանքները՝ շուրջ 250 մլն դոլար ընդհանուր արժեքով: Գործարկվելիք այդ համակարգը ռազմավարական դերակատարություն կունենա, հատկապես, Բոզական բանվորական կու-

սակցության գործունեության հարցում հետախուզություն ապահովելու գործում³²⁶:

2009 թ. հուլիսին հետախուզական արբանյակի նախագծի իրականացման վերաբերյալ սրայնանագիր ստորագրվեց ՊԱԳՎ-ի ու իտալական խոշորագույն Finmeccanica և Գրանսիական Thales ընկերությունների համառոտ Telespazio ընկերության միջև: Ստորագրված պայմանագրի համաձայն Telespazio ընկերությունը 42 ամսվա ընթացքում իրականացնելու է արբանյակի արտադրություն, արձակման և վարձարկումների ծառայությունները³²⁷: Թուրքիայի ՌՈՏՈ-ի կողմից «առաջնային ծրագիր» ինչպևակում արբանյակի ստեղծման մրցույթում հաղթող ճանաչվեց արբանյակային արտադրության մեջ մասնակցությամբ իտալական ընկերությունը. չնայած, որ հայաամբողջորեն մասնակցել են անընդհանր, Խնթեֆական, իտալական, ճապոնական, կորեական և այլ ռազմատրոյունաբերական ընկերություններ: Իտալական ընկերության ընտրության շատ բանով կախված էր նաև մրա ստացարկից, որով բուրբական իշխանություններին առաջարկվեց որչ արժեքով տեղական արդյունաբերության մասնակցությունը այլ նախագծում:

«Gökürk» անունը կրող առաջին բուրբական հետախուզական արբանյակը կազմված կլինի Լեկարտասպիրիական հսկիչ ուղևորային արբանյակից և մեկական անշարժ ու շարժական ելքային կայաններին: Արտասահմանյան ընկերությունների հետ միասին համակարգի արտադրական գործընթացում ուղեկն ներակապալառու ներգրավված են բուրբական TUSAŞ, ASELSAN, ROKETSAN ընկերությունները և TÜBİTAK-ը: 600-650 կմ բազմության ուղևորում տեղակայվելիք այդ արբանյակը բուրբական ԶՈՒ-ին կծառայի 4-6 տարի: Ըստ նախանշված ժամկետի՝ արբանյակը տիեզերք է արձակվելու 2012 թ.³²⁸:

2007 թ. ընթացքում Թուրքիան ձեռք էր բերելու նաև անընդհանր Lockheed Martin ընկերության արտադրության 2 հետախուզական օդատարիկներ՝ երկի հարավարևելյան շրջաններում բուրջ գրեհայինների տեղաշարժերի մոնիթորինգ ու հետախուզություն իրականացնելու նպատակով: Դրանց գնման համար բուրբական կողմը դիմել էր Պենտագոնին, և վաճառքն իրականացվելու էր ԱՄՆ-ի արտաքին ռազմական վաճառքի շրջանակներում: 50-60 մլն դոլար արժողության այդ օդապարիկները համարվելու էին ASELSAN ընկերության արտադրու-

³²⁵ TÜBİTAK-ի Տիեզերական տեխնոլոգիաների հետազոտական ինստիտուտը ստեղծվել է 1985 թ., որը գիտահետազոտական-կրթություն կողողային աշխատանքներ է իրականացնում տիեզերական տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի ու տեղեկատվական տեխնոլոգիաների ու այլ ոլորտներում: Şişli Yerli uydu RASAT 2010'da uzaya çıkıyor, Radikal, 09/09/2009

³²⁶ Akşam, 20.07.2006

³²⁷ İhaleye katılan Gökürk, 2012'de uzaya gidecek, Sabah, 17.07.2009

³²⁸ Sabah, 17.07.2009

բյան էլեկտրասօսփիկական համակարգերով, որոնք կարող են հետախուզական դիտարկում իրականացնել 1000-1500 կմ² տարածությունում:³²⁹

Այսպիսով, Թուրքիան լայնամասշտաբ նախագծերի միջոցով փորձում է ստեղծել Ռ-ՌՌՒ-ի ու ՀՕՊ-ի զարգացած ու ինտեգրացված մի համակարգ, որն առաջին հերթին համարվում է նորագույն ռազմական տեխնիկայով ու սպառազինությամբ: Այդ համակարգում լուրջ տեղ է հատկացված ռազմական ոլորտի տեխնոլոգիական նոր միջուկներին՝ ԱԹՄ-ներ, հետախուզական արբանյակ, հետախուզական օդաչարիկներ: Չնայած Թուրքիան լիովին չի տիրապետում նորագույն տեխնոլոգիաներին, այնուամենայնիվ քաշեր է ձեռնարկում դրանց նախագծման ու արտադրության ոլորտից: Արտադրական գործընթացում բուրբական կողմը դեռևս զգալի կախվածություն ունի ատաջատար երկրներից և ամեն կերպ ցանուծ է այդ երկրների օգնությանը յուրացնել նրանց փորձն ու պատրաստել սեփական կադրերը:

ՌԱԶՄԱՄՈՎԱՅԻՆ ՌԻՇԵՐԻ ԱՐԿԻԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՌԻ
ՌԱԶՄԱԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի ՌՃՌ-ը հանդիսանում են ՋՌՒ-ի էիմնական զորքի տեսակներից մեկը և քանակական ու մարտական հնարավորություններով ու համարվածություններով համարվում են տարածաշրջանում ամենամեծն ու մարտունակը: ԽԱՀԿ՝ փուլառմից ու խորհրդային Մեծ վաճառքի՝ Ռուսաստանի Դաշնության ու Ռկրախիայի միջև բաժանումից հետո, բուրբական ՌՃՌ-ը դարձան ամենակարգը ՄԵ ծովում: Հնա-ասաղապետներգծյան շրջանում բուրբական ՌՃՌ-ը ստացան ավելի ընդգրկում ու մասշտաբային գործառնությունը, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային նոր գարգացումներին համարձեք Թուրքիայի անվտանգության ու պաշտպանության առումով: Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային դերակատարի հավակնությունները, տարածաշրջանային էներգետիկ-հաղորդակցային նախագծերն ու ռազմաքաղաքական զարգացումները Թուրքիայի զինվորական ու քաղաքական իշխանությունների համար էլ ավելի են կարևոր դարձնում սեռնույն տարածաշրջանում բուրբական հզոր նավատորմի ու մարտունակ ու նորագույն սպառազինությանը համարված ՌՃՌ-ի գերակայությունը:

Թուրքիայի ՋՌԻ ԳԸ-ում 1928 թ. մինչև 1949 թ. որպես Եմվային վարչություն գործող ռազմածովային հրամանատարությանը 1949 թ. օգոստոսի 15-ի Բարձրագույն զինվորական խորհրդի (*Yüksek Askeri Şura*) որոշմամբ վերակազմավորվեց ՌՃՌԻ հրամանատարության³³⁰:

Կազմակերպչական առումով ՌՃՌ-ը ներառում են 4 հրամանատարություն՝ Ռազմածովային նավատորմի, Հյուսիսային ու Հարավային ռազմածովային գոտիների և Ուսումնական: Պատերազմական իրավիճակում ՌՃՌԻ-ի ընդհանուր հրամանատարության ենթակայություն է անցնում Առափնյա անվտանգության հրամանատարության (այստեղև ԱԱՀ, բուրբ. *Sahil Güvenlik Komutanlığı*) օպերատիվ ղեկավարումը, որը խաղաղ պայմաններում գտնվում է ՆԳՆ-ի ենթակայության տակ:

ՌՃՌԻ-ի ինքը հանդիսանում է ռազմածովային նավատորմի հրամանատարությունը, որի շտաբը գտնվում է Գյոյջլուրի ռազմածովային էնեակետում: ՌՃՌԻ Հյուսիսային գոտու հրամանատարությունը, որի

³²⁹ Türkiye, PKK açtı için ABD'den 2 zeplin alıyor, <http://www.haber10.com>, 12.03.2007

³³⁰ Türk Denizciligi tarihi bir günü yaşıyor, <http://www.rotahaber.com>, 26.08.2008

շտարը գտնվում է Մտամբրուում, պատասխանատու է Բոսֆոր և Դարդանեկ նեղուցների, Մարմարա ծովի ու սեծովյան գոտիների պաշտպանության համար: ՌՃՌՒ հարավային գոտու հրամանատարության, որի շտարը գտնվում է Իզմիրում, պատասխանատուության տակ են մտնում Էգեյան ու միջերկրածովյան շրջանների անվտանգության ապահովումը³¹¹:

Ռազմածովային նավատորմը հիմնականում համարված է արևմտյան երկրների արտադրության նավերով, որոնք Թուրքիային են տրամադրվել ռազմական օգնության տարրեր ծրագրերի շրջանակներում: ՌՃՌՒ-ի հրամանատարության համար առաջնաերթ խնդիր է դիտվում տարրեր դասի ռազմական նավերի արդիականացումը, տեղական ռազմաարդյունաբերության ու այլ երկրների հետ համատեղ արտադրական նախագծերն ու ռազմական ուժի կորացմանն ուղղված միջոցառումների իրականացումը. բանի որ հրամանատարության սպառազինության մեծ մասն արդեն հնացած էր և արդիականացման ու համալրման կարիք էր գտնում: 1980-90-ական թթ. Թուրքիայի սպառազինության նավաշինական գործարաններում Գերմանիայի արակառայանը իրականացվել է ATILAY և PREVEZE դասի 6 սուզանավերի արտադրություն, ինչպես նաև այդ երկրից ձեռքբերվել MEKO 200 դասի 4 չրեկատ, 8 միավոր Ծոջան հրթիռային մտորանավակ: ՌՃՌՒ-ի համայնքն գործում գլխի արակառայան է արամադրել հատկապես ԱՄՆ-ը: 1993-1995 թթ. ընթացքում միայն Թուրքիային է տրամադրվել 8 միավոր Knox տիպի չրեկատ: 90-ական թթ. երկրորդ կեսին ԱՄՆ Կոնգրեսը վավերացրեց ավելի վաղ ընդունված որոշումը, որով Թուրքիային որպես ռազմական օգնություն հատկացվեց Oliver Hazard Perry (FFG-7) դասի 3 չրեկատ³¹²:

ՌՃՌՒ-ի արդիականացման, նոր միջոցներով համալրման ու տեխնոլոգիական ժամանակակից ռազմական համակարգերի զարգացման ուղղությամբ հատկապես են գլխի գտնարներ: Թուրքիայում գործում են մի բանի ռազմաարդյունաբերական ընկերություններ, որոնք մասնավորապես են ծովային միջոցների ու նավաշինության ոլորտում: Մտամբրուում, Գյուլյուրում և Իզմիրում գործում են ՌՃՌՒ-ին պատկանող նավաշինական ու վերանորոգչական գործարանները, պետական նավաշինական ձեռնարկությունը, Yonca-Onuk, Dearsan, SEDEF, RKM մասնավոր ընկերությունները, որոնք հանդիսանում են SaSaD-ի անդամներ և YH.DIZ արտաստիմանյան համաձայն կազմակերպությունը:

Տարբեր նշանակության ռազմական նավերի արտադրության ոլորտում խոշորագույններից է Dearsan Gemi Insaat Sanayi թուրքական ընկերությունը, որը հիմնադրվել է 1980 թ.: Այն հիմնականում իրականացրել է Aquila Tug տիպի նավերի ու բինիական տանկերների արտադրություն: Արբերս այդ ընկերությունը հարող ճանաչվեց Թուրքիայի ՌՃՌՒ-ի համար 16 միավոր նոր տիպի պարելային նավերի արտադրության համար հայտարարված մրցույթում: Արտադրվելիք այդ նավերը համարված են լինելու 40 մմ երկփողային իրանդրով, 12.7 մմ մեխանիկական իրանդրով, ստորջրյա հրթիռային պաշտպանության ու ջրային ականների վնասակերծման համակարգերով³¹³: Ընկերության վերակազմավորման արդյունքում ստեղծվել է Մարտական համակարգերի բաժին, որում ներգրավված են ՌՃՌՒ-ի թռչակառու սպաներ ու ռազմական ինժեներներ: Ընկերությունը առաջիկայում նախատեսում է մեծացնել ռազմական նավերի արտադրական քաղաք:

2006 թ. ԳԱԳՎ-ն տեղական նավաշինական ընկերությունների կողմից 16 միավոր պարելային նավերի արտադրության մրցույթ էր հայտարարել, որին փարեր-առաջարկներ էին ներկայացրել թուրքական մի քանի ընկերություններ, այդ բոլոր՝ Dearsan-ը, RMK Marine-ը, Çelik Tekne-ն³¹⁴:

Yonca-Onuk թուրքական ընկերությունն իր արտադրական գործընթացում իրականացնում է տարբեր դասի մտորանավակների արտադրություն, որոնք կիրառվում են ինժեներական ԱԱՀ-ի ստորաբաժանումներում: Ընկերության արտադրական կին են պատկանում MRTP 15, MRTP 16 մոդելի արագ արձագանքման մտորանավակները, MRTP 16 Ս փրկարարական, MRTP 29 պարելային մտորանավակներն ու MRTP 33 պարելային-հարձակողական նավը, որը հանդիսանում է Onuk MRTP 29 (KAAN 29) նավի արդիականացված տարբերակը³¹⁵:

RMK Marine թուրքական նավաշինական ընկերությունը հիմնադրվել է 1974 թ., որը 1997 թ. միացավ թուրքական խոշորագույն Koç Holding ընկերությանը: Հիմնականում ընկերությունը իրականացրել է ստերային ու տրամագորտային նավերի արտադրություն, իսկ վերջին տարիներին սկսել է լուրջ ուղղություն դարձնել ռազմական նավաշինությանը: Ընկերությունը 2007 թ. պայմանագիր ստորագրեց ԳԱԳՎ-ի հետ, որով ստանձնեց ԱԱՀ-ի որոնողափրկարարական նա-

³¹¹ Տես Թուրքիայի ՌՃՌ-ի պաշտ. կայք՝ <http://www.tsk.mil.tr>

³¹² A. Федин. Военно-морские силы Турции // Зарубежное военное обозрение. № 5, 1997

³¹³ Տես Dearsan ընկերության կայք՝ <http://www.dearsan.com.tr>

³¹⁴ Donanmaya 16 yeni bot, Sabah, 03.05.2006

³¹⁵ Տես Yonca-Onuk ընկերության կայք՝ <http://www.yonca-onuk.com>

վերի արտադրության 352.5 մլն եվրո արժեք ունեցող մախարազանի իրականացման պատասխանատվությունը, որի շրջանակներում արտադրվելու են 4 միավոր նման դասի նավեր: Նավերի իրամանադարական հսկման ու կապի համակարգերը մշակվելու են ASELSAN ընկերության կողմից: Առաջին միավորը նախատեսված է ԱՄՀ-ին հանձնել 2010, իսկ մյուսները՝ 2011 թ.³¹⁶:

2009 թ. հունվարին պայմանագիր ստորագրվեց իտալական Oto Melara ընկերության հետ՝ վերոնշյալ նավերի համար 40 մմ տրամաչափի երկվորանի իրանորի մատակարարման վերաբերյալ³¹⁷:

2008 թ. դրությամբ Թուրքիան ԱՄՆ-ից ռազմական օժանդակության տեսքով ստանալու էր Perry դասի 2 իրկալատ: Դրանցից մեկը այդ երկրին էր տրամադրվելու որպես ռազմական օգնություն, իսկ մյուսը՝ վաճառքի տեսքով: 2007 թ. ԱՄՆ-ի կողմից մշակվել էր դաշնակից երկրների կարիքների համար ռազմական նավերի տրամադրման ծրագիր, և դրա շրջանակում էլ Թուրքիային առաջարկվել էր վերոնշյալ տեսակի նավերը: Նշենք, որ Թուրքիան նախորդ տարիներին ԱՄՆ-ից մեկ էր բերել 8 միավոր նման ռազմական, և նախատեսվող այդ չորս-վասերի հետ միասին դրանց ընդհանուր թվը ՌՃՈՒ-ում կազմում է 10 միավոր³¹⁸: Թուրքիան նաև լուրջ ներդրումներ է կատարում սուզանավերի ձեռքբերման ուղղությամբ: Սուզանավերի ձեռքբերման համար հայտարարված մրցույթի շրջանակներում 2008 թ. նույնիսկ Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հարող ճանաչվեց գերմանական HDW և անգլիական MFI ընկերությունների համատեղ նախաձեռնությամբ արտադրված "U-214" մոդելի սուզանավ: Թուրքական կողմը մեծ էր բերելու 6 միավոր նման սուզանավ, որի ընդհանուր արժեքը կազմում է 2.5 մլրդ եվրո: Հինգնական արտադրության գործընթացում մասնակցելու են նաև թուրքական ընկերությունները: Մասնավորապես այդ սուզանավերի որոշ համակարգեր ու կապի միջոցներն արտադրվելու են թուրքական ASELSAN, HAVELSAN, TÜBITAK ընկերությունների կողմից: Սուզանավերը բուրբակային ՌՃՈՒ-ին են հանձնվելու 2015 թ. սկսած՝ տարեկան մեկ միավոր³¹⁹:

2009 թ. ապրիլին ASELSAN ընկերությունը պայմանագիր ստորագրեց իտալական առաջատար Finmeccanica ընկերության մաս կազմող WASS կազմակերպության հետ՝ նոր տեսակի սուզանավերի պաշտ-

պանական համակարգերի համատեղ զարգացման վերաբերյալ: Պայմանագրի համաձայն՝ թուրքական և իտալական ընկերությունները WASS կազմակերպության արտադրության Black Shark ստորվերոները ինտեգրացնելու են Թուրքիայի համար մեծ բերվելիք նոր սուզանավերի հավատարկելային պաշտպանության համակարգին: Ըստ այդ ընկերությունների ներկայացուցիչների՝ հետագա համագործակցության արդյունքում հնարավոր է սկսել ստրատեգիաների համատեղ արտադրության ծրագրեր³²⁰:

Սինոյն ժամանակ Թուրքիայի ՌՃՈՒ հրամանատարությունը դիմել էր ԱՄՆ-ին 100 միավոր MK-54 տեսակի տորպեդոնր փնտրելու վերաբերյալ, որոնց ընդհանուր արժեքը կազմում էր 105 մլն դոլար: Չնորբերվելիք այդ հրթիռները նախատեսված են Perry տեսակի իրկալատների ու ՌՃՈՒ-ի S-70B SEAHAWK ուղղաթիռների կողմից կիրառման համար³²¹:

HAVELSAN ընկերության կողմից նախագծվել և մշակվել է նավերի ինտեգրացված պատերազմի կառավարման համակարգ (GENESIS), որն ի միասնի է ինքնուրույն հայտնաբերելու նշանակետերը, նավին սպառնացող կրիտիկներն ու տորպեդոները, ինչպես նաև իրականացնում է մարտական ղեկավարման ու կառավարման գործառնություններ՝ օդային, վերջրյա և ստորջրյա ռազմական գործողությունների ժամանակ: Ներկայումս ընկերությունը իրականացնում է Թուրքիայի ՌՃՈՒ-ի 8 նավերի՝ նման համակարգով համարման աշխատանքներ, որոնց հիմնական գործարկումն ու հանձնումն իրականացվել է 2007 թ., իսկ եւ 2-ինը՝ 2008 թ.: Նախագիծը նախաձեռնվել էր Թուրքիայի ՌՃՈՒ-ի Perry իրկալատների համարման համար: Ընկերությունը նման համակարգերի ներդրման ու աշխարհի արտադրողներին նախագծում համագործակցում է բուրբակային նավաշինական ընկերությունների ու ամերիկյան RAYTHEON ընկերության հետ: Հնամագործակցությունը ինքնակամում նախատեսում է համակարգերը ներդնել տարբեր երկրների ՌՃՈՒ-ի FFG 7 դասի իրկալատների համար³²²:

HAVELSAN ընկերությունը 2007 թ. պայմանագիր ստորագրեց թրիտանական Ultra Electronic ընկերության հետ՝ ՌՃՈՒ-ի նավերի համար

³¹⁶ Koç ilk kez askere 4 gemi yapacak, Hürriyet, 17.01.2007

³¹⁷ Savunma Sanayisi Gündemi, Savunma Sanayisi Mustafa Kemal, Mart 2009, Sayı 7, s. 91

³¹⁸ ABD'den Türk Deniz Kuvvetleri'ne iki fükesin deniz dala (D-TSK Gemi), Sabah, 05.08.2008

³¹⁹ 2.5 milyar civarında denizaltı ihalesi de belli, Sabah, 22.07.2008

³²⁰ Turk Aselsan agrees deal with Finmeccanica unit, ASIAN DEFENCE, 30.04.2009

³²¹ Türkiye, ABD'den 100 torpido alıyor, Milliyet, 25.04.2007

³²² Havelsan, Genesis'in ihracatı hedefliyor, Radikal, 24.02.2009

SEA SENTOR հակատորպեդային պաշտպանության համակարգերի արտադրության ու ձեռքբերման վերաբերյալ³⁴³:

Թուրքիայում նոր դասի պարեկային նավերի արտադրության կապալառու բուրգական Dearsan ընկերության ու ASELSAN-ի միջև ստորագրվել է համագործակցության պայմանագիր, ինչի շրջանակում ընկերությունը ստանձնելու է արտադրվելիք 16 միավոր պարեկային նավերի էլեկտրասօպտիկական ուղղորդիչների, միասնական տեղեկատվական համակարգերի ու կրակի կառավարման համակարգերի ու կայունարարով մեխանիկական հրամարտների բազայի արտադրությունն ու դրանց տեղակայումը նավերին³⁴⁴:

ՌՖՈՒ-ի համար ինտեգրացված մարտական համակարգերի ուղղորդյաժ արտադրությունը է իրականացնում նաև ASELSAN ընկերությունը AMICOS (ASELSAN Modular Integrated Combat System) նախագծի շրջանակներում, որը նախատեսում է ռազմական նավերը համարել մարտի վարձան ինտեգրացված համակարգով, որը ներառում է էլեկտրոնային պաշարի, մարտի վարձան վերջրյա և ստորջրյա, հիրիտային, տորպեդային ու հակատորպեդային համակարգերի, ինչպես նաև ՌՏԿ-ների, էլեկտրասօպտիկական սարքավորումների և կապի ու կառավարման միջոցների միասնական դաշտ³⁴⁵:

Ընկերությունը իրականացնում է նաև ռազմական նավերի տեղեկատվական համակարգերի արդիականացման աշխատանքներ, որի շրջանակում արդեն ավարտել է ՌՖՈՒ-ին պատկանող 4 հարձակողական նավերին այդ համակարգերի արդիականացումը: ՌՖՈՒ հրամանատարության ու ընկերության համագործակցության արդյունքում իրականացվում են ռազմական նավերի համար էլեկտրասօպտիկական համակարգերի, ջերմային ու լավերային դիտարկման միջոցների (ASIR-D) արտադրության ու նավերին դրանց հարմարեցման աշխատանքներ: 2006 թ. մայիսին ՊԱԳՎ-ի ու ASELSAN ընկերության և ՌՖՈՒ-ի հրամանատարության Հնտագոտակա կենտրոնի հրամանատարության (ARMERKOM) միջև ստորագրված պայմանագրով իրականացվում է ռազմական նավերի (հետախույզական) 76 մե տրանսպիի հրանրների կրակի կառավարման համակարգերի (TAKS) արտադրության ծրագիրը³⁴⁶:

2007 թ. հուլիսին ASELSAN ընկերությունը 85 մե դրար արժուրության պայմանագիր ստորագրեց ՊԱԳՎ-ի հետ՝ ՌՖՈՒ-ի կարիքների համար ստորջրյա և վերջրյա հսկողության ու հայտնաբերման (Surveillance and Detection) համակարգի նախագծի (YUNUS) իրականացման վերաբերյալ, որը 24-ժամյա անընդմեջ հատուկ դիտարկում ու վերահսկողություն է իրականացնելու ռազմածովային ռազմաներում ու կարևորագույն նավահանգիստներում³⁴⁷:

Թուրքիայի ՌՖՈՒ-ի կողմից սկսվել է լայնամասշտաբ մի նախագիծ, որի շրջանակներում Թուրքիայում արտադրվելու են 12 միավոր բազմախոնկցիոնալ հետախույզական ռազմանավեր: Նավերի արտադրության MILGEM (բուրբ. Milli Gemi-Uygulama) նախագիծը մեկնարկել է 1993 թ. ՌՖՈՒ-ի հրամանատարության կողմից և 1996 թ. նավերի նախագիծն էր կապված սկսեց աշխատանքներ իրականացնել Ստամբուլի տեխնիկական համալսարանի (İTÜ) հետ: 2000 թ. մայիսին ՊԱԳՎ-ի կողմից նավերի նախագիծն ու արտադրության ոլորտն էր հիմնական ընկերությունների մասնակցության մրցույթ հայտարարվեց, որը սակայն 2001 թ. չընդլ համարվեց և միայն 2004 թ. որոշում կայացվեց առաջին նավի նախատիպի աշխատանքներն սկսելու մասին: Նախագիծի հետագա ընթացքի հստակեցման վերաբերյալ 2005 թ. հունվարին ՊԱԳՎ-ի ու ՌՖՈՒ հրամանատարության միջև ստորագրվեց արձանագրություն: Նավի նախատիպի նախագիծն, արտադրության ու համարված, անհրաժեշտ համակարգերի, սարքավորումների ու ծառայությունների մատակարարման գործընթաց սկսվեց 2005 թ. հուլիսին՝ ՊԱԳՎ-ի կողմից Ստամբուլի տեխնիկական համալսարանի նավաշինության ու ծովային գիտությունների Ֆակուլտետի հետ կնքված պայմանագրով, որին հաջորդեցին մի շարք այլ պայմանագրեր TUBITAK-ի տարբեր գիտահետազոտական ինստիտուտների, TÜRK Loydu, ASELSAN, STM և MTU ընկերությունների հետ: Նախագիծի հետ կապված վերջին պայմանագիր ստորագրվել է 2007 թ. մայիսին ASELSAN-HAVELSAN աշխատանքային համատեղ խմբի հետ, որն իրականացնելու է նավի մարտական համակարգերի արտադրությունն ու համարված³⁴⁸: 2009 թ. հոկտեմբերին ստորագրված մեկ այլ՝ 86 մե կվո արժուրության պայմանագրի շրջանակներում ASELSAN-HAVELSAN ընկերությունների համատեղ աշխատանքային խումբը իրականացնելու է նաև MILGEM

³⁴³ Deniz Kuvvetleri'ne yeni savunma sistemi, <http://www.ssm.gov.tr/TR/dokumanitasyon/basinbulteni/Pages/20070814.aspx>

³⁴⁴ Deniz Platformlarında Aselesan, ASELSAN, Yıl 21, Sayı76, Temmuz 2008, s. 70.

³⁴⁵ Կույն տեղում, էջ 34-35

³⁴⁶ Կույն տեղում, էջ 50-52

³⁴⁷ Savunma Sanayii Gündemi, Ekim 2008, Sayı 6, s. 85

³⁴⁸ Milli Gemi Projesi, Denizaltı Savunma Harbi ve Keşif Karakol Gemisi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Müsteşarlığı, Ekim 2007, Sayı 2, ss 74-79

ճախագծով արտադրվելիք 2-րդ ռազմանավի մարտական համակարգերի մատակարարումը³⁴⁹։ 2008 թ. սեպտեմբերին ՌԾՌՆ-ի Ստամբուլի նավաշինական հանգույցում ծով իջեցվեց MILGEM նախագծով արտադրված նախատիպ հանդիսացող Heybeliada անուն ստացած սառչին ռազմանավն ու ականագերծիչ Akçay նավը, և մեկնարկվեց B5yñkada անունը կրող երկրորդ նավի շինարարության սկիզբը։ Heybeliada ռազմանավը ՌԾՌՆ-ում կիրառության կղզի 2011 թ.³⁵⁰։

Թուրքիայի համար 250 մլն դոլար արժեքով Heybeliada ռազմանավն ունի 99 մ. երկարություն, որի վրա կարող է տեղակայվել 1 միավոր ուղղակիտ։ Այն համարված է լինելու վերջրյա և ստորջրյա մարտական գործողությունների ու ՀՀՊ և ՀՕՊ, հետախուզական դիտարկման, կապի ու հրամանատարական հսկման ու կառավարման ժամանակակից համակարգերով, ՌՏԿ-ներով ու լավերային նախագույշացման կայաններով, հրանոթային ու հրիտային զենքերով³⁵¹։ Արտադրվելիք ռազմանավերը մարտական հերթապահություն են իրականացնելու ծովային կարևոր ու ռազմավարական նշանակության գոտիներում՝ ապահովելով ռազմարագանների ու նավահանգիստների հսկողությունն ու պաշտպանությունը։

Ընդհանուր առմամբ, ռազմական նավաշինության ոլորտում վերոնշյալն արվում սկսել ինքնուրույն նախագծեր՝ դրանցում ներգրավվել նաև մասնավոր ընկերություններին, որոնք իմնականում գործում էին առևտրային նավերի արտադրության ոլորտում։ Գա տարիների ընթացքում հնարավորություն կտա համախմբել մասնագիտական ու ենթակառուցվածքային ռեսուրսները նոր որակի նախագծերի համար։ Չնայած մի շարք ռազմանավերի ու մոտորանավակների արտադրության ոլորտում, կարելի է ասել, բուրբական ընկերությունները հասել են որոշ հաջողությունների, այնուամենայնիվ, դեռևս զգալիորեն օգտվում են արտասահմանյան մի շարք երկրների տեխնոլոգիական հնարավորություններից, ինչպես օրինակ՝ սուգանավերի արտադրության ոլորտում։

Այսպիսով, Թուրքիան մեծ ուշադրություն է դարձնում ՌԾՌՆ-ի զարգացմանը, մշտապես այն մարտունակ վիճակում պահելուն և ՆԱՏՕ-ական առաջատար համակարգերի հետ համապատասխանեցնելուն։ ՌԾՌՆ-ի արդիականացման ծրագրերը կարևորվում են նաև այն

հանգամանքով, որ Թուրքիան ձգտում է դառնալ Ենրզուտիկ-ուրանիկ-տային կարևոր կենտրոն, ինչի հետ կապված այն զգալիորեն պետք է մեծացնի իր ծովային տարածքների ու գոտիների, նավահանգստային ու ռազմավարական կենտրոնների անվտանգությունը։ Հատկանշական է այն փաստը, որ Թուրքիայի ընդհանուր արտաքին առևտրի 90%-ն իրականացվում է ծովային ուղիներով³⁵²։

Պատահական չէ, որ 2008 թ. օգոստոսի վրաց-օսական 5-օրյա պատերազմից հետո Թուրքիայի ՌԾՌՆ-ի հրամանատարությունը նախատեսում է նոր ռազմարագա ինժեներական սեծովյան Տրապիզոն նավահանգստում՝ տարածաշրջանում ռազմավարական մոնիտորինգ իրականացնելու նպատակով³⁵³։ Բացի այդ, զարգացած ու հզոր ՌԾՌՆ-ի գոյությունը զգալի չափով պայմանավորված է սեծովյան տարածաշրջանում աշխարհառադարական անկախուն իրավիճակի առկայությամբ ու հնարավոր անկանխատեսելի զարգացումներով։

³⁴⁹ MILGEM-2'nin savas sistemi ASELSAN ve HAVELSAN'dan, Zaman, 13.10.2009

³⁵⁰ İlk milli savas gemisi denize indirildi, Zaman, 27.09.2008, Savaş gemisine kardeş geliyor, <http://www.haber7.com>, 31.05.2009

³⁵¹ Milli Gemi Projesi, Denizaltı Savunma Harbi ve Keşif Karakol Gemisi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Mosteşarlığı, Ekim 2007, Sayı 2, ss. 74-79

³⁵² Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 34

³⁵³ Մայն տեղում, էջ 35

**ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՌԱԶՄԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՎԱԿԱՆ ԿՈՎՎԱՍԻ ՈՒ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄՈՒՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ. ԹՈՒՐԹԱԿԱՆ
ՌԱԶՄԱԿԱՆ ՕՒՍՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ռազմատեխնիկական համագործակցությունն այլ երկրների հետ կարող ենք բաժանել 2 ստորաբաժանների. երկրներ, որոնց հետ ռազմատեխնիկական համագործակցությամբ Թուրքիան լուծում է իր բանակի սպառազինության մատակարարման ու ռազմաարդյունաբերության զարգացման խնդիրները, և երկրներ, որոնց հետ այդ երկրի ռազմական համագործակցությունը առավելապես կապվում է Թուրքիայի աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական նպատակների հետ: Առաջին խմբի երկրներն են ռազմական տեխնոլոգիաների ոլորտում առաջատար համարվող ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսրայելը, Ռուսաստանը, Կորեայի հանրապետությունը և այլն. երկրորդ խմբի երկրների շարքին են պատկանում հատկապես Հարավային Կովկասի երկու հանրապետություններն (Ալբերջան, Վրաստան) ու միջինասիական բյուրաբեկու հանրապետությունները (Ղազախստան, Ուզբեկստան, Արգենտան, Թուրքմենստան): Այս երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցությամբ Թուրքիան ինքն է մասամբ հանդիսանում որպես մատակարարող և օժանդակող:

Ալբերջան. 1990-ական թթ. սկզբին, դեռևս չունենալով ռազմական համագործակցության վերաբերյալ երկխոսման պայմանագրեր, այնուամենայնիվ՝ Լարաբադյան հակամարտության ընթացքում Թուրքիան զգալի ռազմական աջակցություն ցույց տվեց Ալբերջանին՝ փորձելով ապահովել այդ երկրի վիակատար հաղթանակը: Խախտելով միջազգային կոնվենցիաներն ու նորմերը, Թուրքիան, բեռ ոչ անմիջական, սակայն Ալբերջանին տրամադրված լայնածավալ ռազմական օժանդակությամբ, փորձում էր ազդել պատերազմի վերջնական ելքի վրա³⁵⁴: Լարաբադյան պատերազմի սկզբնական շրջանում, 1990 թ. հունվարին ռուսական լրատվական գործակալությունները տեղեկացրեցին առաջին փաստերը Թուրքիայի կողմից Նախիջևան զինատեսակների և սպառազինության փոխադրման վերաբերյալ: 1991-1992 թթ. յուրա-

կան կողմի իրականացրած գաղտնի օդային փոխադրումների արդյունքում Նախիջևան են հասցվել մի քանի հազար ինքնաձիգ, մեծ քանակությամբ զինամթերք, նոսրակենտրոն և այլն: Թուրքական ադրյուրների համաձայն՝ Թուրքիան նույնիսկ 30 մլն դոլարի չափով վարել է հասակացրել բուրբակյան տիպի զինամթերք մեքսիկոն համար³⁵⁵: Բացի այդ, Գերմանիայի վերամիավորումից անմիջապես հետո Թուրքիան Արևելյան Գերմանիայից մեքսիկոն էր բերել մեծ քանակությամբ սովետական զրահատեխնիկա և ռեթև սպառազինություն, որի մի մասը, հավանաբար, մատակարարվել է Ալբերջանին, քանի որ սովետական զենքերի արկայությունն Ալբերջանում ոչ մի կապված չէր հատույցի: Թուրքիայի կողմից Արևելյան Գերմանիայից զինատեսակների մեքսիկոն մասին 2007 թ. Գշել էր 1990-ական թթ. սկզբին Թուրքիայի ՋՈՒ ԶՆ-ի հրամանատար Գ. Գյուրեշը: Հետ մյուս՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Արևելյան Գերմանիայի ՋՈՒ ԳԵ ախտ Ֆրանցիի հետ իր պայմանավորվածության շրջանակում, մեքսիկոն էր բերվել շուրջ 100 իգ սովետական ինքնաձիգ, որոնք փոխարինել էին բուրբակյան հատուկ նշանակության ուժերի Գ-3 ինքնաձիգների³⁵⁶:

Ալբերջանի անկախացումից հետո Թուրքիայի ռազմատեխնիկական ու նյութական օժանդակությունը զգալիորեն մեծ է եղել հատկապես Նախիջևանում, ինչը հաստատել է նաև աղբյուրների ռազմական փորձագետ Ռ. Ջախարովը³⁵⁷: Միայն 2001 թ., երկու երկրների միջև ստորագրված ռազմական կրթության, տեխնիկական և զինական համագործակցության մասին պայմանագրի շրջանակում, Թուրքիայի ՋՈՒ-ը՝ Նախիջևանի 5-րդ քանակային կորպուսի հրամանատարությանն է նվիրել 80 ռազմական փոխադրամիջոց և 4 շինարարական մեքենա: Հանձնման արարողության ժամանակ Թուրքիայի ՋՈՒ-ի 1-ին մեխանիզացված հետևակային բրիգադի հրամանատար Ն. Բալբուլը խիստ կարևորեց Նախիջևանի աշխարհաքաղաքական դիրքը և դրանից ելնելով նաև մեքենայացված մարտական միավորումների անհրաժեշտությունը Նախիջևանում³⁵⁸:

³⁵⁵ Г. Демоян, 674. աշխ., էջ 107-111

³⁵⁶ Güres: Hakkari bu gün Barzani'ın oltusu, <http://www.haber7.com>, 04.11.2007. Նշենք նաև, որ քարաքայլան պատերազմի ենթյ սկզբին՝ 1991 թ. հոկտեմբերին, Գ. Գյուրեշն այսինչի է հայտնի:

³⁵⁷ Турецкие военные помоги Азербайджану организовать программу вынужденного суворовского училища в Баку в современных военных лицах НАТО.

³⁵⁸ http://www.mia-info.ru/news/full/article/120.html?no_cache=1&tsHash=52e6e62820

³⁵⁹ Turkey Donates 80 Military Vehicles to Azerbaijan.

<http://www.bycem.gov.tr/YAYINLARIMIZ/CHR/ING2001/09/01x09x17.HTM>

³⁵⁴ Լարաբադյան պատերազմի ընթացքում Ալբերջանին Թուրքիայի կողմից տրամադրված ռազմական օժանդակության մասին ազիլի մատչման մասին Գ. Демоян. Турция и Карабахский конфликт, Էր. 2006

Պաշտոնապես թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը բուռն կերպով սկսեց զարգանալ 90-ական թթ. կեսերից: Երկու երկրների միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության խնդիրները կարգավորվում են հիմնականում 1996 թ. հուլիսի 10-ին Անկարայում ստորագրված «Ռազմական կրթության, տեխնիկական և փոսական համագործակցության» մասին պայմանագրով, 2001 թ. մարտին ստորագրված «Ադրբեջանի և Թուրքիայի կառավարությունների միջև փոխադրված ռազմական օգնության» մասին համաձայնագրով և «Ադրբեջանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի ՁՌԻ գլխավոր շտաբի միջև ֆինանսական օգնության» արձանագրությանը³⁵⁹: Այդ արձանագրության շրջանակներում Թուրքիան ադրբեջանական ՁՌԻ-ի արդիականացման համար տրամադրելու էր 3 մլն դոլար: 1999 թ. հուլիսին Թուրքիան այդ երկրի ՁՌԻ-ի արդիականացման համար հատկացրել էր 3.45 մլն դոլար, իսկ 2000 թ. հուլիսին Թուրքիայի ՌՃՌԻ-ի կողմից Ադրբեջանին էր տրամադրել 1 ռազմանավ³⁶⁰:

Թուրքական կողմը բավականին մեծ ներդրում է ունեցել ադրբեջանական բանակի կայացման և ամրապնդման գործում, ինչը դրսևորվել է ինչպես զինվորական կադրերի պատրաստման, ուսուցման, այնպես էլ տարրեր տիպի սպառազինության և ռազմական տեխնիկայի և ֆինանսական օժանդակության տրամադրման ձևով: Թուրքիայի բարձրագույն ռազմական հաստատություններում, զինվորական ուսումնարաններում, տարրեր հատուկ դասընթացներում ուսումնառություն են անցել ադրբեջանական ՁՌԻ-ի 1137 ներկայացուցիչ, իսկ միայն 2006 թ. ընթացքում 121 ադրբեջանցի զինվորական շարունակել են ուսումնառության մեջ գտնվել³⁶¹:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Թուրքիայի կողմից Ադրբեջանին հատկացված ռազմական օգնությունը ընդհանուր առմամբ կազմել է ավելի քան 170 մլն դոլար³⁶², ինչն այնքան էլ իրականությունը չի համապատասխանում: Մինչև օրս Թուրքիան աջակցում է այդ երկրի ՁՌԻ-ի բարեփոխումներին, ապահովում ռազմական

խորհրդատվություն և իրականացնում ռազմատեխնիկական սարքազինության մատակարարումներ:

Արեջին տարիներին Թուրքիան փորձում է իր թույլ դերակատարությունում ունենալ Ադրբեջանի նորաստեղծ ռազմաարդյունաբերական համալիրի կայացման և զարգացման գործում: Դեռևս 1997 թ. Ադրբեջանում գործում է ASELSAN Bakı ընկերությունը, որի բանեմտեղ հանդիսանում է թուրքական ASELSAN ընկերությունը³⁶³: 1996-1997 թթ. ASELSAN ընկերությունը Ադրբեջանի բանակին տրամադրեց զորահրամանատարային կապի միջոցներ, իսկ 1998 թ. ավարտեց շուրջ 20 մլն դոլար արժողությամբ կապի միջոցների վերանորոգման համար մասնագետների վերապատրաստումը: Արդեն, ամենայն հավանականությամբ, դրանով հնարավորություն էր ընձեռվում գրեթե անողջությամբ անցնել արևմտյան տիպի կապի միջոցների և տարրեր սարքավորումների ու բաշտարմաների մատակարարման վերաբերյալ, որն անողջությամբ բանակում պետք է ներդրվեր 2009 թ.³⁶⁴:

Արեջին շրջանում ակտիվացել է հաճախակի են դարձել երկու երկրների ռազմաարդյունաբերական զերատեսչությունների միջև շփումներն ու փոխադարձ այցելությունները: Թուրքական կողմը շահավորություն է հայտնել ադրբեջանական ռազմական գերատեսչության ներակայության տակ գտնվող տանկերի վերանորոգման գործարանի արդիականացման աշխատանքների վերաբերյալ, ինչն իրականացվելու է երկու երկրների միջև ստորագրված 2 համաձայնագրերի շրջանակներում: Ռազմական արդյունաբերության ոլորտում երկուող համագործակցության մասին պայմանագիրը ստորագրվել է 2000 թ. սեպտեմբերի 20-ին Բարվում: 2001 թ. ապրիլի 28-ին Թուրքիայի ՁՌԻ ԳԿ-ի և Ադրբեջանի ՊՆ-ի միջև ստորագրվեց արձանագրություն ռազմատեխնիկական մատակարարումների վերաբերյալ³⁶⁵: Դրական իրականացման խնդիրների հետ կապված՝ ռազմական ռազմաարդյունաբերության ներկայացուցիչները հանդիպումներ են անկկացրել ադրբեջանցի գործընկերների հետ Բարվում 2008 թ. մայիսին: Լույն բվականի հուլիսին Ադրբեջան այցելեց Թուրքիայի ռազմական արդյուն-

³⁵⁹ Nazim Cafersoy, Azerbaijan - Türkiye ilişkileri (1993 - 2000), <http://www.turksam.org/tr>

³⁶⁰ Mark Eaton, Major Trends in Military Expenditure and Arms Acquisition by the States of Caspian Region, The Security of the Caspian Sea Region, ed. G. Chufin, SIPRI, Oxford University Press, 2001, p. 93

³⁶¹ Реформы в Армии-процессе договоренностей. <http://old.zerkalo.az>, 05.07.2006

³⁶² Восточная помощь. Турция Азербайджану составляет 170 миллионов долларов/ РИА-Новости, 22.07.2005

³⁶³ <http://www.haberturk.com>, 16.03.2009

³⁶⁴ Aselsan'ın 2.3 milyarlık anlaşması, *Tercüman*, 27.05.2008; Aselsan Azerbaijan'a munga teltisi satacaq, <http://www.gubuntel.ssm.gov.tr>, 27.05.2008

³⁶⁵ The Security of the Caspian Sea Region, ed. G. Chufin, SIPRI, Oxford University Press, 2001, p. 345-357

նային հրթիռների արտադրություն, որոնց ամբողջական հավաքումը կատարվելու է բուրբական գործարաններում³⁷²։

Արդրեջանի կառավարության ակտիվ քայլեր է ձեռնարկում երկրի ՋՌԻ-ի ոլորտում բարեփոխումների իրականացման ուղղությամբ, ինչը նպաստել է հետազոտում դրանք ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ՆԱՏՕ-ի չափորոշիչներին։ Արդրեջանի ռազմական բարեփոխումներն իրականացվում են Հյուսիսատլանտյան դաշինքի Անհատական Գործընկերության Գործընդունման Մրավորիչ (IPAP/ Individual Partnership Action Plan-այսուհետև՝ ԱԳ-ԳԻ) Արդրեջանի մասնակցության շրջանակներում³⁷³։ Մասամբ ավարտելով առաջին Լուսպի՝ ներկայումս ընթացքի մեջ է ԱԳ-ԳԻ երկրորդ փուլը³⁷⁴։ Նորմալ ընթացքի պայմաններում նախատեսված է արդրեջանական բանակի ամբողջական վերափոխումները ՆԱՏՕ-ի չափանիշներին ավարտելիս հասցնել 2015 թ.։ Արդրեջանական բանակի բարեփոխումների իրականացման գործում յուրը դերակատարություն է ապահովել Թուրքիան։ Արդրեջանական ՋՌԻ-ի բարեփոխումների գործընթացում բուրբական զինվորական շրջանակները անմիջական դերակատարություն ունեն արդրեջանցի զինվորների կրթության, սպառչական կազմի վերապատրաստման և բանակային կառուցվածքը ՆԱՏՕ-ի չափանիշներին վերափոխելու խնդրում։ Թուրքիայի համար արդրեջանական բանակի բարեփոխումների ծրագրերը առաջին հերթին նկուն են իր ռազմավարական շահերից ձգտելով «երազյալական երկրի» ռազմական համակարգում ապահովել իր անվտանգ ավելցուկությունը։

³⁷² Azerbaycan m silahlıların istatistika yeni dönmə, Dünya Bültəni/İşləb Mərkəzi, <http://www.dunyabulteni.net>, 25.03.2009

